ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Պարտվողական ինքնավարությունից դեպի հաղթական Քարվաճառ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» / #3 / 2022

Գեղամյան Վարուժան, Էլբակյան Էդգար,
Իգիթյան Կարեն, Մելքոնյան Սերգեյ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Պարտվողական ինքնավարությունից դեպի հաղթական Քարվաճառ

(ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

«Հայկական ուսումնասիրություններ» շարք
«Հայկական նախագիծ» գիտակրթական հասարակական կազմակերպություն

Երևան

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022

Հեղինակներ՝

Գեղամյան Վարուժան, պ.գ.թ., թյուրքագետ, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս

Էլբակյան Էդգար, քաղաքագետ, Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,

Իգիթյան Կարեն, կովկասագետ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի Մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի դասախոս

Մելքոնյան Սերգեյ, պ.գ.թ., արևելագետ, ՌԴ Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող

«Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացը. պարտվողական ինքնավարությունից դեպի հաղթական Քարվաճառ»
պատմաքաղաքագիտական քննություն / Գեղամյան Վ., Էլբակյան Է., Իգիթյան Կ., Մելքոնյան Ս., Հեղինակային հրատարակություն, 84 էջ:

Ուսումնասիրությունը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի հարցով միջազգային բանակցային գործընթացի պատմությունը՝ ցույց տալով բանակցային շարժընթացը, հիմնական հանգրվանները և հայկական կողմի դիրքորոշումների բնազարգացումը: Անդրադարձ է կատարվում նաև ԼՂ բանակցային գործընթացի տարածաշրջանային և միջազգային քաղաքական համաշարին:

Սույն զեկույցի հիմքում ընկած հետազոտությունն իրականացվել է ***«Հայկական նախագիծ»*** *գիտակրթական հասարակական կազմակերպության* ***«Հայկական ուսումնասիրություններ»*** *ծրագրի շրջանակներում՝ աշխարհասփյուռ հայության և առանձին մեկենաս-երախտավորների աջակցությամբ:*

© «Հայկական նախագիծ» գիտակրթական հասարակական կազմակերպություն, 2022

© Գեղամյան Վ., Էլբակյան Է., Իգիթյան Կ., Մելքոնյան Ս., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԵՂՄԱԳԻՐ 5

ՄԱՍ 1. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ 7

ՄԱՍ 2. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 1988-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 21

ՄԱՍ 3. ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՄԵԾ ԽԱՂԸ». ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 49

ՄԱՍ 4. ՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 67

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 79

ՍԵՂՄԱԳԻՐ

Սույն ուսումնասիրությունը քննության է առնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության և բանակցային գործընթացի պատմությունը՝ դրանք տեղավորելով տարածաշրջանային իրադրության և ընդհանուր քաղաքագիտական տեսությունների մեծ համաշարում: Ցույց է տրվում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը մասն է Հայկական լեռնաշխարհում ընդհանրական հայ-թյուրքական հակամարտության, որ սկզբնավորվել է 1000 տարի առաջ տարածաշրջանում եկվոր թյուրքական տարրի ներխուժումով: Այս համաշարում բացատրվում են ինչպես առհասարակ Արցախի պատկանելության շուրջ վեճի առաջացման պահից, այնպես էլ կոնկրետ 1988 թ.-ից Ադրբեջանի և Թուրքիայի անզիջում դիրքորոշման պատճառները: Տեսական դատողություններով դուրս է բերված այն միակ վարքագիծը, որ թշնամական միջավայրի պայմաններում կարող էր Հայաստանին ապահովել սեփական շահերի մշտական պաշտպանություն: Ըստ ժամանակագրական հերթականության՝ ներկայացված են ԼՂ բանակցային գործընթացում պաշտոնական Երևանի մոտեցումներն ու կարմիր գծերը, և թե որքանով էին դրանք համապատասխանում հայկական կողմի օպտիմալ վարքագծին: Այս մոտեցումների մանրակրկիտ դիտարկման շնորհիվ վերհանվում է այն փաստը, որ սկսած 1998 թ.-ից՝ բանակցային շարժընթացը (դինամիկա) թե՛ տարածքների, թե՛ կարգավիճակի հարցում փոխվել է հօգուտ հայկական կողմի, և գալիք հեռանկարում կար հնարավորություն հետագա բարելավման, եթե 2018 թ.-ից չփոխվեր բանակցային ողջ տրամաբանությունը և չկորսվեր նախկին բանակցային ժառանգությունը:

Արցախի Հանրապետությունը 2020թ. նոյեմբերի 10-ից առաջ և հետո



ՄԱՍ 1
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ղարաբաղյան հակամարտությունն էթնիկ հակամարտություն է, որ վերաճել է միջպետականի

Հայ-ադրբեջանական հակամարտությունն[1] էթնիկ հակամարտություն է, որ ժամանակի ընթացքում առարկայական գործոնների բերումով վերաճել է միջպետական հակամարտության: Կողմերի միջև զինված բախումներ տեղի են ունեցել դեռ նախքան անկախ պետականությունների ստեղծումը: Այսպես՝ 1905-1907 թթ. կովկասյան թաթարները (ապագա ադրբեջանցիները) հայերի դեմ կազմակերպում էին հարձակումներ և ջարդեր[2]: Հատկանշական է, որ երևույթն արձանագրվել է հայ-թաթարական խառը բնակության ամբողջ արեալում՝ Երևանից մինչև Բաքու: Հայկական գյուղերի վրա թաթարների հարձակումներ արձանագրվել են նաև ներկայիս Սյունիքի մարզի և Արցախի տարածքներում: Ինքնապաշտպանության շնորհիվ հաջողվել է խուսափել լայնամասշտաբ էթնիկ զտումից և հայկական բնակության արեալի էական փոքրացումից:

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության (1918-1920 թթ.) ստեղծումով հակամարտությունն էթնիկից անմիջապես վերածվեց միջպետականի: Զինված գործողություններ էին տեղի ունենում Նախիջևանից ու Վեդիից մինչև Զանգեզուր-Ղարաբաղ ու Բաքու: Գրեթե ամեն տեղ թաթարներին աջակցում էին կա՛մ կանոնավոր օսմանյան բանակը, կա՛մ նորաստեղծ ադրբեջանական բանակին կցված թուրք սպա խորհրդականները[3]:

Տարածաշրջանում խորհրդային կարգերի, այն է՝ կարգավորիչ երրորդ ուժի հաստատումից հետո հակամարտության ալիքը նվազեց, բայց չմարեց, քանզի լուծված չէր երկու կողմերի շահերի բախման հարցը:

1987-1990 թթ. ադրբեջանցի ազգայնականները կազմակերպում էին զինված հարձակումներ և ջարդեր ինչպես Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ), այնպես էլ Նախիջևանի, Ադրբեջանական ԽՍՀ հայաբնակ շրջանների՝ Սումգայիթի, Գանձակի (Կիրովաբադ), Բաքվի

1 Շարադրանքի հետագա ընթացքում կպարզաբանենք հակամարտության նման սահմանումը, որը հիմնականում օտար է հայկական քաղաքագիտական, պետական և հրապարակախոսական բառապաշարին, սակայն ավելի ստույգ է արտահայտում դեպքերի տրամաբանությունը:

2 Հայ-թաթարական ընդհարումների մասին ամփոփ տեղեկություններ տե՛ս Elbakyan Edgar, A New Legal Approach Towards the Nagorno-Karabakh Conflict Peaceful Resolution, International Journal of Social Sciences Vol. 3/No. 5/special issue/2014, էջք 42-44: Սկզբնաղբյուրային բնույթի տեղեկությունների համար տե՛ս Ա.-Դօ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թ.), Երևան, 1907, ինչպես նաև Villari Luigi, Fire and Sword in the Caucasus, London: T.F. Unwin, 1906:

3 İbrahim Ether Atnur, Muxtariyyat ərəfəsində Naxçıvan, «Qeyrət» nəşriyyatı, Naxçıvan, 1999, էջ 442: Տե՛ս նաև Hovannisian Richard, The Republic of Armenia, Volume II: From Versailles to London, 1919-1920, University of California Press, 1982:

հայերի դեմ: Հակամարտության աշխարհագրությունը հստակ ցույց է տալիս, որ այն չի վերաբերում միայն Լեռնային Ղարաբաղին և առնվազն ադրբեջանցիների համար ունի տոտալ, նույնն է թե՝ համատարած բնույթ[4]:

Հակամարտության աշխարհագրությունը հստակ ցույց է տալիս, որ այն չի վերաբերում միայն Լեռնային Ղարաբաղին և առնվազն ադրբեջանցիների համար ունի տոտալ, նույնն է թե՝ համատարած բնույթ:

Այսպիսով՝ արմատապես սխալ է հայ-ադրբեջանական հակամարտության տեղայնացումը միայն Լեռնային Ղարաբաղով:

Թուրքերի և կովկասյան թաթարների մեծ պայքարը տարածաշրջանի բնիկ ժողովուրդների դեմ

Կարևոր է նշել, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը մասն է ավելի մեծ դիմակայության, որը տարածաշրջանում 1000 տարի առաջ հայտնված քոչվոր թյուրքական ցեղերի կռիվն է տեղի բնիկ ժողովուրդների դեմ: Գրավելով նրանց հողերը՝ թյուրքական կողմը դրանք հռչակում էր սեփական հայրենիք: Դիմակայության նման բովանդակությունն օբյեկտիվորեն փոխզիջման որևէ տեղ չի թողնում[5]: Սա է պատճառը, որ ամենևին ոչ պատահականորեն Թուրքիան ընթացող կամ սառեցված հակամարտություններ ունի տարածաշրջանի բոլոր բնիկ կամ հնաբնակ ժողովուրդների՝ հայերի, հույների, քրդերի, վրացիների, ասորիների, արաբների, բուլղարների, մինչ այդ՝ սերբերի և այլոց հետ:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի շուրջ կովկասյան թաթարների (հետագայում՝ ադրբեջանցիների) և հայերի հակամարտությանը, ապա այն Հայկական լեռնաշխարհում արձանագրված համանման դեպքերի մեծ շղթայի մի օղակն է՝ Նախիջևանից մինչև Կարս, Իգդիրից Վան, Սասունից Գանձակ և այլն: Անշուշտ, կարելի է անջատ-անջատ դիտարկել բոլոր դեպքերը, սակայն հակամարտության բուն էությունը հասկանալու համար հարկավոր է քննության առնել դեպքերի ընդհանուր պատկերը և շարժընթացը: Այս բոլոր «ենթահակամարտությունները» հանգում են մեկ քաղաքական իմաստի՝ թյուրքական քաղաքական միավորների պայքարը՝

4 Տոտալ բնույթի հակամարտությունները բնորոշվում են շահերի հիմքային հակասությամբ և տարամիտմամբ, ինչպես նաև այդ հակադիր շահերի բազմասպարեզայնությամբ՝ տնտեսականից մինչև հոգևոր-արժեքաբանական: Որպես կանոն՝ տոտալ բնույթի հակամարտությունները չեն ունենում տեխնիկական բնույթի լուծում և ավարտվում են կողմերից մեկի՝ քաղաքական սուբյեկտայնության դադարումով, ինչպես եղավ ԱՄՆ-ԽՍՀՄ հակամարտության դեպքում, կամ ինչին ձգտում է հասնել Ադրբեջանը մեր հակամարտության պարագայում:

5 Տոտալ հակամարտության պարագայում մեկ կողմի փոխզիջումայնության անհնարինությունը լավագույնս ձևակերպել է Իսրայելի վարչապետ Գոլդա Մեյերը 1973 թ. իր մի հարցազրույցում. «... Եգիպտոսը, Սիրիան և մնացյալ արաբական երկրները հրաժարվում են համակերպվել մեր գոյության փաստի հետ: Հետևաբար՝ որևէ փոխզիջում չի կարող լինել: Նրանք ասում են, որ մենք պետք է մեռնենք: Իսկ մենք ասում ենք, որ ուզում ենք ապրել: Կյանքի և մահվան միջև ես չեմ տեսնում որևէ փոխզիջում: Այդ է պատճառը, որ մենք այլընտրանք չունենք» (Golda Meir on Compromise, Jewish Virtual Library, https://www.jewishvirtuallibrary.org/golda-meir-on-compromise (հղվել է 27.07.2022 թ.)):

դուրս մղելու բնիկ հայ բնակչությանը իր ձևավորման և բնակեցման պատմական տարածքներից, զբաղեցնելու նրանց տեղը՝ դրանով տարածաշրջանում վերացնելով մրցակից համարվող հայկական ազգային-քաղաքական սուբյեկտը: Նույն իրավիճակն է ի սկզբանե քոչվոր թուրքերի և մնացյալ բնիկ կամ հնաբնակ ժողովուրդների (հույներ, արաբներ, սլավոն ժողովուրդներ և այլն) հակամարտության պարագայում: Այս բոլոր հակամարտությունների առանձին դրսևորումներն ու դրվագներն անջատ-անջատ դիտարկելու փորձերը հանգեցնում են մեծ պատկերի աղճատմանը, թույլչեն տալիս հասկանալ ագրեսոր կողմի նպատակները և պաշտպանվող կողմի մարտահրավերները: Հատվածական դիտարկումը թույլ չի տալիս հասկանալու նաև Անկարայի և Բաքվի երկարաժամկետ նպատակներն ու կարմիր գծերը, ինչը հավելյալ խնդիր է հարուցում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրայնությունը դիտարկելիս:

Պատմության կեղծարարությունը որպես ազգի կառուցարկման և ծավալապաշտական քաղաքականության գործիք

Նվաճված տարածքների նկատմամբ սեփական իրավունքները և նոր տարածքային նվաճումները հիմնավորելու համար Թուրքիան և Ադրբեջանն զբաղվել և զբաղվում են պատմության կեղծարարությամբ: Այսպես ՝ Ադրբեջանում դեռևս խորհրդային շրջանից հայ ժողովրդի անցյալը ջնջելու փորձեր տեղ են գտել ոչ միայն գիտական շրջանակներում (գրքեր, հոդվածներ, դասագրքեր)[6], այլև տեղում՝ գետնի վրա ոչնչացվել է հայկական մշակութային ժառանգությունը[7]: Արդեն անկախ Ադրբեջանում իշխանությունները բաց ու անթաքույց կարգադրում էին խմբագրել պատմությունը[8]: Ադրբեջանում Ի. Ալիևի օրոք պետական մակարդակով հայտարարվել է, որ Հայաստանի Հանրապետությունը, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանը, հռչակվել են այսպես կոչված «պատմական ադրբեջանական հողերի» վրա: Առանձին հայերի շրջանում ևս կա տարածված մոլորություն, թե իբր Բաքվի նմանօրինակ մոտեցումը հետևանք է արդեն իսկ առկա հակամարտության, և եթե վերջինս լուծվի թուրք-ադրբեջանական տանդեմին հայկական կողմի զիջումների միջոցով, ապա հակահայկական քաղաքականությունը կդադարի[9]: Փաստերը ցույց են տալիս, որ դա ամենևին այդպես չէ: Այսպես՝

6 Խորհրդային Ադրբեջանում պատմաշինարարության գործընթացի և գլխավոր պատմակեղծարար Զիյա Բունյաթովի գործունեության մասին տե՛ս Ամստերդամի համալսարանում պաշտպանված թեկնածուական ատենախոսությունը՝ Crombach Sara, Ziia Buniiatov and the invention of an Azerbaijani past, 2019 (ձեռագրի իրավունքով):

7 Սա օրինաչափորեն տեղ է գտել բոլոր հայաթափված շրջաններում՝ Նախիջևանից մինչև ապագա Քաշաթաղի շրջան, ինչպես նաև մերձարաքսյան շրջաններ և Արցախի դաշտային՝ արևելյան հատված:

8 İlham Əliyev Milli Elmlər Akademiyasının illik ümumi yığıncağında iştirak etmişdir, 26.04.2011 թ., https://president.az/az/articles/view/2026/ (հղվել է 04.08.2022 թ.):

9 Արձանագրենք, որ սույն թեզը համընկնում է ադրբեջանական պետական քարոզչությանը:

պատմության կեղծարարության ադրբեջանական քաղաքականությունը հավասարապես և ամբողջապես վերաբերում է Թուրքիայից զատ իր բոլոր մյուս հարևաններին՝ Իրան, Ռուսաստան, Վրաստան: Պատճառն այն է, որ ադրբեջանական ինքնությունը կառուցարկված է ամբողջ տարածաշրջանի պատմության խեղաթյուրման վրա, ինչի միջոցով վերջիններս փորձում են հիմնավորել այդ երկրների հանդեպ իրենց տարածքային նկրտումները:

Առավել նկարագրական է Վրաստանի հետ հարաբերությունների օրինակը, որի հետ Ադրբեջանն անդամակցում է ՎՈՒԱՄ կառույցին[10], ունի տարբեր ասպարեզներում համագործակցության մասին բազմաթիվ պայմանագրեր: Բացի այդ՝ Վրաստանի տարածքով են անցնում ադրբեջանական նավթագազային և երկաթուղային հաղորդակցության ուղիները: Առաջին հայացքից Վրաստանի և վրացիների հետ հակամարտություն չկա, սակայն Ադրբեջանը խեղաթյուրում է նաև Վրաստանի պատմությունը: Այսպես՝ Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի խորհրդի հայտարարության մեջ ասված է, որ Արևելյան Վրաստանի տարածքն իբր պատմականորեն պատկանում է Ադրբեջանին: *«Ադրբեջանի ԳԱ Ա. Ա. Բաքիխանովի անվան պատմության ինստիտուտը պատասխանատվությամբ հայտարարում է, որ ադրբեջանցի ժողովուրդը հանդիսանում է Հարավային Կովկասի, այդ թվում՝ ժամանակակից արևելյան Վրաստանի և հարավային Վրաստանի հնագույն էթնիկ խմբերից: ...* ***Ադրբեջանցի ժողովուրդը հնագույն ադրբեջանական Աղվանական պետության պատմական ժառանգորդն է*** (ընդգծումը մերն է – խմբ.): *Աղվանական պետության տարածքը ձգվում էր մինչև Վիրքի ծայրագույն սահմանները: ... Ժամանակակից Թիֆլիսը, վերջինիս արևմտյան մասում գտնվող աղվանական սարահարթը և դրանց կից շրջանները գտնվել են ոչ թե Վիրքի սահմաններում, այլ սկյութների և սակերի իշխանության ներքո, ապա՝ Աղվանքի պետության կազմում: Արաբական զավթման ժամանակ՝ աղվանական պետության անկումից հետո, խալիֆաթը պահպանեց Աղվանքի պատմական սահմանները, և այն սկսեց կոչվել Առան: VIII դ. կեսին արաբական խալիֆայության աղվանական սահմանային Թիֆլիս քաղաքի և հարակից տարածքների (այդ թվում՝ Բորչալուի) հիման վրա կազմավորվեց թյուրքամուսուլմանական պետություն՝ Տփղիսի ամիրայությունը»*[11]:

Հարկ է ընդգծել, որ պատմության կեղծարարությունը միշտ ունի քաղաքական ենթատեքստ և նպատակներ[12]: Որևէ ժողովրդի պատմության հերքումն ու ոչնչացումը ակնհայտ են դարձնում նաև այդ ժողովրդի ապագան ոչնչացնելու քաղաքական ձգտումները:

10 ՎՈՒԱՄ-ը հետխորհրդային չորս պետությունների (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) քաղաքական միավորում է, որն ստեղծվել է 1997 թ.:

11 НАНА: Территориальные притязания к Азербайджану не имеют никакой научно-исторической основы, 19.05.2019 թ., https://report.az/ru/nauka-i-obrazovanie/nana-territorialnie-prityazaniya-k-azerbaydzhanu-ne-imeyut-nikakoy-nauchno-istoricheskoy-osnovi/ (հղվել է 04.08.2022 թ.):

12 Schieder Theodor, The Role of Historical Consciousness in Political Action, History and Theory, vol. 17, No. 4, 1978, էջ 6:

Թուրքիան է ստեղծել Ադրբեջանը և սատարել վերջինիս նույնիսկ խորհրդային տարիներին

Հարկ է նշել, որ ինքը՝ Ադրբեջանը ևս, որպես պետություն ստեղծվել է Թուրքիայի, այն է՝ վերջինիս իրավանախորդ Օսմանյան կայսրության կողմից վերջինիս երկարաժամկետ քաղաքականության կենսագործման շրջանակներում: Այսպես՝ 1918 թ. մայիսի 28-

Ադրբեջանը ևս, որպես պետություն ստեղծվել է Թուրքիայի, այն է՝ վերջինիս իրավանախորդ Օսմանյան կայսրության կողմից վերջինիս երկարաժամկետ քաղաքականության կենսագործման շրջանակներում:

ին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը հռչակվել է Թիֆլիսում: Բանն այն է, որ վերջինիս կառավարությունը փաստացի իշխանություն չուներ «իր» հանրապետության տարածքներում ընդհուպ մինչև հունիսի կեսերը: Գանձակ հասնելու հնարավորություն «ադրբեջանական կառավարությանն» ընձեռեց օսմանյան զորքը՝ Նուրի փաշայի հրամանատարությամբ: Եվ միայն 1918 թ. սեպտեմբերին՝ հանրապետության հռչակումից 3 ամիս անց, օսմանյան զորքերը գրավեցին Բաքուն, և «ԱԴՀ կառավարությունը» կարողացավ հասնել «իր» մայրաքաղաք: Գրավելով Բաքուն՝ թուրքական զորքերը և վերջիններիս աջակցող տեղական թաթարները կազմակերպեցին հայկական բնակչության կոտորած, որին զոհ գնացին ավելի քան 35000 հայեր: ԱԴՀ գոյության ամբողջ ընթացքում թուրքական սպաներն այդ երկրում գտնվում էին բարձր պաշտոնների և ուղղորդվում էին ըստ իրենց կառավարության որոշումների[13]:

Հատկանշական է, որ Թուրքիան հանդիսանում էր Ադրբեջանի յուրատեսակ հովանավորը նույնիսկ խորհրդային տարիներին: Այսպես՝ Անկարայի պնդմամբ[14] 1921 թ.-ին Մոսկվայի և Կարսի պայմանագրերում ներառվեց կետ այն մասին, որ Նախիջևանն Ադրբեջանի հովանու ներքո ձևավորում է ինքնավար տարածք՝ պայմանով, որ Ադրբեջանն այն չի զիջի երրորդ պետության: Այսպիսով՝ խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում Թուրքիան հանդիսանում էր Նախիջևանի ադրբեջանապատկանության երաշխավորը:

13 Տե՛ս տողատակ 3:

14 1921 թ. մարտ ամսի ռուս-թուրքական բանակցություններում Նախիջևանի հարցն ամենակնճռոտն էր, քանզի թուրքական պատվիրակությունն ամեն ինչ անում էր այն ձեռք գցելու համար, իսկ խորհրդային կողմը չէր ցանկանում զիջել: Իոսիֆ Ստալինի այն հարցին, թե. «Ինչո՞ւ եք Նախիջևանի հարցում այդքան համառում», թուրքական պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալն մենիմաստորեն պատասխանել էր. «Այնտեղից Թուրքիայի դուռն է բացվում» (İsmayıl Musa, Azerbaycan ve Rus kaynaklarına göre 1921 Moskova-Kars Antlaşmaları ve Kuzey Azerbaycan'ın toprak bütünlüğü meseleleri, "Belleten cilt: LXVI, Ağustos 2002, sayı: 246", 2003, էջ 517՝ հղված ըստ Էլբակյան Էդգար, Մուստաֆա Քեմալի արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը (1919-1921 թթ.), Երևան, 2013 թ. (ձեռագրի իրավունքով)):

Ադրբեջանը խորհրդային տարիներին ևս վարում էր հակահայկական քաղաքականություն

Հաշվի առնելով ամբողջ վերոգրյալը՝ պարզ է դառնում, թե Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունները ինչու էին վարում հակահայկական քաղաքականություն նույնիսկ ԽՍՀՄ գոյության շրջանում, երբ հռչակված էր «ժողովուրդների եղբայրություն»: Այդ քաղաքականությունը ուներ պատմական արմատներ և ուղղված էր Բաքվի իշխանության տակ հայտնված հայկական տարածքների հայաթափմանը, ապահայկականացմանը և թյուրքականացմանը: Թվարկենք այդ ուղղությամբ Խորհրդային Ադրբեջանի քայլերից մի քանիսը.

- Նախկին Ռուսական կայսրության Երևանի նահանգի Նախիջևանի գավառի հայ փախստականներին արդեն Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները թույլ չեն տվել վերադառնալ իրենց տները՝ դրանով իսկ կտրուկ փոխելով երկրամասի ժողովրդագրական պատկերը[15]: Եթե մինչև 1918 թ. օսմանյան զորքերի ներխուժումը հայերը կազմում էին Նախիջևանի գավառի 40%-ը, ապա 1926 թ.-ին՝ ընդամենը 10.7%-ը: Խորհրդային շրջանում ինքնավարության հայ բնակչության թվաքանակը նվազել է ուղիղ 6 անգամ՝ 11276 մարդուց (1926 թ.) մինչև 1906 մարդ (1989 թ.): Համեմատած նախահեղափոխական շրջանի հետ՝ հայ բնակչության տեսակարար կշիռը նվազել է 28 անգամ՝ 40%-ից 1.42%[16]:
- Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ստեղծման ժամանակ Բաքվի կողմից սահմանները գծվել են այնպես, որ արցախցի հայերի ⅓-ը դուրս է թողնվել մարզի սահմաններից (Շահումյանի, Դաշքեսանի, Խանլարի, Գետաբակի շրջաններ): Արդեն խորհրդային վերջին տարիներին Ադրբեջանն ամբողջությամբ հայաթափեց Հյուսիսային Արցախը՝ եթնիկ զտման ենթարկելով վերջինիս բնիկ ժողովրդին:
- Հակառակ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի 1921թ. որոշման՝ ԼՂԻՄ մայրաքաղաք է դարձվել ոչ թե Շուշին, այլ Ստեփանակերտը՝ այդպիսով խոչընդոտելով Շուշվա վերահայացումը, փոխարենը հայերին գերկենտրոնացնելով խոցելի հարթավայրային հատվածում:

15 1922-1926 թթ. Նախիջևանից փախստական հայերը բազում դիմումներ են հղել Ադրբեջանի և Նախիջևանի իշխանություններին՝ հետ վերադառնալու խնդրանքով: Սակայն 1922 թ. հունիսի 24-ին Ադրբեջանի ժողկոմխորհի նախագահը հայաստանյան պաշտոնակցին հեռագրում է, որ «Ադրբեջանի Կենտգործկոմի որոշումով արգելվում է Ադրբեջանի սահմաններում բնակչության զանգվածային բնակեցումը» (տե՛ս Нагорный Карабах, Историческая справка, ред. Г. А. Галоян, К. С. Худавердян, изд. АН Арм. ССР, Ереван, 1988, 94 էջ):

16 Այստեղ և այսուհետ ժողովրդագրական ցուցանիշները վերցված են ԽՍՀՄ տարբեր տարիների մարդահամարներից, որոնք բաց հասանելիությամբ առկա են համացանցային տիրույթում, մասնավորապես՝ http://www.demoscope.ru/ կայքում:

- Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունները զրկել են Արցախը Հայկական ԽՍՀ-ի հետ ցամաքային կապից: Այդ նպատակով 1923 թ. հուլիսի 16-ին Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) միջև ստեղծվել է Քրդստանի գավառը՝ Լաչին (ներկայումս՝ Բերձոր) կենտրոնով: 1930 թ. օգոստոսին Քրդստանի շրջանը լուծարվել է, սակայն վերջինիս տարածքները չեն վերադարձվել ԼՂԻՄ-ին, փոխարենը դարձել են ԱդրԽՍՀ առանձին վարչական միավորներ: Այդպիսով՝ Արցախը կորցրել է Հայաստանի հետ ցամաքային կապը:
- Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ԱդրԽՍՀ հայ բնակչությունը ենթարկվում էր տոկոսային առումով ավելի մեծ զորահավաքի[17], ինչը հանրապետության, առաջին հերթին՝ ԼՂԻՄ հայության դեմ ժողովրդագրական հարված էր:
- Արցախի հայ բնակչությունը նպատակաուղղված կերպով արտագնա աշխատանքի էր ուղղորդվում դեպի Բաքու և ԱդրԽՍՀ այլ խոշոր քաղաքներ, ինչը միտված էր ինքնավարության մեջ հայ բնակչության մասնաբաժնի նվազեցմանը: Փոխարենն ադրբեջանցիներն ուղղորդվում էին դեպի ԼՂԻՄ: Այս մասին խոստովանել են նաև հենց իրենք՝ ադրբեջանցի պարագլուխները: Այսպես՝ «Ձերկալո» թերթի 2002 թ. հուլիսի 24-ի թիվ 137 համարում կարդում ենք 1969-1982 թթ. ԱդրԽՍՀ ղեկավար Հեյդար Ալիևի խոսքերը. ***«Խոսելով այն շրջանի մասին, երբ ես առաջին քարտուղար էի, պետք է ասեմ, որ շատ եմ օգնել Լեռնային Ղարաբաղի զարգացմանը: Միևնույն ժամանակ ջանացել եմ փոխել այնտեղի ժողովրդագրությունը... Մարզին հարևան տեղերից այնտեղ էինք ուղղորդում ադրբեջանցիներին: Այդ և այլ միջոցներով ես ձգտում էի, որ Լեռնային Ղարաբաղում լինեն ավելի շատ ադրբեջանցիներ, իսկ հայերի թիվը կրճատվի: Ով այն ժամանակ աշխատել է Լեռնային Ղարաբաղում, գիտի այդ մասին»***: Հետագայում՝ 2021 թ. հունվարի 14-ին, հոր քաղաքականության մասին նույն խոստովանությունն արել է նաև որդին՝ Իլհամ Ալիևը. ***«Մեծ առաջնորդ Հեյդար Ալիևի շրջանում (1969-1982 թթ.) վերջինիս ջանքերի շնորհիվ և քաղաքականության արդյունքում, այդ թվում՝ Եվլախից, Աղդամից դեպի Խանքյանդի երկաթուղու անցկացումով, Լեռնային Ղարաբաղում հիմնարկների ստեղծումով և այդ հիմնարկներում Ադրբեջանի տարբեր տեղերից մասնագետների գալով, այստեղ ազգային կազմը մեծապես փոխվեց հօգուտ ադրբեջանցի ժողովրդի: Արդեն 1982 թ.-ին ադրբեջանցիները կազմում էին Լեռնային***

17 Казинян Арис, Азербайджанский «героизм». логика присвоения, № 10(169), май(16-31), 2011, https://noev-kovcheg.ru/mag/2011-10/2585.html (հղվել է 05.08.2022 թ.):

Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության 25 տոկոսը: Եթե այն ժամանակ Հեյդար Ալիևը մնար Ադրբեջանում, հաջորդ 10 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ադրբեջանցիները մեծամասնություն կկազմեին և այսպիսով՝ այնտեղ երբեք որևէ հակամարտություն, առավել ևս՝ անջատողականություն, առաջ չէր կարող գալ, գլուխ չէր կարող բարձրացնել»[18]:
Ադրբեջանական ԽՍՀ այսօրինակ քաղաքականության հետևանքով 1926-1979 թթ.-ին ԼՂԻՄ-ից արտագաղթում էր տարեկան միջին հաշվով 2000 հայ: 1926-1989 թթ. մարդահամարների տվյալներով ԼՂԻՄ հայ բնակչությունն ավելացել է ընդամենը 30.2%-ով, իսկ ԼՂԻՄ ադրբեջանական բնակչությունն աճել էր շուրջ 223%-ով: Համեմատության համար նշենք, որ համանման աշխարհագրական պայմաններ ունեցող Սյունիքի հայկական բնակչությունը (Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մեղրիի շրջաններ) նույն ժամանակաշրջանում աճել է շուրջ 120%-ով: Եթե 1926 թ.-ին հայերը կազմում էին ԼՂԻՄ բնակչության 89.1%-ը, ապա 1989 թ.-ին՝ 76.9%-ը (145450 բնակիչ): Այդ ընթացքում ադրբեջանցիների թիվն աճել է 12592 մարդուց (10%) մինչև 40688 (21.5%): 1926-1980 թթ.-ին ԼՂԻՄ-ում 85 միավորով կամ 27%-ով կրճատվել են հայաբնակ բնակավայրերը, իսկ ադրբեջանաբնակներն ավելացել են 17-ով: Ընթանում էր մարզի հայաթափում և թյուրքականացում:

- 1969 թ.-ին ԱԴՐԽՍՀ-ում Հ. Ալիևի իշխանագալությամբ մեծ թափ է ստացել ԼՂԻՄ-ում ադրբեջանական բնակավայրերի զարգացումը, ինչը հանգեցրել է ադրբեջանցիների թվի աճին: Սակայն անգամ այս պարագայում ԼՂԻՄ-ը մեկ շնչին բաժին ընկնող կապիտալ ներդրումներով զիջում էր ԱԴՐԽՍՀ միջին ցուցանիշներին շուրջ 2 անգամ (1981-1985 թթ.), իսկ 1986 թ.-ից՝ 2.7 անգամ[19]:
- Հայկական բնակչության մշտական արտահոսքը բնորոշ էր ոչ միայն ԼՂԻՄ-ին, այլև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը և մնացյալ ամբողջ ԱԴՐԽՍՀ-ին: ԱԴՐԽՍՀ ամբողջ տարածքում 1970 թ. և 1979 թ. մարդահամարների միջակայքում ընկած ժամանակահատվածում հայկական բնակչությունը, չնայած նկատելի բնական աճին, արտահոսքի պատճառով 483000-ից կրճատվել է 475000-ի: Տարեկան ԱԴՐԽՍՀ-ն լքում էր շուրջ 10000 հայ:

- Ադրբեջանում դեռ ԽՍՀՄ տարիներին կեղծում և խեղաթյուրում էին տարածաշրջանի պատմությունը, որը միաժամանակ և՛ հայերի

18 İlham Əliyev Füzuli rayonunda Füzuli-Şuşa yolunun və hava limanının təməlini qoyub, Şuşa şəhərində səfərdə olub, 14.01.2021 թ., https://president.az/az/articles/view/50184 (հղվել է 05.08.2022 թ.):

19 Մեջբերումն ըստ Золян Сурен, Нагорный Карабах: Проблема и конфликт, Ереван, “Лингва”, 2001, էջ 37:

դուրսմղման միջոց էր, և՛ ադրբեջանական ազգի կառուցարկման ու ապագայում հարևանների հանդեպ տարածքային պահանջների հայտնման գործիք[20]:

Ադրբեջանի անզիջում քաղաքականությունը

Հայկական հարցում անզիջում քաղաքականությունը բնորոշ է եղել անկախ Ադրբեջանին իր բոլոր իշխանությունների օրոք: Ադրբեջանի վարքը պայմանավորում էին այդ երկրի էլիտայի՝ **սեփական ընկալումներով** պայմանավորված մի քանի կողմնորոշիչներ.

Կողմնորոշիչ Ա – ինքնություն: Արցախը, Սյունիքը, Երևանը և Հայաստանի մնացյալ տարածքները հայկական ճանաչելու դեպքում միանգամից փուլ կգա կարևորագույն միֆերից մեկը, որի վրա կառուցված է ժամանակակից ադրբեջանցի ազգ կոչվող կոնստրուկտը: Միֆն այն մասին է, թե իբր Հայաստանը հիմնվել է պատմական ադրբեջանական տարածքների վրա: Այս միֆն Ադրբեջանի կողմից բազմիցս է հնչեցվել ամենաբարձր պետական մակարդակով: Սրանից զատ՝ թուրք-ադրբեջանական քաղաքական առասպելաբանության մեջ հայերը համարվում են «ցածրակարգ» մարդիկ: Հետևաբար՝ հայերի հետ հավասար հարաբերությունները, որպես այդպիսին՝ հայկական պետականության գոյությունն իսկ Անկարայի և Բաքվի համար անտրամաբանական են[21]: Առավելագույնը որ պատրաստ են նրանք հանդուրժել, Բաթումի կամ Ալեքսանդրապոլի պայմանագրերով ձևակերպված մի Հայաստան է՝ չնչին տարածքով, ամբողջությամբ Թուրքիայից կախված, լիովին վերահսկելի հաղորդակցության ուղիներով և ձևական բանակով[22]:

Կողմնորոշիչ Բ – ռեսուրսային առավելություն: Ադրբեջանի բնակչությունը կրկնակի գերազանցում էր Հայաստանի բնակչությանը: Ըստ ադրբեջանական պաշտոնական վիճակագրության՝ այժմ այդ տարբերությունը եռակի է՝ թեպետ հակված ենք կարծելու, որ այդ թիվն ավելի շատ ռեսուրսային առավելության թեզը հիմնավորելու քարոզչական հնարք

20 Տե՛ս Crombach S., նշվ. աշխ.:

21 Այստեղ հարկ է նշել, որ նման ռասիստական մոտեցման համար ի սկզբանե հիմք են հանդիսացել կրոնական տրամադրությունները՝ պայմանավորված հպատակ քրիստոնյաների հանդեպ տիրապետող իսլամ դասակարգի մոտեցումներով: Այնուամենայնիվ, կրոնական շերտն այսօրինակ ռասիզմի միայն նախասկզբնական հիմքն է: Բուն վերնաշենքը բաղկացած է քաղաքական բաղադրիչից, այն է՝ թուրքերի և նրանց միջոցով անուղղակիորեն՝ նաև ադրբեջանցիների կայսերական ինքնությունից և նախկին հպատակ ժողովուրդներին սեգրեգացնող պետական պահվածքից: Այսպես՝ նույնն է պարագան նաև արաբների հանդեպ թուրքերի ունեցած վերաբերմունքում՝ չնայած երկուսն էլ իսլամադավան ժողովուրդ են: Սկսած թուրքական ժողովրդական բանահյուսությունից, վերջացրած Սիրիայի և Իրաքի արաբներին տարիներ շարունակ միտումնավոր կերպով ջրից զրկելու պետական քաղաքականությունից՝ ցայտուն կերպով երևում է թուրքական ռասիստական կենսակերպի քաղաքական աստառը (տե՛ս Kalpakian Jack, Identity, Conflict and Cooperation in International River Systems, Ashgate Publishing Company, 2004, էջ 130՝ հղված ըստ Elbakyan Edgar, "The Kurdish Factor in Turkey-Syria Relations (2012-2013)", Proceedings of INTCESS14-International Conference on Education and Social Sciences, 3-5 February 2014-Istanbul, Turkey, էջ 709): Ճիշտ նույն կերպ ադրբեջանցիները հակակրանք և անտագոնիզմ ունեն նաև իրանական ժողովուրդների հետ՝ չնայած, որ բոլորն են մուսուլման են:

22 Հայաստանի հանդեպ թուրքական քաղաքական դիրքավորման մասին ավելի մանրամասն կանդրադառնանք շարադրանքի հետագա ընթացքում:

է, քան իրականություն[23]: Կապված նավթի ու գազի արդյունահանման հետ՝ Ադրբեջանի տնտեսական գերազանցությունն էլ ավելի նշանակալի է դառնում: Առավելագույն տարբեր ցուցանիշների ժամանակ Հայաստանի և Ադրբեջանի ՀՆԱ-ների հարաբերակցությունը 2014 թ.-ին 1:6.5 էր: Ադրբեջանի քաղաքական էլիտան ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի պես հիմնվում էր հենց այս հաշվարկի վրա՝ համարելով, որ միայն քանակական ցուցանիշների բերումով Հայաստանը դատապարտված է: Սակայն արդեն 2016 թ.-ին նավթի գների անկման, ադրբեջանական մանաթի արժեզրկման և հայաստանյան տնտեսության կայունության պահպանման շնորհիվ ՀՆԱ-ների տարբերությունը կրճատվեց մինչև 1:3.6: Ավելին՝ Հայաստանի այդ ժամանակվա իշխանությունները կարողանում էին չեզոքացնել Ադրբեջանի տնտեսական առավելությունը: Դիցուք՝ ռազմական ոլորտում հաջողվում էր սպառազինություն ձեռք բերել էժան գներով: Հատկանշական է նաև այն ցուցանիշը, որ 2016 թ. դրությամբ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ների տվյալներով Հայաստանն ու Ադրբեջանը գրեթե հավասարվել են: Այսպես՝ համաձայն պաշտոնական վիճակագրության՝ 2016 թ.-ին ադրբեջանական տվյալ ցուցանիշը 6223 մանաթ էր կամ 3931 դոլլար, իսկ Հայաստանում՝ 3531 դոլլար: Ավելին՝ 2016 թ.-ին հայաստանյան միջին աշխատավարձը (363 դոլլար) տեսանելիորեն գերազանցեց ադրբեջանականը (313 դոլլար)[24]:

Կողմնորոշիչ Գ – Թուրքիայի աջակցությունը: Ինչպես վերը նշվել է, Ադրբեջանը ոչ միայն ստեղծվել է Թուրքիայի կողմից, այլև աջակցություն է ստացել վերջինից նույնիսկ խորհրդային ժամանակներում: Ավելին՝ արդեն ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում, երբ Ադրբեջանը հայտարարել է բանակի ստեղծման մասին, Բաքու են ժամանել ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալը և Թուրքիայի ԳՇ պետ Դողան Գյուրեշը, որոնք օժանդակել են Ադրբեջանի ՁՈՒ կայացմանը: Արդեն 1991 թ.-ից Թուրքիան սկսել է ռազմական և քաղաքական ուղիղ աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, որը շարունակվել է ինչպես Արցախյան առաջին պատերազմի ժամանակ (1991-1994 թթ.), այնպես էլ դրանից հետո: Թուրք զինվորականները մարզում էին ադրբեջանական բանակը, Ադրբեջանի նախագահի ռազմական խորհրդականը թուրք գեներալ Յաշար Դեմիրբուլաղն էր[25] և այլն: Թուրքիան սպառնում էր Հայաստանին զինված ուժերի կիրառմամբ, ճնշում էր բանեցնում բանակցությունների ժամանակ, կիրառում միջազգային իրավունքով արգելված շրջափակում՝ որպես տնտեսական ճնշման ձև: 2010 թ.-ին Ադրբեջանը Թուրքիայի

23 Ադրբեջանի բնակչության թվակազմի մասին տե՛ս Գեղամյան Վարուժան, Էլբակյան Էդգար, Ժամանակակից Ադրբեջան (տեղեկագիրք), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019 թ., էջ 44:

24 ВВП Азербайджана в 2016г сократился почти на 4%, 18.01.2017 թ., http://interfax.az/view/693460 (հղվել է 02.09.2022 թ.):

25 Демоян Гайк, Турция и Карабахский конфликт. В конце XX – начала XXI веков. Историко-сравнительный анализ, Ереван, 2006, էջ 107:

հետ ստորագրել է ռազմական համաձայնագիր[26], իսկ արդեն Արցախյան երրորդ պատերազմում (2020 թ. սեպտեմբերի 27-2020 թ. նոյեմբերի 9) Թուրքիայի աջակցությունը բազմապատիկ անգամ ավելի նշանակալի և տեսանելի էր:

Կողմնորոշիչ Դ – իսլամական աշխարհի կարծեցյալ աջակցությունը: Ադրբեջանը մշտապես աջակցության համար դիմում էր իսլամական աշխարհին: Ճիշտ է՝ Երևանի բացատրական դիվանագիտական աշխատանքը՝ միջազգային գործընկերներին համոզելու, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը չունի կրոնական բնույթ, հաճախ տալիս էր իր արդյունքը՝ այնուամենայնիվ, երբեմն Ադրբեջանին հաջողվում էր ստանալ իսլամական աշխարհի կամ դրա առանձին հատվածների աջակցությունը: Այսպես՝ Իսլամական պետությունների կազմակերպությունը դեռ 1990-ականներին քանիցս ընդունել է ադրբեջանանպաստ բանաձևեր[27]: Սրանից զատ՝ առանձին իսլամական երկրների դեպքում հաջողվել է երկկողմ ձևաչափով ստանալ աջակցություն ԼՂ հակամարտության հարցում, ինչպես օրինակ՝ Պակիստանի դեպքում: Բացի այդ՝ Ադրբեջանի ընկալումը՝ որպես իսլամական աշխարհի մաս, դեռ ԽՍՀՄ ստեղծման առաջին տարիներից մեծացնում էր վերջինիս կշիռն անգամ այդ երկրի ղեկավարության աչքերում:

Կողմնորոշիչ Ե – բարենպաստ աշխարհագրական դիրք: Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանն ընկալվում է որպես պետություն, որ ունակ է ինչպես անցկացնել, այնպես էլ արգելափակել հյուսիս-հարավ և արևմուտք-արևելք երթուղով ընթացող հաղորդակցությունները: Թե՛ Ռուսաստանի, թե՛ Արևմուտքի համար Ադրբեջանի աշխարհագրական դիրքը ձեռք էր բերում առավել մեծ կարևորություն՝ հաշվի առնելով Ռուսաստանի շրջանցմամբ Միջին Ասիայից դեպի Եվրոպա էներգակիրների արտահանման հնարավորությունը: ԱՄՆ-ի, Բրիտանիայի և Իսրայելի համար Ադրբեջանը կարևոր շահակից և փաստացի դաշնակից է հակաիրանական ճամբարում:

Ադրբեջանն ուժով էր պատասխանում իրավական ակտերին

Վերոշարադրյալ գործոնների արդյունքում Ադրբեջանը, համարելով իրեն ուժեղ կողմ, Արցախի և Հայաստանի իրավական փաստաթղթերին արձագանքում էր միանգամից երկու մակարդակում՝ իրավական և

26 Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşmasının Onaylanmasının Uygun Bulunduğuna Dair Kanun Tasarısı ile Dışişleri Komisyonu Raporu (1/979), https://www5.tbmm.gov.tr/sirasayi/donem23/yil01/ss645.pdf (հղվել է 05.08.2022 թ.):

27 Տե՛ս Азербайджан и организация исламского сотрудничества, https://azerbaijan.az/ru/related-information/195 (հղվել է 05.08.2022 թ.):

ուժային: «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին» ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի՝ 1988 թ. փետրվարի 20-ի որոշումից անմիջապես հետո՝ փետրվարի 22-ին և 28-ին, Ադրբեջանը փորձել է Ասկերանում և Գանձակում (Կիրովաբադ) պատասխանել հայերի դեմ ջարդերով, իսկ այնուհետև՝ փետրվարի 27-29-ին արդեն Սումգայիթում իրագործել է ջարդ:

Հետաքրքրական է, որ խորհրդային մեկ հանրապետության կազմից ինքնավարության փոխանցումը մեկ այլ հանրապետության տարածք աննախադեպ երևույթ չէր ԽՍՀՄ պատմության մեջ: Այսպես օրինակ՝ Ղրիմը ՌԽՖՍՀ կազմից 1954 թ.-ին փոխանցվել էր Ուկրաինական ԽՍՀ կազմ: Մեկ այլ օրինակ Կարակալպակյան ԻԽՍՀ-ն է, որ ձևավորվել է 1924 թ.-ին ներկայիս Ղազախստանի կազմում, ապա 1930 թ.-ին ուղղակիորեն ներառվել է ՌԽՖՍՀ կազմ, իսկ արդեն 1936 թ.-ին մտցվել է Ուզբեկստանի կազմ, որտեղ մինչ օրս գտնվում է: Հյուսիսային Կովկասում և ոչ մեկ անգամ ազգային հանրապետություններին փոխանցվում էին ամբողջական շրջաններ, օրինակ՝ 1944 թ.-ին Մոզդոկի շրջանը՝ Հյուսիսային Օսիային և այլն:

Դիմելով ուժային պատասխանի՝ Ադրբեջանը չէր մոռանում նաև հարցի իրավաքաղաքական կողմի մասին: Այսպես՝ ոչ առանց Բաքվի ճնշման 1988 թ. մարտի 23-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունել է որոշում «Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանական ու Հայկական ԽՍՀ-ներում ստեղծված վիճակի առթիվ միութենական հանրապետությունների դիմումների կապակցությամբ (ձեռնարկվելիք) միջոցառումների մասին»[28]: Փաստաթուղթն ուղղված էր Արցախյան շարժման դեմ: Նույն օրը մարզի տարածք են մտցվել դեսանտային զորքեր: Իսկ արդեն 1988 թ. մարտի 24-ին Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նախագահությունն ընդունել է որոշում՝ արգելելով Արցախում գործող «Կռունկ» կազմակերպության գործունեությունը, ԼՂԻՄ տարածքում միտինգները և գործադուլները:

1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ ԳԽ և Արցախի Ազգային խորհրդի համատեղ որոշմամբ ընդունվել է որոշում վերամիավորման մասին[29]: 1989 թ. դեկտեմբերի 7-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հայտարարել է, որ Հայկական ԽՍՀ որոշումն անընդունելի միջամտություն է Ադրբեջանի ներքին գործերին: Դեկտեմբերին Բաքվով մեկ թափ առան հայերի դեմ հարձակումներն ու սպանությունները:

28 Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997 թ., էջ 54:

29 Որոշում Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, 01.12.1989 թ., N 1650-XI, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3153 (հղվել է 05.08.2022 թ.):

ԼՂԻՄ-ի 1990 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը ՀԽՍՀ ԳԽ-ն իր՝ 1990 թ. հունվարի 9-ի որոշմամբ ներառել է ՀԽՍՀ տնտեսական և սոցիալական զարգացման պետական ծրագրի մեջ[30]: Ի պատասխան սրա՝ 1990 թ. հունվարի 11-ին Ադրբեջանի ժողովրդական ճակատի զինված ջոկատները և խորհրդային ադրբեջանական միլիցիան զինտեխնիկայի աջակցությամբ հարձակվեցին Հյուսիսային Արցախի հայաբնակ գյուղերի վրա (Ազատ, Կամո, Գետաշեն, Մանաշիդ, Էրքեջ, Բուզլուխ): Իսկ արդեն մեկ օր անց՝ հունվարի 12-ին, Բաքվում սկսվեցին հայկական բնակչության զանգվածային ջարդերը:

Դրա արդյունքում՝ Բաքվի հունվարյան ջարդերից հետո Ադրբեջանական ԽՍՀ տարածքում՝ բացառյալ ԼՂԻՄ-ը, հայ չմնաց: ԼՂԻՄ բնակչության իրավական պահանջների հետագա ուժային ճնշման համար Ադրբեջանը, ի շարս արդեն իսկ գոյություն ունեցող ապօրինի զինված կազմավորումների, 1990 թ.-ին սկսել է ստեղծել պետական ռազմական կառույցներ, որոնք պետք է ապահովեին Արցախում հայերի էթնիկ զտումները: Ադրբեջանի ներքին գործերի նախարարության միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները (ՕՄՕՆ) ստեղծվել և օգտագործվում էին ԼՂԻՄ հայերի դեմ որպես հիմնական ռազմական ուժ, որ ուղիղ ենթարկվում էր Բաքվին՝ ի տարբերություն Ադրբեջանում տեղակայված խորհրդային ռազմականացված ուժային կառույցների, որոնք, թեպետ նույնպես մասնակցելեն հայաթափման գործողություններին, սակայն ուղիղ ենթարկվում էին Մոսկվային: Հենց ՕՄՕՆ-ն էր օգտագործվում Ադրբեջանի ղեկավարության կողմից ԼՂԻՄ հայ բնակչության տեղահանության ժամանակ:

Այպիսով՝ թշնամու կողմից հակամարտության ուժային լուծմանը միտված ռազմական կառույցների ստեղծումը նախորդել է անկախ հանրապետությունների ձևավորմանը: Բնական է, որ ՀՀ, ԼՂՀ և Ադրբեջանի անկախության ձեռքբերումով հակամարտությունը վերաճեց պատերազմի: Որքան մեծանում էր պետությունների ինքնիշխանությունը, այնքան ինստիտուցիոնալիզացվում էին նրանց ռազմական համակարգերը:

Այպիսով՝ թշնամու կողմից հակամարտության ուժային լուծմանը միտված ռազմական կառույցների ստեղծումը նախորդել է անկախ հանրապետությունների ձևավորմանը: Բնական է, որ ՀՀ, ԼՂՀ և Ադրբեջանի անկախության ձեռքբերումով հակամարտությունը վերաճեց պատերազմի: Որքան մեծանում էր պետությունների ինքնիշխանությունը, այնքան ինստիտուցիոնալիզացվում էին նրանց ռազմական համակարգերը:

30 Ղուլյան Աշոտ, Արցախի արտաքին շփումները ղարաբաղյան շարժման փուլում, Գիտական տեղեկագիր (1/2017), էջ 62, https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/06/Ghulyan-Ashot-Artsakhi-artaqin-shpumnery-Karabaghyan-sharzhman-pulum.pdf (հղվել է 06.08.2022 թ.):

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում կայացած ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստը, որը, հիմնվելով համաժողովրդական կամարտահայտության վրա և հիմք ընդունելով ԽՍՀՄ գործող օրենսդրությունը, ընդունել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) հռչակագիրը[31]: Ի պատասխան դրա՝ սեպտեմբերի 5-ին Ադրբեջանի նախագահը ստորագրել է հրամանագիր երկրում պաշտպանության նախարարություն ստեղծելու մասին, իսկ սեպտեմբերի 7-ին ադրբեջանական ստորաբաժանումները հարձակման են անցել Մարտակերտի շրջանի Հաթերք և Դրմբոն գյուղերի ուղղությամբ[32]:

Արցախի իշխանությունները, գործելով 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու մասին» օրենքի համաձայն, 1991 թ. դեկտեմբերի 10-ին Հանրապետությունում անցկացրել են անկախության հանրաքվե: Վերջինիս՝ որպես ժողովրդավարական սկզբունքների իրացման բարձրագույն ձևի, Ադրբեջանը պատասխանել է ռազմական գործողություններով: Փորձելով խափանել հանրաքվեն՝ Ադրբեջանը կրակի տակ էր պահում Արցախի տարածքը բոլոր հնարավոր միջոցներով: Դրա հետևանքով՝ զոհվեց 10, վիրավորվեց 11 մարդ: Այնուամենայնիվ, հանրաքվեն կայացավ, և ընտրողների 82%-ը մասնակցեց դրան, որից 99.9%-ը կողմ արտահայտվեց անկախությանը[33]:

31 Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին, http://president.nkr.am/am/nkr/nkr1 (հղվել է 06.08.2022 թ.):

32 Игитян Карен, Хроника Карабахской войны (ձեռագրի իրավունքով):

33 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեն, http://www.nkr.am/hy/independence-referendum-in-karabakh (հղվել է 05.08.2022 թ.):

ՄԱՍ 2
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱԲԱՐԱՂԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 1988-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական կողմի փոխզիջումային և Ադրբեջանի ոչ փոխզիջումային դիրքորոշումը

Առհասարակ հայկական կողմի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում ի սկզբանե եղել է փոխզիջումային: Թեև 1988 թ.-ին Լեռնային Ղարաբաղի խորհրդարանը և բնակչությունը բնական ցանկություն հայտնեցին՝ միանալու Հայաստանին՝ հետագայում, խուսափելով այսպես կոչված «էթնիկ էգոիզմից» և տարածքներն ընդլայնելու փորձ կատարելու մեղադրանքներից, հայկական կողմն առաջարկում էր ԼՂԻՄ-ն ընդգրկել ՌԽՖՍՀ կազմ: 1988 թ. հուլիսի 7-ի ԵՄ խորհրդարանի բանաձևում նշված են «հայկական պատվիրակության փոխզիջումային առաջարկները» ԼՂԻՄ-ում նախագահական կառավարում կամ ուղիղ Կենտրոնից կառավարման վարչակարգ մտցնելու և կամ առհասարակ մարզը ՌԽՖՍՀ կազմի մեջ ընդգրկելու վերաբերյալ[34]: Սա նշանակում էր հեռացում «միացման» սկզբունքներից: Մոսկվայի դե-ֆակտո ուղիղ կառավարում սահմանվել է 1989 թ. հունվարի 12-ին Արկադի Վոլսկու ղեկավարությամբ Հատուկ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) ստեղծմամբ: Սակայն Ադրբեջանն իր սկզբունքային դիրքորոշմամբ ստիպեց խորհրդային իշխանություններին վերանայել որոշումը, և հետագայում ՀԿԿ-ն լուծարվեց, իսկ դրա փոխարեն 1989 թվականի նոյեմբերի 28-ին ստեղծվեց արդեն հանրապետական Կազմկոմիտե՝ հայատյաց Վիկտոր Պոլյանիչկոյի ղեկավարությամբ:

Ելնելով այն հանգամանքից, որ փոխզիջումային դիրքորոշումն արձագանք չի ստանում, և, ըստ էության, արձագանքելով ՀԿԿ լուծարմանը և Կազմկոմիտեի ստեղծմանը՝ 1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստում, ***«հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը»***, ընդունվել է Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշումը[35]: Որոշման մեջ նշվում էր, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ***«ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի***

34 Resolution on the situation in Soviet Armenia, Joint resolution replacing Docs. B2-538 and 587/88, 07.07.1998 թ., Official Journal of the European Communities C 235, v. 31, 12.9.1998 թ., https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:1988:235:FULL&from=SV (հղվել է 05.08.2022 թ.):

35 Որոշում Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին...:

12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում»: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Հայոց համազգային շարժման կողմից սա ռեակտիվ որոշում էր՝ ի պատասխան Հատուկ կառավարման կոմիտեի վերացման, և որ իրականում միացման թեման, որի շնորհիվ հաջողվել էր ապահովել ժողովրդական լայն զանգվածների մոբիլիզացիան և շարժման լեգիտիմությունը, արդեն դուրս էր այդ շարժման օրակարգից:

ԼՂՀ անկախությունը՝ ևս մեկ փոխզիջում

Հարկ է նշել, որ Հայաստանի հետ Արցախի վերամիավորման հայկական քաղաքականության վերափոխումն անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծմանն ինքնին արդեն իսկ մեծ

> **Հայաստանի հետ Արցախի վերամիավորման հայկական քաղաքականության վերափոխումն անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծմանն ինքնին արդեն իսկ մեծ զիջում էր հայկական կողմից:**

զիջում էր հայկական կողմից, քանի որ համաձայն ներքին իրավական ակտերի՝ Արցախը 1989 թ. դեկտեմբերի 1-ից արդեն Հայաստանի մաս էր: Այս փաստաթղթին հղում կա նաև Հայաստանի անկախության հռչակագրում: Սակայն հակված լինելով փոխզիջումային գծին՝ հայկական կողմը գնացել է անկախ Լեռնային Ղարաբաղի ստեղծման ճանապարհով: Բաքվի կողմից ԼՂՀ անկախությունը ճանաչելու դեպքում հնարավոր կլիներ ձևավորել իշխանության պետական մարմիններ, որոնք հաշվի կառնեին արցախաբնակ ադրբեջանցիների շահերը: Եթե տվյալ մոդելն իրացվեր, ապա Լեռնային Ղարաբաղը կարող էր դառնալ կիպրոսյան մոդելով երկհամայնքային պետություն[36]: Ամեն դեպքում Ադրբեջանը համաձայն չէր նաև այդ փոխզիջումային տարբերակին: Հետագայում այն ստեղծեց «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք», սակայն ոչ թե հակամարտության փոխզիջումային կարգավորման, այլ բանակցային սեղանին միջնորդների և հայկական կողմի վրա հավելյալ փաստարկային ճնշման գործիքակազմ ունենալու համար:

36 Այնուամենայնիվ, այստեղ ևս միջանկյալ կերպով արձանագրենք, որ կիպրոսյան հակամարտությունը ցույց է տալիս, որ այդ մոդելի կիրարկումը ևս ավարտվել է թուրքական զորքերի ներխուժմամբ և կղզու հյուսիսի օկուպացմամբ:

Ժելեզնովոդսկի կոմյունիկեն՝ ևս մեկ զիջում Հայաստանի կողմից

1991 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի, Ռուսաստանի ու Ղազախստանի նախագահներ Բորիս Ելցինի ու Նուրսուլթան Նազարբաևի հետ ստորագրել է այսպես կոչված «Ժելեզնովոդսկի կոմյունիկեն»: Հատկանշական է, որ թեև 1991 թ. սեպտեմբերի 2-ին արդեն հռչակվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ներառյալ նաև Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը)՝ կոմյունիկեի տեքստում հիշատակվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, այսինքն՝ պետական կազմավորում շատ ավելի ցածր և արդեն նախկին կարգավիճակով: Տեքստում նաև ասվում է, որ. ***«Սույն կոմյունիկեում ընդգրկված դրույթները չեն կարող դիտվել որպես միջնորդների իրավունք՝ միջամտելու սուվերեն պետություններ Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերին»***[37]: Սրան գումարելով տեքստում «ԼՂԻՄ» եզրույթի գործածումը՝ կարող ենք եզրակացնել, որ ղարաբաղյան հարցը դիտվել է որպես Ադրբեջանի ներքին հարց: Եվ այստեղ ևս դրսևորվում է հայկական կողմի զիջողականությունը, քանզի Լ. Տեր-Պետրոսյանը ստորագրել է այդ փաստաթուղթը: Եվս մեկ լուրջ զիջում էր «ԼՂԻՄ-ի վերաբերյալ Ադրբեջանի և Հայաստանի՝ առ 1992 թ. հունվարի 1-ը բոլոր ոչ սահմանադրական ակտերի չեղարկման» մասին կետը: Ըստ էության՝ դրանով խաչ էր քաշվում հենց ՀՀՇ առաջատարությամբ 1989 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված վերամիավորման որոշման վրա, քանի որ 1990 թ. հունվարի 10-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունել էր «1989 թ. դեկտեմբերի 1-ին և 1990 թվականի հունվարի 9-ին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ակտերի՝ ԽՍՀՄ Սահմանադրությանն անհամապատասխանության մասին» որոշում[38], որտեղ նշված էր, որ տվյալ որոշումը հանդիսանում է ԽՍՀՄ սահմանադրության 2-րդ, 78-րդ, 86-րդ, 87-րդ և 145-րդ հոդվածների խախտում:

Արցախի ներկայացուցիչները չեն ստորագրել Ժելեզնովոդսկի կոմյունիկեն, ինչը նույնպես զիջում էր հայկական կողմից: Կոմյունիկեի ստորագրումից մեկ ամիս անց՝ 1991 թ. նոյեմբերի 26-ին, Ադրբեջանն ընդունել է ԼՂԻՄ վերացման մասին ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող իրավական ակտ[39]:

37 Совместное коммюнике об итогах посреднической миссии президентов Б.Ельцина и Н.Назарбаева, 23.09.1991 թ., https://www.interfax.ru/30years/789609#comment790284 (հղվել է 05.08.2022 թ.):

38 Постановление от 10 января 1990 г. N 1050-1 О несоответствии Конституции СССР актов по Нагорному Карабаху, принятых верховным советом Армянской ССР 1 декабря 1989 года и 9 января 1990 года, https://lawrussia.ru/texts/legal_346/doc346a546x233.htm (հղվել է 05.08.2022 թ.):

39 Azərbaycan Respublikasının Dağlıq Qarabağ Muxtar Vilayətini ləğv etmək haqqında Azərbaycan Respublikasının qanunu, № 279-XII, 26.11.1991 թ., https://e-qanun.az/framework/6783 (հղվել է 05.08.2022 թ.):

Արցախը որպես ինքնավարություն և Ադրբեջանի ներքին հարց ճանաչելը՝ ևս մեկ զիջում Երևանի կողմից

Լ. Տեր-Պետրոսյանը 1992 թ. փետրվարին ԱՄՆ Պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղի հարցն Ադրբեջանի ներքին հարցն է[40]: Բացի այդ՝ 1992 թ. մարտի 5-ին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին տված հարցազրույցում Լ. Տեր-Պետրոսյանն առհասարակ բառացիորեն առաջարկել է հետևյալը. ***«Եթե լինի այնպիսի ինքնավարություն, որտեղ ներքին խնդիրները, այդ թվում՝ կադրային, կլուծվեն տեղական իշխանությունների կողմից, ապա կողմերը կարող են գալ համաձայնության: Կարծում եմ՝ Ադրբեջանի կազմում ինքնավարության կարգավիճակը լիովին կբավարարի բոլոր կողմերին, քանզի Ղարաբաղը կմնա Ադրբեջանի կազմում, կպահպանվի վերջինիս տարածքային ամբողջականությունը, իսկ ղարաբաղցիները կունենան երաշխավորված կենսագործունեություն: Սա՛ է մեր դիրքորոշումը»***: Այստեղ արձանագրենք, որ միջնորդների կողմից նման մի բան հետագայում՝ 1997 թ.-ին, առաջարկվել է հենց նույն Լ. Տեր-Պետրոսյանին:

Բանակցային գործընթացի բովանդակության և ձևաչափի փոփոխություն

1992 թ.-ին ԵԱՀԽ Մինսկի խմբի ստեղծմամբ Արցախն արդեն ներգրավված էր բանակցային գործընթացում: Այսպես՝ 1992 թ. մարտի 24-ին Հելսինկիում արտաքին գործերի նախարարների մակարդակով ԵԱՀԽ Խորհրդի առաջին լրացուցիչ հանդիպմանը կայացվել է որոշում ԵԱՀԽ հովանու ներքո 11 պետությունների (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ֆրանսիա, Չեխոսլովակիա և Շվեդիա), ինչպես նաև «որպես շահագրգիռ կողմ՝ Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչների» մասնակցությամբ Մինսկում համաժողով գումարելու մասին:

Փետրվարի 28-ին ԵԱՀԽ ավագ պաշտոնյաների կոմիտեն (ԱՊԿ) որոշում է ընդունել, որի կարևորագույն բաղկացուցիչներից էին կրակի դադարեցումը, մարդասիրական միջանցքների ստեղծումը և հակամարտության գոտի սպառազինության մատակարարման բեռնարգելքը[41]: Սակայն Ադրբեջանն անտեսել է բոլոր երեք կետերը, ինչը տանում էր ռազմական գործողությունների հետագա ակտիվացման:

40 Սարգսյան Սուրեն, Հայաստանն ու Բուշն անձամբ (1988-1992). հայ-ամերիկյան շփումների գաղտնազերծված մանրամասներ, Երևան, 2022 թ., էջք 204-205:

41 ԵԱՀԿ Մինսկի գործընթացը, http://www.nkr.am/hy/osce-minsk-process (հղվել է 06.08.2022 թ.):

1992 թ. մայիսին ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերն ազատագրել են Շուշին և բացել դեպի ՀՀ տանող Լաչինի մարդասիրական միջանցքը: Ադրբեջանը կրկին անգիջում կեցվածք է դրսևորել՝ հայտարարելով, որ եթե չվերականգնվի 1992 թ. ապրիլի դրությամբ գոյություն ունեցած ստատուս-քվոն, Մինսկի կոնֆերանսի անցկացումն անհնարին կդառնա[42]:

Պատերազմի ընթացքում Արցախի (ԼՂՀ)՝ որպես հակամարտության և բանակցային կողմի կարգավիճակը, աստիճանաբար ամրապնդվում էր: Առաջին հերթին պատճառն այն էր, որ իրական ռազմական գործողությունները ՀՀ աջակցությամբ վարում էին հենց արցախաբնակ հայերը: Երկրորդ պատճառն այն էր, որ ԼՂՀ քաղաքական ղեկավարությունը ոչ միշտ էր ընդունում կատարել այն պայմանները, որոնց համաձայն էր Լ. Տեր-Պետրոսյանը: Օրինակ՝ 1993 թ. հունիսին ԼՂՀ ղեկավարությունը փաստացի սաբոտաժի է ենթարկել ազատագրված Քարվաճառի շրջանն Ադրբեջանին հանձնելու Լ. Տեր-Պետրոսյանի պարտադրանքը[43]: Այդ էր պատճառը, որ երբ Ադրբեջանը ցանկանում էր իրապես հասնել որևէ բանի, ապա ստիպված էր համաձայնել ուղիղ բանակցելու ԼՂՀ ռազմաքաղաքական ղեկավարության հետ: Այսպես՝ պատերազմի

1993 թ. հունիսին ԼՂՀ ղեկավարությունը փաստացի սաբոտաժի է ենթարկել ազատագրված Քարվաճառի շրջանն Ադրբեջանին հանձնելու Լ. Տեր-Պետրոսյանի պարտադրանքը: Այդ էր պատճառը, որ երբ Ադրբեջանը ցանկանում էր իրապես հասնել որևէ բանի, ապա ստիպված էր համաձայնել ուղիղ բանակցելու ԼՂՀ ռազմաքաղաքական ղեկավարության հետ:

ընթացքում Ադրբեջանի և Արցախի միջև ձեռք են բերվել մոտ մեկ տասնյակ երկկողմ պայմանավորվածություններ ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ: Բազմիցս անցկացվել են Ադրբեջանի և ԼՂՀ ղեկավարության ուղիղ հանդիպումներ: Օրինակ՝ 1993 թ. հուլիսի 28-ին Մարտակերտի շրջանում՝ Շորբուլաղ տեղամասում, կայացել է ԼՂՀ և Ադրբեջանի պաշտոնատար անձանց հանդիպումը: ԼՂՀ-ից այդ հանդիպմանը մասնակցում էին ՊՊԿ անդամ, Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը, արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը, Ազգային անվտանգության գլխավոր վարչության նախագահ Կամո Աբրահամյանը, ներքին գործերի նախարարի տեղակալ Ալեքսանդր Աղասարյանը և որպես քարտուղար՝ Արսեն Մելիք-Շահնազարովը: Ադրբեջանական պատվիրակությունը ղեկավարում

42 Նույն տեղում:

43 Այս մասին դեպքերի մասնակիցների ու ականատեսների պատմածների հիման վրա տե՛ս Էլբակյան Էդգար, «Պատմության առջև» փաստավավերագրական ֆիլմ, 02.09.2020 թ., 5 TV Channel, https://www.youtube.com/watch?v=TYXaUHgbrTY&t=4265s (հղվել է 05.08.2022 թ.):

էր պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սաֆար Աբիևը, պատվիրակության կազմում էին պետական նախարար Ի. Ալիևը, ԱԳՆ ներկայացուցիչ Թոֆիկ Զուլֆուղարովը[44]:

1993 թ. սեպտեմբերի 25-ին ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանը Մոսկվայում հանդիպում է ունեցել Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Հ. Ալիևի հետ, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն բարձր մակարդակով շփումները շարունակելու մասին[45]:

Բանակցություններն անցկացվում էին ոչ միայն ԵԱԽՀ ձևաչափով, այլև ԱՊՀ ձևաչափով և առանձին Ռուսաստանի միջնորդությամբ (այստեղ նույնպես կար բաժանում երկու մակարդակի՝ ՌԴ պաշտպանության նախարարության և ԱԳՆ): Կարևորագույն փաստաթուղթը, որը ստորագրվել է հակամարտության երեք կողմերի միջև, 1994 թ. մայիսին կրակի դադարեցման համաձայնագիրն էր: Փաստաթղթի տակ դրված են Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարներ Ս. Սարգսյանի և Մամադռաֆի Մամադովի և ԼՂՀ ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանի ստորագրությունները:

Ինչպես արդեն նշվել է, Ադրբեջանը համաձայնում էր ԼՂՀ հետ ուղիղ շփումներ և բանակցություններ ունենալ՝ ելնելով ռազմական անհրաժեշտությունից: Պարտությունները սահմանափակում էին բանակցություններում Ադրբեջանի անզիջումայնությունը, սակայն կրակի դադարեցման մասին համաձայնագրի կնքումից անմիջապես հետո Ադրբեջանը վերսկսել է բանակցություններում ԼՂՀ մասնակցության անընդունելիության շեշտադրման իր քաղաքականությունը:

Առհասարակ Ադրբեջանը համառորեն պաշտպանում էր իր դիրքերը: Հատկանշական է, որ անգամ 1996 թ. ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթնաժողովի փաստաթուղթը, որտեղ Լեռնային Ղարաբաղին տրվում էր Ադրբեջանի կազմում բարձր աստիճանի ինքնավարություն, անընդունելի էր Բաքվի համար: *«Լիսաբոնի գագաթնաժողովին, կարելի է ասել, մենք հասել ենք լուրջ առաջխաղացման: Հայտնի է, թե ինչպիսի: Առաջին անգամ գրվել է՝*

« Անգամ 1996 թ. ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթնաժողովի փաստաթուղթը, որտեղ Լեռնային Ղարաբաղին տրվում էր Ադրբեջանի կազմում բարձր աստիճանի ինքնավարություն, անընդունելի էր Բաքվի համար:

44 Արցախ-Ադրբեջան երկկողմ բանակցություններ. 1993 թ. հուլիսի 28-ի զինադադարի համաձայնագիրը, 29.07.2019 թ., https://armenpress.am/arm/news/983145/D5BFD5A5D5BDD5A1D5B6D5B5D5B8D682D5A9 (հղվել է 05.08.2022 թ.):

45 Кочарян Роберт, Жизнь и свобода: автобиография экс-президента Армении и Карабаха, “Альпина Диджитал”, 2019, էջք 107-109:

ճանաչել Ադրբեջանի և Հայաստանի տարածքային ամբողջականությունը, Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավարության բարձր կարգավիճակ Ադրբեջանի կազմում և ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը՝ և՛ հայկական, և՛ ադրբեջանական։ ... Ես պետք է այս ամենը բաց ասեմ ձեզ։ Դա մեզ համար այնքան էլ ընդունելի չէր, բայց մենք ցանկանում էինք գոնե մի փոքր առաջ գնալ», - ավելի ուշ խոստովանել է 1993-2003 թթ. Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը[46]: Այն մասին, թե ինչպես էր Ադրբեջանն առաջ տանում իր օրակարգը, Հ. Ալիևը նույնպես պատմել է: *«Ես չտվեցի իմ համաձայնությունը Լիսաբոնի գագաթնաժողովի բոլոր որոշումներին։ Այսպիսով՝ եթե մի երկիրը չի համաձայնում որոշման հետ, Լիսաբոնի գագաթնաժողովը չի կարող այն ընդունել։ Ինչո՞ւ ես դա արեցի։ Որպեսզի ստիպեմ գագաթնաժողովի մասնակից պետություններին որևէ վերաբերմունք դրսևորել Ադրբեջանի նկատմամբ։ Դրանից հետո ընդունվեց հայտնի հայտարարությունը»[47]։*

Ընդգծենք, որ կողմերից յուրաքանչյուրի քաղաքական արդյունքներն այդ կողմի ջանքերի հետևանք էին ինչպես ռազմի դաշտում, այնպես էլ դիվանագիտության մեջ: Իմանալով Լ. Տեր-Պետրոսյանի վարչակարգի կարմիր գծերը՝ ինքնավարություն Ադրբեջանի Հանրապետության կազմում, Ադրբեջանի իշխանությունները ճնշում էին գործադրում ընդհուպ մինչև այդ գծից անդին: Նման առավելապաշտությունը բացատրվում է

Իմանալով Լ. Տեր-Պետրոսյանի վարչակարգի կարմիր գծերը՝ ինքնավարություն Ադրբեջանի Հանրապետության կազմում, Ադրբեջանի իշխանությունները ճնշում էին գործադրում ընդհուպ մինչև այդ գծից անդին:

նրանով, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը Բաքվի համար անընդունելի էր, ինչպես և բուն հայ բնակչության ներկայությունը՝ որևէ արձանագրված իրավունքներով:

1997 թ. հուլիսին ԵԱՀԿ Մինսկի խումբը կողմերին առաջարկել է «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր», այսպես կոչված՝ «փաթեթային տարբերակը», որտեղ նշված էր 1988 թ. սահմաններով Լեռնային Ղարաբաղի ինքնավարության մասին (*«ԼՂ-ն պետական և տարածքային կազմավորում է Ադրբեջանի կազմում»*)[48]: Ինքնավարությունում տիրապետելու էին տեղական

46 Речь Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на заседании Милли меджлиса 23 февраля - 23 февраля 2001 года, https://lib.aliyev-heritage.org/ru/6753023.html (հղվել է 05.08.2022 թ.):

47 Նույն տեղում:

48 Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ), 1997 թ. հուլիս (ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերեն բնօրինակից), https://docs.rferl.org/Infographics/2019/2019_04/2019_04_Armenian_Timeline/images/PDF/Package_solution1997.pdf (հղվել է 06.08.2022 թ.):

օրենքները: Համաձայն այդ փաստաթղթի՝ հայկական կողմն Ադրբեջանին էր հանձնում բոլոր 7 շրջանները, Ադրբեջանը Լաչինի միջանցքը վարձակալությամբ հանձնում էր ԵԱՀԿ-ին, որը պայմանագիր էր կնքելու, համաձայն որի՝ միջանցքից օգտվելու էին բացառապես Լեռնային Ղարաբաղի իշխանությունները: Խաղաղապահների կոնտինգենտը բաղկացած էր լինելու ԵԱՀԿ բազմազգ ուժերից: Նշվում էր, որ բոլոր մարդիկ կարող էին վերադառնալ նախկին բնակության վայրեր (այսինքն՝ հայերը՝ Շահումյան, ադրբեջանցիները՝ Շուշի), իսկ Ադրբեջանի սահմանադրությունը և օրենքները գործելու էին Լեռնային Ղարաբաղի տարածքում, եթե դրանք չէին հակասում վերջինիս սեփական սահմանադրությանն ու օրենքներին: Լեռնային Ղարաբաղն ունենալու էր ազգային գվարդիա և ոստիկանություն, իսկ Ադրբեջանի ուժային կառույցները կարող էին ոտք դնել ԼՂ տարածք միայն Ստեփանակերտի թույլտվությամբ: Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներն ունենալու էին ադրբեջանական անձնագրեր՝ «Լեռնային Ղարաբաղ» հատուկ նշումով:

ԼՂՀ-ը մերժել է այս առաջարկը: Ադրբեջանն այն ընդունել է, սակայն ինչպես հետագայում հայտարարել է Հ. Ալիևը, այն ևս ընդունելի չէր Բաքվի համար, և զուտ «առաջ շարժվելու» հնարավորություն էր: ***««Փաթեթային լուծում» անվամբ առաջին առաջարկությունը ներկայացվել է 1997 թ. հուլիսին: Դուք կարող եք հարցնել, ինչու եմ այն ընդունել: Մենք ընդունել ենք այն մտքով, որ հասկանանք՝ կարող ենք դրանով առաջ շարժվել, թե ոչ»***,- խոստովանել է Հ. Ալիևը[49]:

ԵԱՀԿ Մինսկի խմբի հաջորդ առաջարկությունը եղել է 1997 թ. դեկտեմբերի 2-ին և կոչվում էր «փուլային տարբերակ»[50]: Այն ևս ենթադրում էր 7 շրջանների հանձնում Ադրբեջանին, Լեռնային Ղարաբաղի տարածքը որոշվում էր ԼՂԻՄ սահմաններով, որոնց շուրջ պետք է ձևավորվեր ապաբնակեցված և ապառազմականացված բուֆերային գոտի՝ չհաշված ԵԱՀԿ բազմազգ ուժերին: Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից վերահսկվող տարածքների (ներառյալ՝ Լաչինի միջանցքի) անվտանգությունն ապահովելու էին հենց ԼՂ ռազմական կառույցները: Կարգավիճակի որոշման հարցը հետաձգվում էր: Փաստաթղթում խոսք չկար այն սկզբունքների և մեթոդների մասին, համաձայն որոնց՝ որոշվելու էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Նշված էր միայն, որ խաղաղության պահպանմանն ուղղված բազմազգ գործողության տևողությունը նվազ անհրաժեշտ կլինի՝ կախված տարածաշրջանային իրադրությունից և հակամարտության համապարփակ կարգավորման տեմպերից: ***«Ներկայացվեց երկրորդ առաջարկը՝ «փուլային տարբերակը»:***

49 Речь Президента Азербайджанской Республики...:

50 Փուլային տարբերակ. Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության դադարեցման համաձայնագիր (նախագիծ), 02.12.1997 թ., https://theanalyticon.com/новости-hy/փուլային-տարբերակ-լեռնային-ղարաբաղի/ (հղվել է 06.08.2022 թ.):

Մենք նույնպես այն ընդունեցինք, բայց ոչ այն պատճառով, որ այն ընդունելի էր մեզ համար: Ճիշտ է, որ այն ավելի ընդունելի էր, քան նախորդը: Վիլայաթ Ղուլիևը խոսել է այդ մասին: Պարզապես մենք ցանկանում էինք, որ փոքրիկ տեղաշարժ լինի»,- նշել է Հ. Ալիևը[51]:

Լ. Տեր-Պետրոսյանը սկզբունքորեն համաձայն էր Մինսկի խմբի առաջարկներին: Դեռ նախքան «փուլային տարբերակի» ներկայացումը՝ 1997 թ. սեպտեմբերի 26-ին, նա հրավիրել է մամուլի ասուլիս, իսկ նոյեմբերի 1-ին գրել «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը, որտեղ փորձում էր հիմնավորել հայկական կողմի զիջումների, այդ թվում՝ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակի ընդունման անհրաժեշտությունը:

Լ. Տեր-Պետրոսյանի այսպիսի քաղաքականությունը հանգեցրեց ներհայաստանյան քաղաքական ճգնաժամի: Երկրի ռազմաքաղաքական վերնախավը չընդունեց նախագահի զիջողականությունը: Զրկվելով առանցքային դեմքերի՝ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի, վարչապետ Ռ. Քոչարյանի ու ներքին գործերի և ազգային անվտանգության նախարար Ս. Սարգսյանի աջակցությունից՝ Լ. Տեր-Պետրոսյանը, ում լեգիտիմությունը 1996 թ. ընտրություններից հետո խիստ կասկածելի էր և գերազանցապես հենվում էր քաղաքական այս «մեծ եռյակի» վրա, հրաժարական տվեց:

Լ. Տեր-Պետրոսյանի, Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի մոտեցումների տարբերությունը

Առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և նախագահներ Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հար-ցում մոտեցումների տարբերությունը շատ պարզ է և հասկանալի: Լ. Տեր-Պետրոսյանը համաձայն էր ընդունել Արցախը որպես Ադրբեջանի կազմում ինքնավարություն, իսկ Ռ. Քոչարյանն ու Ս. Սարգսյանը՝ ոչ: Այս առումով Լ. Տեր-Պետրոսյանի մեղադրանքը Ռ.

Առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և նախագահներ Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում մոտեցումների տարբերությունը շատ պարզ է և հասկանալի: Լ. Տեր-Պետրոսյանը համաձայն էր ընդունել Արցախը որպես Ադրբեջանի կազմում ինքնավարություն, իսկ Ռ. Քոչարյանն ու Ս. Սարգսյանը՝ ոչ:

51 Նույն տեղում:

Քոչարյանի ու Ս. Սարգսյանի հասցեին, թե իբր վերջիններս «պատերազմի կուսակցություն» են, ոչ այլ ինչ է, քան պարտված քաղաքական կողմից կիրառված պիտակավորում: Հատկանշական է, որ այս պիտակավորումը հերքված է պատմությամբ, քանզի «պատերազմի կուսակցության» օրոք մեծ պատերազմներ չեն եղել: Իսկ քիչ թե շատ մասշտաբային Արցախյան երկրորդ (Ապրիլյան) պատերազմը, ընդհակառակը, ևս մեկ անգամ հերքել է առաջին նախագահի փաստարկներն այն մասին, որ Ադրբեջանը ջախջախիչ առավելություն կգեներացնի ռազմական ասպարեզում:

Տեղին է նշել, որ Լ. Տեր-Պետրոսյանի մոտեցման կողմնակիցներն վերջին շրջանում կիրառում են «ստատուս-քվոյի կուսակցություն» պիտակավորումը: Սանույնպես ոչ պակաս անհիմն կաղապար-մեղադրանք է, քանզի դատելով թե՛ երկրորդ, թե՛ երրորդ նախագահների մոտեցումների ուսումնասիրությունից, կարելի է ասել, որ վերջիններս իրապես փորձել են ըստ իրենց վճռահատական պատկերացումների ու պետական ռեսուրսապահովվածության՝ կարգավորել հակամարտությունը: Ե՛վ Ռ. Քոչարյանը, և՛ Ս. Սարգսյանը պատրաստ էին Ադրբեջանին զիջել առաջին պատերազմի ժամանակ այդ թվում հրենց ղեկավարությամբ ազատագրված որոշ տարածքներ՝ Արցախի՝ Ադրբեջանից անկախ կարգավիճակի դիմաց: Նրանք հնչեցրել են այս տեսակետն ինչպես արտերկրում, այնպես էլ՝ երկրի ներսում՝ արժանանալով հակամարտության հայանպաստ լուծման և/կամ կարգավորման այլ պատկերացում ունեցող, այդ թվում՝ երկարաժամկետ հեռանկարի առումով տարածքային ցանկացած զիջում վնասաբեր համարող շրջանակների սուր քննադատությանը: Սակայն այստեղ կարևոր է արձանագրել, որ Ադրբեջանի դիրքորոշումը փոխզիջման տեղ չէր թողնում, քանզի Բաքուն պնդում էր, որ ամբողջ Արցախը պետք է լինի իր կազմում: Այս է պատճառը, որ բոլոր բանակցությունները դատապարտվում

Ադրբեջանի դիրքորոշումը փոխզիջման տեղ չէր թողնում, քանզի Բաքուն պնդում էր, որ ամբողջ Արցախը պետք է լինի իր կազմում: Այս է պատճառը, որ բոլոր բանակցությունները դատապարտվում էին անհաջողության, իսկ երբ թվում էր, թե մոտ է համաձայնությունը, Բաքուն առաջ էր քաշում նոր պահանջներ, ինչպես օրինակ՝ 2011 թ. Կազանում:

էին անհաջողության, իսկ երբ թվում էր, թե մոտ է համաձայնությունը, Բաքուն առաջ էր քաշում նոր պահանջներ, ինչպես օրինակ՝ 2011 թ. Կազանում[52]:

52 Թորոսյան Տիգրան, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, Երևան, 2020 թ., էջ 12, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573%D4%BC%D5%82%D4%B3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81.pdf (հղվել է 05.08.2022 թ.):

Ինչպես վերը նշվեց, նույնիսկ 1997 թ. հուլիսյան առաջարկները, որոնցով Լեռնային Ղարաբաղն ինքնավարության կարգավիճակ էր ստանում Ադրբեջանի կազմում, իսկ Ադրբեջանը պահպանում էր խորհրդային ժամանակների սահմանները, ընդունելի չէին Բաքվի համար: Ինչպես հետագայում հայտարարել է Հ. Ալիևը, առաջարկներն ընդունելի չէին, ***«բայց թույլ էին տալիս շարժվել առաջ»***, այսինքն՝ առաջին փուլում ստանալով զիջում՝ «սայլամիի մարտավարությամբ» մինչև վերջ հասնել սեփական ուզածին՝ ի հաշիվ բուն հայկական շահերի:

Պարզ է, որ չնայած միջնորդների երաշխիքներին՝ Ադրբեջանի երկարաժամկետ քաղաքականությունը ցանկացած դեպքում ուղղված էր Արցախի հայության էթնիկ զտմանը: Կարելի է ասել, որ Ադրբեջանում տիրապետող էր «Ժամանակն աշխատում է մեր օգտին» մոտեցումը՝ ըստ այդմ ձգձգելով բանակցությունները, մինչև որ չստեղծվեին անհրաժեշտ պայմաններ սահմանված նպատակին հասնելու համար: Սակայն քանի դեռ Հայաստանում իշխանության էին պատերազմի ղեկավարման բովով անցած փորձառու անձինք, վերջիններս բազմաբարդ անվտանգային ճարտարապետության կառուցարկման միջոցով կարողանում էին չեզոքացնել Ադրբեջանի ֆինանսական անվիճելի առաջատարությունը: Աղետը վրա հասավ իշխանափոխությունից և Լ. Տեր-Պետրոսյանի թիմակից Նիկոլ Փաշինյանի և Տեր-Պետրոսյանի գաղափարակիցներից որոշների իշխանության գալուց երկուսուկես տարի անց:

Ինքնավարությունից դեպի անկախություն

Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո բանակցային շարժ-ընթացն ակնհայտորեն հօգուտ հայկական կողմի էր: Այսպես՝ դեռ 1991 թ. սեպտեմբերի ժելեզնովոդսկյան կոմյունիկեում նշված էր երկու երկրների՝ Հայաստանի ու Ադրբեջանի ինքնիշխանության մասին, իսկ արցախյան կողմը նշված էր՝ որպես ԼՂԻՄ՝ թեպետ իրականության մեջ ԼՂՀ-ն արդեն հռչակված էր: Բուն Մինսկի խմբի առաջին փաստաթուղթը (1992 թ. մարտ) հիշատակում էր «Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջան» արտահայտությունը: Հետագայում այդ ձևակերպումը հանդիպում էր նաև ՄԱԿ-ի՝ 1993 թ. բանաձևերում: Լ. Տեր-Պետրոսյանի իշխանության օրոք միջնորդների առաջարկները, ինչպես վերը նշվեց, ենթադրում էին տարածքների հանձնում ինքնավարության կարգավիճակի դիմաց կամ տարածքների հանձնում առանց կարգավիճակի ամրագրման:

1998 թ.-ին Ռ. Քոչարյանի նախագահության հենց սկզբից իրավիճակն սկսեց փոխվել: Հայաստանի իշխանությունները կարողացել

են միջնորդներին համոզել, որ Լեռնային Ղարաբաղը չի կարող գոյություն ունենալ Ադրբեջանի ենթակայության տակ: Այդ ժամանակ՝ 1998 թ. նոյեմբերին, ծնվել են միջնորդների՝ «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների վերաբերյալ համաձայնագիր» («ընդհանուր պետության» տարբերակ) կոչված նոր առաջարկները: Այս փաստաթուղթը մեծապես կրկնում էր ԵԱՀԿ ՄԽ 1997 թ. հուլիսյան առաջարկները, սակայն արմատապես տարբերվում էր նրանով, որ Ստեփանակերտը նույնիսկ ֆորմալ առումով չէր ենթարկվելու Ադրբեջանին: Ավելին՝ ԼՂՀ-ն կարող էր ազդել Ադրբեջանի քաղաքականության վրա: Այսպես՝ *փաստաթղթում գրված էր, որ «Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է հանրապետական ձևի պետական և տարածքային կազմավորում և Ադրբեջանի հետ կազմում է ընդհանուր պետություն... Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը ձևավորում են համատեղ Հանձնաժողով, որում կներառվեն նախագահների, վարչապետների, խորհրդարանների խոսնակների ներկայացուցիչները, որոնք կորոշեն համատեղ իրավասության ներքո գտնվող ոլորտների քաղաքականությունն ու գործունեությունը»*[53]: Ըստ էության, ստացվում էր, որ Արցախի 150000 հայերի ձայները հավասարվում էին 6 միլիոն ադրբեջանցիների ձայներին: Հաշվի առնելով, որ Ադրբեջանը չէր ընդունելու հայերի հետ իրավահավասար հարաբերություններ՝ պարզ է, որ դրան գնալ չէր կարող: Հ. Ալիևը հետևյալ կերպով է արձագանքել այդ առաջարկին. *«Համեմատած նախորդ առաջարկների՝ սա միմիայն վնասաբեր էր Ադրբեջանի համար... Մեզ դնում էին այնպիսի իրավիճակում, որ Ադրբեջանի տարածքում գոյանում էին երկու պետություններ՝ Ադրբեջանը և նաև Լեռնային Ղարաբաղը, որի նկատմամբ Ադրբեջանը չէր ունենալու որևէ իրավունքներ: Մեր աչքին թոզ էին փչում, թե իբր դրանով պահպանվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»*[54]:

Այնուհետև՝ արդեն 2001 թ.-ին, Քի Վեսթում միջնորդների կողմից հնչեց առաջարկ Արցախը՝ նախկին ԼՂԻՄ սահմաններով, Լաչինի միջանցքի հետ միասին Հայաստանի կազմ մտցնելու մասին: Ադրբեջանն իր հերթին միջանցք էր ստանալու դեպի Նախիջևան: Այս առաջարկը ևս մերժվել է հենց Բաքվի կողմից: Հ. Ալիևը պնդում էր, որ մերժել է այս տարբերակը, քանի որ

Քի Վեսթում միջնորդների կողմից հնչեց առաջարկ Արցախը՝ նախկին ԼՂԻՄ սահմաններով, Լաչինի միջանցքի հետ միասին Հայաստանի կազմ մտցնելու մասին: Ադրբեջանն իր հերթին միջանցք էր ստանալու դեպի Նախիջևան: Այս առաջարկը ևս մերժվել է հենց Բաքվի կողմից:

53 О принципах всеобъемлющего урегулирования нагорно-карабахского вооруженного конфликта, 1998, http://parliament.am/library/LGH/doc_18.pdf (հղվել է 05.08.2022 թ.):

54 Նույն տեղում:

Հայաստանը հրաժարվում էր Մեղրիի հատվածում միջանցքը տրամադրել Ադրբեջանին, և համաձայն էր միայն իր սուվերեն տարածքով տրանզիտին: Հետագայում պարզ է դարձել, որ ադրբեջանական մերժման հիմնական պատճառը ներքաղաքական հարցն էր՝ հորից որդուն իշխանության փոխանցման և դրա սահունության ապահովման խնդիրը: Այստեղ կարևոր է արձանագրել, որ բոլոր այլ փոփոխականների նույնության պայմաններում ընդամենը մեկ փոփոխականի, այն է՝ հայաստանյան իշխանությունների փոփոխությունով, կշեռքի նժարն սկսեց փոխվել հօգուտ հայկական կողմի, ինչն իսկույն արձանագրեց նաև թշնամական կողմը՝ նոր առաջարկները որակելով՝ «միմիայն վնասաբեր»:

Բանակցային շարժընթացի տեսանկյունից Ռ. Քոչարյանի իշխանության տարիները (1998-2008 թթ.) կարևոր են նրանով, որ աստիճանաբար բանակցային առաջարկներն ինստիտուցիոնալիզացվեցին՝ հիմնվելով միջազգային իրավունքի հանրածանոթ սկզբունքների վրա: Նախկինում բանակցային տրամաբանությունը մոտ էր արևելյան շուկային բնորոշ «սա՝ քեզ, սա՝ ինձ» ձևաչափին՝ ըստ այդմ մեծ կախում ունենալով ռեալպոլիտիկից: Երեք սկզբունքների՝ ուժի և ուժի սպառնալիքի չգործադրման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների, մանավանդ վերջինի ներմուծումով, բանակցային գործընթացը դարձավ ավելի կանխատեսելի և հայկական կողմի համար շահավետ՝ հաշվի առնելով, որ ակնհայտորեն հօգուտ հայկական կողմի էր նաև ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը: Ինքնորոշման իրավունքի հիման վրա ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ առաջին արձանագրումները թվագրվում են հենց այս շրջանով, ավելի կոնկրետ՝ 2005 թ.-ով: Խոսքը ԵԽԽՎ 1416 բանաձևի[55], ապա հատկապես՝ ԵԽ նախարարների կոմիտեին ուղղված ԵԽԽՎ 1690 հանձնարարականին ի պատասխան նախարարների կոմիտեի ընդունած փաստաթղթի[56] մասին է: Վերջնականորեն հայտնի երեք սկզբունքները ֆիքսվեցին 2007 թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում ՀՀ և ԱՀ արտաքին գործերի նախարարներին պաշտոնապես հանձնված կարգավորման հիմնարար սկզբունքների տեքստում («մադրիդյան տարբերակ»)[57]:

Երրորդ նախագահ Ս. Սարգսյանի օրոք (2008-2018 թթ.)՝ վերջինիս իշխանության առաջին իսկ տարում, ռուսական միջնորդությամբ մերձմոսկովյան Մայենդորֆ դղյակում ստորագրվել է ՀՀ, ՌԴ և Ադրբեջանի

55 The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference, Resolution 1416 (2005), 25.01.2005 թ., https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17289&lang=en (հղվել է 05.08.2022 թ.):

56 The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference

Recommendation 1690 (2005), Reply from the Committee of Ministers, adopted at the 938th meeting of the Ministers' Deputies (21 September 2005), 26.09.2005 թ., https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=11024&lang=EN (հղվել է 05.08.2022 թ.):

57 ԵԱՀԿ Մինսկի գործընթացը...:

նախագահների եռակողմ հռչակագիրը, որի 3-րդ կետով կողմերը կարևորել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերի շարունակման կարևորությունը՝ հաշվի առնելով կողմերի հետ 2007 թ. նոյեմբերի 29-ին Մադրիդում իրենց ունեցած հանդիպումը և հաջորդական քննարկումները, որոնց նպատակն է քաղաքական կարգավորման հիմնական սկզբունքների հետագա մշակումը[58] բմեկ տարի անց՝ 2009 թ. հուլիսին, Լ'Աքվիլայում տարածվել է համանախագահող երկրների հայտարարությունը[59] բանակցային փաստաթղթի («մադրիդյան տարբերակ») հիմնական դրույթների վերաբերյալ: Նույն տարվա դեկտեմբերին Աթենքում տարածված Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների և Ադրբեջանի ու Հայաստանի արտգործնախարարների համատեղ հայտարարության եզրափակիչ հատվածում դարձյալ արձանագրվել են երեք հիմնական սկզբունքները, այդ թվում՝ ազգերի իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքը[60]: Ինչպես մայենդորֆյան, այնպես էլ աթենքյան փաստաթղթերի տակ առկա է Ադրբեջանի ստորագրությունը՝ որպես այդ երկրի առաջին միջազգային իրավական հանձնառություն առ այն, որ հակամարտությունը պետք է լուծվի ինքնորոշման իրավունքի սկզբունքի կիրարկմամբ: Կարող ենք պնդել, որ հենց այս փաստն էր իրավունք տալիս Ս. Սարգսյանին՝ պնդելու հայկական կողմի կարմիր գիծը, որ Արցախը չի լինելու Ադրբեջանի կազմում: Ըստ որում՝ սա չէր արժանանում համանախագահող

> **Ինչպես մայենդորֆյան, այնպես էլ աթենքյան փաստաթղթերի տակ առկա է Ադրբեջանի ստորագրությունը՝ որպես այդ երկրի առաջին միջազգային իրավական հանձնառություն առ այն, որ հակամարտությունը պետք է լուծվի ինքնորոշման իրավունքի սկզբունքի կիրարկմամբ: Կարող ենք պնդել, որ հենց այս փաստն էր իրավունք տալիս Ս. Սարգսյանին՝ պնդելու հայկական կողմի կարմիր գիծը, որ Արցախը չի լինելու Ադրբեջանի կազմում:**

կողմերի տարակուսանքին, քանզի բանակցային սեղանին քննարկվում էր հենց այդ, որ հանրաքվեի ժամանակ հարցերի սահմանափակում չի կարող լինել, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղն ինքնորոշվելու էր Ադրբեջանի կազմից դուրս[61]:

Այստեղ միջանկյալ կերպով տեղին է նշել, որ Ս. Սարգսյանը փաստացի

58 Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации, 02.11.2008 թ., http://kremlin.ru/supplement/232 (հղվել է 08.09.2022 թ.):

59 Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, 10.07.2009 թ., https://www.osce.org/mg/51152 (հղվել է 05.08.2022 թ.):

60 OSCE Minsk Group issues statement, 01.12.2009 թ., https://www.osce.org/mg/51685 (հղվել է 05.08.2022 թ.):

61 Ответ российского сопредседателя посла в Минской группе ОБСЕ, Посла по особым поручения МИД России И.В. Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В. Пашиняна «Истоки 44-дневной войны», 13.01.2013 թ., https://archive.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4519475 (հղվել է 06.08.2022թ.)

դեռ պատերազմական տարիներից է հանդես եկել խնդրի կարգավորման փոխզիջումային մոտեցմամբ, սակայն, ինչպես ինքն է ձևակերպել Աղդամի ազատագրումից (1993 թ. հուլիսի 23) օրեր անց տված մի հարցազրույցում. ***«այն, ինչ վերցվել է արյան գնով..., այդ վերցվածը հենց այնպես, առանց որևէ բանի չի տրվի մեկ ուրիշին»***[62]: Դատելով բանակցային պատմության շարժընթացից՝ կարելի է ասել, որ Ս. Սարգսյանի նախագահության տասը տարիների ընթացքում բանակցային տրամաբանությունը հիմնված էր փոխզիջման ժամանակ հայկական կողմի ստանալիքը հետևողականորեն շատացնելու սկզբունքի վրա:

Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել Ս. Սարգսյանի օրոք մեկ այլ շատ կարևոր և ապագայի տեսանկյունից հեռանկարային ձեռքբերում՝ նախկինում որպես մեկ ամբողջություն դիտարկվող 7 շրջանների բաժանումը երկու մասի՝ 5 շրջանի (Աղդամ, Ֆիզուլի, Ջաբրայիլ, Ջանգելան, Ղուբաթլու) և 2 շրջանի (Լաչին, Քյալբաջար[63]): Առաջին 5 շրջանը նախատեսվում էր հանձնել սկզբում, իսկ մնացյալ 2-ը՝ միայն այն բանից հետո, երբ Ադրբեջանը կճանաչի Արցախում անցկացված հանրաքվեի արդյունքները և կպահպանի պայմանավորվածության բոլոր կետերը[64]: Հաշվի առնելով Բաքվի ամբողջ անցյալ վարքը և նպատակադրումները՝ վերջինս ամենայն մեծ հավանականությամբ խախտելու էր պայմանավորվածությունը, հատկապես՝ հանրաքվեի արդյունքները ճանաչելը, և այդ պարագայում ամբողջ Շահումյանի (Քարվաճառի) շրջանը և Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածը՝ Բերձոր շրջկենտրոնով, մնալու էին Արցախին: Եվ այս ամենը՝ միջազգայնորեն ճանաչված անկախ

«Հաշվի առնելով Բաքվի ամբողջ անցյալ վարքը և նպատակադրումները՝ վերջինս ամենայն մեծ հավանականությամբ խախտելու էր պայմանավորվածությունը, հատկապես՝ հանրաքվեի արդյունքները ճանաչելը, և այդ պարագայում ամբողջ Շահումյանի (Քարվաճառի) շրջանը և Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածը՝ Բերձոր շրջկենտրոնով, մնալու էին Արցախին:

կարգավիճակով, խաղաղապահ ուժերի առկայությամբ և անվտանգության այլ երաշխիքներով[65]:

62 Բանակցություններ ադրբեջանական կողմի հետ զինադադարի և պատանդների ու ռազմագերիների փոխանակման հարցերով, https://www.youtube.com/watch?v=seDwbOAKMcI (հղվել է 06.08.2022 թ.):

63 Հաշվի առնելով բանակցային համաշարը, որ հիմնվում էր 1988 թ. վիճակի վրա՝ նշել ենք նախկին ԱդրԽՍՀ վարչատարածքային բաժանման մեջ նշված տեղանունները:

64 Այս մասին պատերազմից հետո գաղտնազերծել է նաև Մոսկվան (տե՛ս Ответ российского сопредседателя посла в Минской группе ОБСЕ...):

65 2011թ. կազանյան փաստաթղթում սահմանված էին մի քանի խումբ երաշխիքներ, որոնց թվում՝ Արցախի՝ ինքնապաշտպանական ուժեր ունենալու ճանաչված իրավունքը, միջազգային խաղաղապահ առաքելության տեղակայումը, ՀՀ-ի՝ որպես Արցախի անվտանգության երաշխավոր ճանաչումը, Արցախի ընտրված մարմինների (նախագահ, ԱԺ), ինչպես նաև դատական համակարգի լեգիտիմության միջազգային ճանաչումը և Արցախի ճանաչված իրավունքը՝ անդամակցելու այն միջազգային կառույցներին, որոնց պարագայում լիակատար միջազգային ճանաչումը պարտադիր չէ:

Այն, որ մինչև 2018 թ. բանակցային գործընթացն ընթանում էր հենց այդ ճանապարհով, նկատելի էր արդեն դեպքերի ծավալման ընթացքում: Կարևոր ցուցիչ էր համահայկական ջանքերով Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի շինարարությունը, որ արդեն իսկ բացահայտում էր նախագահ Ս. Սարգսյանի գլխավորությամբ իշխող վերնախավի մոտեցումները բանակցությունների տարածքային բաղադրիչի հարցում: Հետագայում՝ արդեն Արցախյան երրորդ պատերազմից հետո, Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևն ամբողջությամբ բացահայտել է 2018 թ.-ին նախորդող բանակցային ամբողջ տրամաբանությունը և հայկական կողմի մարտավարությունը: Այսպես՝ 2021 թ. փետրվարի 14-ին Ի. Ալիևն ասել է. *«Քանզի բանակցությունների ժամանակ երբեք չէին ցանկանում Լաչինի և Քյալբաջարի շրջանները վերադարձնել մեզ: Բանակցություններում արդյունքի չհասնելու պատճառը հենց դրանում էր: Ցավումեմ, որ Հայաստանի*

> **Քանզի բանակցությունների ժամանակ երբեք չէին ցանկանում Լաչինի և Քյալբաջարի շրջանները վերադարձնել մեզ: Բանակցություններում արդյունքի չհասնելու պատճառը հենց դրանում էր:**

և նրա որոշ արտաքին հովանավորների դիրքորոշումն այն էր, որ հինգ շրջան վերադարձվի Ադրբեջանին, Ադրբեջանը դրանով բավականանա, և երբ Լեռնային Ղարաբաղին անկախություն տրվի, Քյալբաջարի և Լաչինի շրջանները մնան Հայաստանի հավերժական վերահսկողության տակ: Ես մերժեցի այդ առաջարկը»[66]: Պատերազմից անմիջապես հետո՝ 2020 թ. դեկտեմբերի 1-ին Ի. Ալիևը նույնպես անդրադարձել է այս թեմային՝ ավելի մանրամասն. *«Ուզում եմ, որ ադրբեջանցի ժողովուրդն այս ամենն ինձնից իմանա, որ բանակցային գործընթացի ժամանակ բնավոչ պատահականորեն կենտրոնական էր Ադրբեջանին օկուպացված տարածքների վերադարձի հարցը: Սա էր մեր դիրքորոշումը: Սակայն այստեղ ևս նկատի էր առնվում փուլային լուծումը: Մենք դրա կողմնակիցն էինք: Առաջին փուլում 5 շրջանի վերադարձն էր Ադրբեջանին, երկրորդ փուլում՝ Քյալբաջարի և Լաչինի շրջանների վերադարձն Ադրբեջանին՝ բացառությամբ Լաչինի միջանցքի: Հայկական կողմն ամեն անգամ հարց էր բարձրացնում, որ եթե 7 շրջանը վերադարձվելու է Ադրբեջանին, ապա Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն անպայման նույն ժամանակ պետք է լուծում ստանար: ... Նրանց մոտեցումն այնպիսին էր, որ 5 շրջանը կարող է վերադարձվել, սակայն Լաչինի և Քյալբաջարի շրջանների՝ Ադրբեջանին վերադարձվելու համար մենք պետք է ճանաչեինք կա՛մ Լեռնային Ղարաբաղի անկախությունը, կա՛մ էլ այնտեղ անցկացված հանրաքվեն, և հանրաքվեի համար պետք է*

66 İlham Əliyev və birinci xanım Mehriban Əliyeva Füzuli, Zəngilan, Laçın və Cəbrayıl rayonlarında olublar, 14.02.2021 թ., https://president.az/az/articles/view/50632 (հղվել է 20.07.2022 թ.):

ժամանակ որոշվեր: Եթե Լեռնային Ղարաբաղին անկախություն տրվեր, այն ժամանակ Հայաստանը Քյալբաջարի և Լաչինի շրջանները կվերադարձներ Ադրբեջանին, սակայն Լաչինի միջանցքը, որի լայնությունը որոշված էլ չէր,

> **Դուք Ղարաբաղյան առաջին պատերազմում պարտվել եք, իսկ Հայաստանը հաղթել է: Հաշտվե՛ք իրողությունների հետ: Հիմա որ ձեզ հինգ շրջան է խոստացվում, էլի մեծ բան է, դա վերցրե՛ք, Լաչինն ու Քյալբաջարն էլ թող մնան հետոյի: Հենց Լեռնային Ղարաբաղին անկախություն տաք, այդ ժամանակ էլ այդ շրջանների մի մասը կարող է ձեզ վերադարձվել»**

տրվելու էր Հայաստանին: Ահա սրանք էին բանակցային սեղանին առկա հարցերը: Կարող եմ ասել, որ 17 տարվա ընթացքում մեզ տարբեր տեղերից, օտարերկրյա շրջանակներից այսպիսի ազդակներ էին գալիս, որ հիմա հինգ շրջանը վերցրեք, դրանով էլ բավականացեք: Դուք Ղարաբաղյան առաջին պատերազմում պարտվել եք, իսկ Հայաստանը հաղթել է: Հաշտվե՛ք իրողությունների հետ: Հիմա որ ձեզ հինգ շրջան է խոստացվում, էլի մեծ բան է, դա վերցրե՛ք, Լաչինն ու Քյալբաջարն էլ թող մնան հետոյի: Հենց Լեռնային Ղարաբաղին անկախություն տաք, այդ ժամանակ էլ այդ շրջանների մի մասը կարող է ձեզ վերադարձվել»[67]:

> **Ի. Ալիևի սույն ինքնախոստովանությունից ակնհայտ է միանգամայն հակառակը, որ հայկական կողմի կառուցողականության և, ինչն ամենակարևորն է, պետական քաղաքականության հետևողականության շնորհիվ, միջազգային ճնշման սլաքները թեքվել էին դեպի Ադրբեջան:**

Պետք է նշել նաև, որ այս խոստովանությունները, բացի բանակցային սեղանին հայկական կողմի տարածքային հնարավոր ամրագրումների դրական շարժընթացը ցույց տալուց, ապացուցում են նաև այն, որ իրականությանը չէր համապատասխանում նաև Լ. Տեր-Պետրոսյանի կողմից բերվող այն փաստարկը, թե իբր *«Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին մենք, փաստորեն, ձեռնոց ենք նետել»*[68]: Ի. Ալիևի ինքնախոստովանությունից ակնհայտ է միանգամայն հակառակը, որ հայկական կողմի կառուցողականության և, ինչն ամենակարևորն է, պետական քաղաքականության հետևողականության շնորհիվ, միջազգային ճնշման սլաքները թեքվել էին դեպի Ադրբեջան:

67 İlham Əliyev xalqa müraciət edib, 01.12.2020 թ., https://president.az/az/articles/view/48205 (հղվել է 20.07.2022 թ.):

68 Տեր-Պետրոսյան Լևոն, Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 01.11.1997 թ.:

Բանակցային այսպիսի ընթացքն ակնհայտորեն դուր չէր գալիս Բաքվին, որը շարունակում էր ռազմական շանտաժով զբաղվել: 2016 թ. Ապրիլյան պատերազմը կոտրեց Ադրբեջանի նաև այս վերջին խաղաթուղթը, քանզի պարզվեց, որ Բաքուն ի վիճակի չէ հարցը լուծել ռազմական ճանապարհով:

2018 թ. հակապետական շարժումը և ԼՂ բանակցային գործընթացի ռեվիզիան

2018 թ. ապրիլին հակահիշխանական և հակապետական[69] շարժում սկսած Ն. Փաշինյանն ապրիլի 17-ին հայտարարեց, որ իր առաջնորդած շարժումը «հեղափոխություն» է[70]: Այս մոտեցումն ինքնին ենթադրում էր, որ, անկախ հարթակից հնչեցվող կոչերից ու հայտարարություններից, իշխանության գալու դեպքում գործարկվելու է «հեղափոխական մեքենան», որ առաջին հերթին ենթադրում է նախորդ էլիտայի հետ կապված ամեն ինչի վերացում[71]: Սա անխուսափելի էր նաև այն պատճառով, որ նոր

> **Անկախ հարթակից հնչեցվող կոչերից ու հայտարարություն-ներից, իշխանության գալու դեպքում գործարկվելու է «հեղափոխական մեքենան», որ առաջին հերթին ենթադրում է նախորդ էլիտայի հետ կապված ամեն ինչի վերացում**

իշխանության եկող խումբը չէր հանդիսանում ազգի շարունակական բնազարգացման (էվոլյուցիա) արդյունք, հաշտ չէր ազգ-պետության հիերարխիան և քաղաքական լանդշաֆտը բաղկացնող ավանդական հանրակարգերի (եկեղեցի, պատմություն[72], կուսակցական համակարգ, բանակ[73] և այլն)հետ, ըստ այդմ՝ չուներ կայուն սոցիալական հենարան: Ըստ որում՝ վերոգրյալը բնորոշ էր ինչպես «հեղափոխական էլիտային»՝

69 2018 թ. մարտի 31-ին սկսելով այդ շարժումը՝ Ն. Փաշինյանը վերջինիս նպատակը համարում էր «կասեցնել Սերժ Սարգսյանի ստեղծած ստահոդ պետության (sic!), ստահոդ կառավարության, ստահոդ իշխանության գործունեությունը» (Գյումրիից մեկնարկեց Նիկոլ Փաշինյանի բողոքի քայլերթը՝ ընդդեմ Սերժ Սարգսյանի հետագա իշխանավարման, 31.03.2018 թ., https://www.youtube.com/watch?v=u_jAvV4t1nY (հղվել է 01.07.2022 թ.)): Ըստ թվային կերպով չարձանագրված մեկ այլ բանավոր վկայության՝ նույն ժամանակում Ն. Փաշինյանը քաղաքացիներից մեկին հետևյալ եղանակով է ներկայացրել շարժման հաղթանակի մեխանիզմը. «Պետությունը կանգնացնում ենք ու կրում ենք» (Կարեն Վրթանեսյանի ֆեյսբուքյան գրառում, 20.11.2020 թ., https://www.facebook.com/groul/posts/3715380845166752 (հղվել է 04.07.2022 թ.)): Անգամ առանց այս բառացի ինքնախոստովանությունների էլ, զուտ հաշվի առնելով շարժման գործիքակազմը, այն է՝ շենք-շինությունների շրջափակումը, պետական մեքենայի աշխատանքի միտումնավոր խափանումը և այդպիսի պայքարում անզիջումայնությունը, պարզ էր, որ շարժումն ուներ եղած պետության ու պետական համակարգի հանդեպ ընդգծված ատելություն:

70 Պաշտոնապես հայտարարում եմ Հայաստանում ժողովրդական թավշյա հեղափոխության մեկնարկը Նիկոլ Փաշինյան, 17.04.2018 թ., https://www.youtube.com/watch?v=V--Lftd_57U (հղվել է 05.08.2022 թ.):

71 Mahoney James, Path-Dependent Explanations of Regime Change: Central America in Comparative Perspective, Studies in Comparative International Development 36, no. 1, 2001, էջք 112-113:

72 Տե՛ս դիցուք հայոց պատմության տրամաբանության նենգափոխման, հայոց նախնիներին պատվազուրկ ներկայացնելուն միտված Ն. Փաշինյանի «Մոռանալ «հերոսական անցյալը»» խմբագրականը «Հայկական ժամանակ» թերթում (09.12.2005 թ.):

73 Բանակի և ազգային էլիտայի հանդեպ թունոտ և ատելության խոսք պարունակող հրապարակումներ տե՛ս Ն. Փաշինյանի և փաստացի նրա ղեկավարած թերթերի էջերում՝ Ատելության առաջնորդի «Օրագիրը». իսկ դու ղալաթ արե՞լ ես (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ), 05.08.2022 թ., https://antifake.am/am/news/2345 (հղվել է 05.08.2022 թ.):

ընդհանրապես, այնպես էլ նրա առանձին անդամներից շատերին, այդ թվում՝ Ն. Փաշինյանին:

Խորհրդանշական առումով «հեղափոխական ռեվիզիայի» թիրախում առաջինը հայտնվեց հենց Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ բանակցային գործընթացը: Այսպես՝ 2018 թ. մայիսի 9-ին՝ Ստեփանակերտում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, նորանշանակ վարչապետ Ն. Փաշինյանն առաջին անգամ հայտարարել է, թե ***«Ես պատրաստ եմ Հայաստանի Հանրապետության անունից բանակցել Ադրբեջանի նախագահի հետ, բայց Արցախի Հանրապետության անունից Ադրբեջանի նախագահի և միջազգային հանրության հետ պետք է բանակցի Արցախի իշխանությունը՝ ի դեմս Արցախի Հանրապետության նախագահի: Այսինքն այստեղ շարունակականություն չկա, այստեղ կա նոր մոտեցում»***[74]: Փաստորեն, սա նորանշանակ վարչապետի առաջին դրժված

> **Արձանագրվեց հինը ոչնչացնելու առաջին դրվագը, որն, ըստ էության, խոստովանվում էր նաև Ն. Փաշինյանի կողմից՝ «այստեղ շարունակականություն չկա, այստեղ կա նոր մոտեցում»**

խոստումն էր՝ հաշվի առնելով, որ ընդամենը 9 օր առաջ ՀՀ ԱԺ-ում վերջինս ասել էր, որ ***«... կարգավորումը պետք է տեղավորվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: ... Անհրաժեշտ է հարցին տիրապետել հնարավորինս կարճ ժամկետներում: ... Մեթոդաբանությունը պետք է լինի ինստիտուցիոնալ, որովհետև Հայաստանում կան համապատասխան ինստիտուտներ, ովքեր պետք է հոգ տանեն, որպեսզի իմ վարչապետ ընտրվելու դեպքում ես տիրապետեմ անհրաժեշտ ինֆորմացիային»[75]:*** Սրանով արձանագրվեց հինը ոչնչացնելու առաջին դրվագը, որն, ըստ էության, խոստովանվում էր նաև Ն. Փաշինյանի կողմից՝ ***«այստեղ շարունակականություն չկա, այստեղ կա նոր մոտեցում»***[76]:

Բանակցային գործընթացին և առկա բանակցային ձևաչափին հաջորդ հարվածը հասցվել է ՀՀ ԱԺ ամբիոնից 2018 թ. նոյեմբերի 1-ին, երբ Ն. Փաշինյանը ներկայացրել է իր հերթական նոր մոտեցումը. ***«Ղարաբաղի հարցի ցանկացած կարգավորում պետք է լինի ընդունելի Հայաստանի ժողովրդի համար, Արցախի ժողովրդի համար և, այո՛, պետք է ընդունելի լինի նաև Ադրբեջանի ժողովրդի համար... Կա՞ արդյոք Ադրբեջանում պաշտոնյա, ով պատրաստ է կրկնել նույն հայտարարությունը, բառացի նույն***

74 ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսը ԼՂ-ում, 09.05.2018 թ., https://www.youtube.com/watch?v=K37XE8IPUHM&t=933s:

75 Տե՛ս Live. 30.04 Փաշինյանի հանդիպումը «ՀՀԿ» խմբակցության հետ, https://www.youtube.com/watch?v=WWi4LWPakJU&t=1302s (հղվել է 05.08.2022 թ.):
Ըստ դաշտային աշխատանքների ընթացքում մեր հավաքագրած տեղեկությունների՝ այսօրինակ մոտեցման խորհուրդ Ն. Փաշինյանն ստացել էր Արսեն Խառատյանից, որն այդ ժամանակ անպաշտոն մի անձ էր:

76 ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսը ԼՂ-ում...:

նախադասությունը ասել, որ Ղարաբաղի հարցի ցանկացած կարգավորում պետք է ընդունելի լինի Ադրբեջանի ժողովրդի համար, ... Ղարաբաղի ժողովրդի համար և Հայաստանի ժողովրդի համար: Եթե կա պաշտոնյա, որ կարող է կրկնել այս նախադասությունը, կարող ենք իրոք խոսել, որ ... կա հնարավորությունների պատուհան (հակամարտության լուծմանը հասնելու – խմբ.): *Իսկ եթե չկա այսպիսի հայտարարություն ... անող քաղաքական գործիչ, մենք պետք է դեռ շարունակենք փնտրել, թե ինչ նկատի ունեն մեր* (միջազգային – խմբ.) *գործընկերները՝ ասելով՝ «կա հնարավորությունների պատուհան»»*[77]: Հետագայում՝ 2019 թ. մարտի 12-ին, Ստեփանակերտում Հայաստանի և Արցախի Հանրապետությունների անվտանգության խորհուրդների համատեղ նիստի ժամանակ Ն. Փաշինյանը հղում է կատարել իր այս հայտարարությանը՝ պարզաբանելով, որ *«Սա իմ ներդրումն էր ոչ միայն Հայաստանի ու Արցախի, այլև Ադրբեջանի ժողովրդին խաղաղության նախապատրաստելու գործում: Ցավոք, Ադրբեջանի նախագահի կողմից մենք համարժեք հայտարարություններ, քայլեր չենք տեսնում: Չնայած սրան՝ պատրաստ եմ շարունակել երկխոսությունը ոչ միայն Ադրբեջանի նախագահի, այլև Ադրբեջանի ժողովրդի հետ, որովհետև համոզված եմ՝ Ադրբեջանի ժողովուրդը խաղաղասեր է նույնքան, որքան Հայաստանի ժողովուրդը, որքան Արցախի ժողովուրդը»*[78]:

Վերջին օրինակը ցուցադրում է «հեղափոխական» էթոսը և մարտավարությունը: Նախ՝ հնի ոչնչացում: Երկրորդ՝ լեգիտիմության նոր բազայի ստեղծում «հեղափոխության» հիման վրա՝ ներքին կյանքի կանոնները տարածելով արտաքին հարաբերությունների վրա: ***«Ես ասել եմ, թող Ադրբեջանի նախագահն էլ ասի»***-ն ոչ այլ ինչ էր, քան դասական պատմաքաղաքագիտական գրականությունից մեզ հայտնի «հեղափոխության արտահանման» երևույթ, այդ թվում՝ երևակայական միջազգային հանրության աչքերում դրա շնորհիվ լեգիտիմություն կերտելու միջոց: Իսկ սա օրինաչափ է, քանզի «հեղափոխական», մանավանդ՝ պոպուլիստական տիպի վարչակարգերը, խախտած լինելով ավանդական հասարակական-քաղաքական համակարգը, և «ոչնչից դառնալով ամեն ինչ»՝ ստիպված են լինում լեգիտիմություն կերտել ինչպես պատահի և որտեղից պատահի[79]:

Նոր իշխանությունների օրոք Լեռնային Ղարաբաղի հարցում փոխվեց ոչ միայն հռետորաբանությունը, այլև նախկին բանակցային ձևաչափն ու տրամաբանությունը: Ս. Սարգսյանի օրոք՝ 2018 թ. սկզբի դրությամբ, դրանք հանգում էին որդեգրված սկզբունքներին հավատարմությանը և

77 Նիկոլ Փաշինյանը՝ Ղարաբաղի հարցի մասին, 01.11.2018 թ., https://www.youtube.com/watch?v=H-jLIMg4tMU&t=145s (հղվել է 29.06.2022 թ.):

78 Նիկոլ Փաշինյանի խոսքը Հայաստանի և Արցախի Անվտանգության խորհուրդների համատեղ նիստում, 12.03.2019 թ., https://www.youtube.com/watch?v=JIBSWHI5S44&t=537s (հղվել է 29.06.2022 թ.):

79 Lachapelle Jean, Levitsky Steven, Way Lucan, Casey Adam, Social revolution and authoritarian durability, World Politics, 2020 թ., էջք 1-44:

միջազգային հանրության միջոցով Ադրբեջանի վրա ճնշում բանեցնելուն՝ համակերպվելու այդ սկզբունքներից երկուսի՝ ժողովուրդների ինքնորոշման, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքների ճանաչմանը: Ապրիլյան պատերազմից հետո դրան էին միտված Վիեննայի, Սանկտ-Պետերբուրգի և Ժնևի բազմակողմ հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները, որ հետագայում առ ոչինչ համարվեցին նոր իշխանությունների կողմից այն պատճառաբանությամբ, թե իբր ***«Ադրբեջանը չի համաձայնել այդ ամենին»***[80]:

Ինչ վերաբերում է ինքնորոշման իրավունքի հարցին, ապա բանակցային տրամաբանությունը հանգել էր նախկին ԼՂԻՄ տարածքի և փաստացի նախկին ԱդրԽՍՀ Լաչինի շրջանի (Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի հյուսիսային թև) և նախկին ԱդրԽՍՀ Քյալբաջարի շրջանի (Արցախի Հանրապետության Շահումյանի շրջան)՝ Ադրբեջանի կազմից դուրս միջազգայնորեն ճանաչված գոյությանը: Այս մասին են

> **Բանակցային տրամաբանությունը հանգել էր նախկին ԼՂԻՄ տարածքի և փաստացի նախկին ԱդրԽՍՀ Լաչինի շրջանի (Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի հյուսիսային թև) և նախկին ԱդրԽՍՀ Քյալբաջարի շրջանի (Արցախի Հանրապետության Շահումյանի շրջան)՝ Ադրբեջանի կազմից դուրս միջազգայնորեն ճանաչված գոյությանը:**

վկայում ինչպես 2016 թ. հոկտեմբերի 7-ին Ի. Ալիևի խոստովանությունը, որ ***«փակ դռների հետևում ծավալուն զրույցներ են ընթանում, մեզ բավականին շատ են ճնշում՝ ստիպելով, որ Ադրբեջանը համաձայնություն տա Լեռնային Ղարաբաղի անկախությանը»***[81], այնպես էլ 2019 թ. նոյեմբերի 6-ին Արցախի Հանրապետության «Ազատ հայրենիք» կուսակցության ղեկավար Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ Արցախի ԱԺ «Հայրենիք» խմբակցության պատգամավորների հետ հանդիպման ժամանակ Ն. Փաշինյանի խոստովանությունը, ըստ որի՝ թե՛ Վլադիմիր Պուտինը, թե՛ Նուրսուլթան Նազարբաևը, թե՛ Ալեքսանդր Լուկաշենկոն իրեն ասել են, որ ***«Ալիևը հասկանում ա, որ Ղարաբաղն այլևս երբեք Ադրբեջանի կազմում չի լինի»***[82]:

Սակայն ի հակադրություն սրա՝ արդեն 2018 թ. դեկտեմբերի 6-ին Միլանում ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատարի և Ադրբեջանի

80 Հեռանկար/Herankar-Զոհրաբ Մնացականյան/Zohrab Mnacakanyan, 31.07.2020 թ., https://www.youtube.com/watch?v=UUmH9oMFRTA (հղվել է 06.08.2022 թ.):

81 "Amma bağlı qapılar arxasında nə qədər söhbətlər gedir, bizə nə qədər təzyiqlər göstərilir ki, Azərbaycan Dağlıq Qarabağın müstəqilliyinə razılıq versin", տե՛ս İlham Əliyevin sədrliyi ilə Nazirlər Kabinetinin 2016-cı ilin doqquz ayının sosial-iqtisadi inkişafının yekunlarına və qarşıda duran vəzifələrə həsr olunmuş iclası keçirilib, 07.10.2016 թ., https://president.az/az/articles/view/21318 (հղվել է 01.07.2022 թ.):

82 Ն. Փաշինյան-«Հայրենիք» խմբակցություն հանդիպման պաշտոնական մամուլի հաղորդագրությունը տե՛ս Վարչապետ Փաշինյանն ընդունել է Արցախի ԱԺ «Հայրենիք» խմբակցության պատգամավորներին և անդրադարձել ֆինանսատնտեսական ոլորտում իրականացված քայլերին, 06.11.2019 թ., https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/11/06/Nikol-Pashinyan-meeting (հղվել է 01.07.2022 թ.), իսկ հանդիպման չհրապարակված մասի ձայնագրության մեզ հետաքրքրող հատվածը տե՛ս Սերժ Սարգսյանի սենսացիոն բացահայտումը կապիտուլյանտի մասին, 09.06.2021 թ., https://www.facebook.com/watch/?v=537552123934871, 04:01 ր. (հղվել է 01.07.2022 թ.):

ԱԳ ղեկավարի միջև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հովանու ներքո անցած հանդիպման արդյունքում տարածվեց մամուլի հաղորդագրություն, որտեղ որևէ հիշատակում չկար ինքնորոշման իրավունքի մասին, փոխարենը նշված էր ոչ հստակ, բազմիմաստության անծայրածիր ասպարեզ բացող «հակամարտության արդար կարգավորում» (բնօրինակում՝ «a just settlement of the conflict») բառակապակցությունը[83]:

Սեպարատ բանակցություններ թշնամու հետ

Ինքնին բանակցային ձևաչափին հասցված հարված էր բանակցությունների սուբյեկտային մեխանիզմի փոփոխությունը:

Ինքնին բանակցային ձևաչափին հասցված հարված էր բանակցությունների սուբյեկտային մեխանիզմի փոփոխությունը:

Նախկինում միջնորդ երկրներից բաղկացած համանախագահությունը կատարում էր բովանդակային-ինստիտուցիոնալ գործառույթ, այն է՝ կողմերից ստանում էր բանակցային առաջարկներ, լսում մտահոգությունները, ըստ դրա՝ մշակում բանակցային օրակարգը, հանդես գալիս իր իսկ հովանու ներքո ընդունված երեք սկզբունքների պատշգանությամբ, որոնցից երկուսը ձեռնտու էին հայկական կողմին: Այս է պատճառը, որ Մինսկի խմբի համանախագահությունն բազմաթիվ անգամներ թիրախավորվել է Ադրբեջանի կողմից: Բանակցային նման մեխանիզմի պարագայում հայկական կողմի հիմնական զրուցակիցը հենց համանախագահներն էին և ոչ Ադրբեջանը, առանձին վերցրած որի հետ բանակցելիս գործնականում ոչնչի հասնել հնարավոր չէր՝ հաշվի առնելով թշնամական կողմի անզիջումայնությունը և բանակցություններում ուժի սպառնալիքով հանդես գալը: Հակառակ այս մեխանիզմի, որ գործադրվել էր և՛ Ռ. Քոչարյանի, և՛ Ս. Սարգսյանի օրոք՝ Ն. Փաշինյանն ի սկզբանե գնաց Ադրբեջանի հետ սեպարատ բանակցությունների՝ սրանով կասկածի տակ դնելով նախորդ ամբողջ բանակցային ժառանգությունը:

Սեպարատ բանակցությունների գնալու դրդապատճառը պայմանավորված էր ոչ միայն նախորդ բանակցային ժառանգությունը ջնջելու «հեղափոխական մղումով», այլև ծագմամբ թյուրքական (թուրքական և ադրբեջանական), գործառնական առումով արևմտյան փափուկ ուժի կողմից տարածված քարոզչական թեզով, թե իբր հայ-

83 Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, Armenia, and Azerbaijan, 06.12.2018 թ., https://www.osce.org/minsk-group/405479 (հղվել է 02.09.2022 թ.):

թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունները կկարգավորվեն միայն ուղիղ երկխոսության դեպքում: Ինչպես նշեցինք, ծագմամբ սա թուրքական թեզ է, նպատակ ունի տարածաշրջանում չեզոքացնել իրեն մրցակից ռուսական ազդեցությունը և իր ծավալապաշտության դեմ միայնակ թողնել առաջին հերթին հայերին: Այս մարտավարությունը թուրքերի կողմից կիրառվել է, օրինակ, 1918 թ.-ին Օսմանյան կայսրություն-Անդրկովկաս տրապիզոնյան բանակցությունների ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունն ստիպեց Անդրկովկասին իր հետ գնալու սեպարատ բանակցությունների՝ հաշվի առնելով, որ վերջինս անկախացել էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը կնքած Ռուսաստանից: Արդյունքում Օսմանյան կայսրությունն ունեցավ հայկական տարածքներից ավելի մեծ կորզումներ, քան սահմանված էր նույնիսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով՝ հասնելով մինչև Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի):

Արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան ձգտում էր նույն բանին իր փափուկ ուժի կառույցների, ինչպես նաև այսպես կոչված «կովկասյան պլատֆորմի» միջոցով[84]: Ինչ վերաբերում է ԽՍՀՄ փլուզումից հետո արևմտյան փափուկ ուժի կառույցներին, ապա վերջիններիս նարատիվը ևս, կիրառելով հակագաղութատիրական խոսույթներ, կառուցված էր նրա շուրջ, որ Ռուսաստանը «եկվոր» ուժ է տարածաշրջանում, որ խանգարում է տարածաշրջանային երկրների բնազարգացմանը, հետևաբար՝ «պետք է բացառել կողմնակի ազդեցությունը», և «հարևաններով համատեղ գոյակցության հասնել»[85]:

Մի կողմ թողնելով թուրքական պատմագիտությանը հարազատ այս թեզերի խորքային հակագիտականությունը՝ այս հատվածում արձանագրենք, որ նաև սա էր ընկած «հեղափոխական» իշխանության գործողությունների հիմքում: Բարդ հարցերին պարզ պատասխաններ տալու հեղափոխական ոգուն համահունչ՝ նոր իշխանություններին թվում էր, թե նախորդ իշխանություններն իբր լեգիտիմության պակասից էր, որ «չէին համարձակվում» դեմ առ դեմ խոսել Ադրբեջանի ղեկավարության հետ և անընդհատ կարիքն ունեին միջնորդների, հատկապես՝ Ռուսաստանի: Օտարացած հայոց պատմության ընթացքից և Հայաստանին ու հայությանը շրջապատող թշնամական միջավայրի օբյեկտիվ իրակություններից, նաև անծանոթ համաշխարհային պատմության օրինաչափություններին՝ նոր էլիտան չուներ այն գիտակցումը, որ նախկին իշխանություններն Ադրբեջանի հետ ուղիղ չէին բանակցում ոչ թե լեգիտիմության ենթադրյալ պակասի, այլ աննպատակահարմարության պատճառով. առանձին

84 Арешев Андрей, От «Кавказской платформы» – до формата «три плюс три»: декларации и реальность, https://vpoanalytics.com/2021/11/08/ot-kavkazskoj-platformy-do-formata-tri-plyus-tri-deklaratsii-i-realnost/ (հղվել է 06.08.2022 թ.):

85 Այս գաղափարների հրապարակախոսական խտացումը տե՛ս Մանուկյան Վազգեն, Գնացքից թռչելու ժամանակն է, ինչպես նաև Իշխանյան Ռաֆայել, Երրորդ ուժի բացառման օրենքը՝ հրապարակված «Որն է մեր ճանապարհը», Երևան, 1990 թ.:

Օտարացած հայոց պատմության ընթացքից և Հայաստանին ու հայությանը շրջապատող թշնամական միջավայրի օբյեկտիվ իրակություններից, նաև անծանոթ համաշխարհային պատմության օրինաչափություններին՝ նոր էլիտան չուներ այն գիտակցումը, որ նախկին իշխանություններն Ադրբեջանի հետ ուղիղ չէին բանակցում ոչ թե լեգիտիմության ենթադրյալ պակասի, այլ աննպատակահարմարության պատճառով:

վերցրած՝ Ադրբեջանից բանակցություններով ոչինչ հնարավոր չէր ստանալ, ինչպես նշեցինք վերևում: Իսկ վերջինիս պատճառը ոչ թե Հայաստանի կամ Հայաստանի նախկին իշխանությունների մեջ էր, այլ առարկայական իրականության, որ մի տարածքի հանդեպ իրեն մետրոպոլիա համարող պետության հավակնությունը մարում է կա՛մ պատերազմի հետևանքով, կա՛մ միջազգային հանրության ճնշման արդյունքում, կա՛մ այս ամենը՝ համակցված ժամանակային տևական գործոնի հետ:

ԼՂ հարցի ներքին ինստրումենտալիզացիա

Ի տարբերություն նախորդ իշխանությունների, որոնց համար Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը կերպավորվում էր որպես ազգային-քաղաքական նշանակության հարց՝ «հեղափոխական» իշխանությունների պատկերացումներն էականորեն տարբեր էին: Ինչպես կարելի է դատել թե՛ կիրառված հռետորաբանության փոփոխություններով, թե՛ բուն քաղաքական գործողություններով՝ վերջիններիս համար հակամարտության հարցը զուտ ներքաղաքական պայքարի գործիք էր: Այստեղ գործ ունենք մի երևույթի հետ, որ հասարակագիտական միջգիտակարգային եզրաբանությամբ կոչվում է *հայելային մտածողություն*[86]: Այսպես՝ հայելային մտածողությունը վերլուծողի՝ տեղեկությունն անձնական փորձառության պրիզմայով ընկալելու և մշակելու մոլորությունն է: Հայելային մտածողության պարագայում խաթարվում է օբյեկտիվությունը, առկա սահմանափակ տեղեկատվության վրա դրվում է վերլուծողի անձնային գործոնների, այդ թվում՝ սոցիալ-մշակութային նախապատմության կնիքը[87]: Հայելային մտածողությունն այս դեպքում հանգեցրեց այն դավադրապաշտական մտածողությանը, թե իբր 1998 թ.-ին Լ. Տեր-Պետրոսյանին իշխանությունից հեռացնողներն Արցախի հարցը զուտ որպես պատրվակ ընտրեցին՝ օգտվելով առիթից, որ Լ. Տեր-Պետրոսյանը բաց ասում էր, որ պատրաստ է առանց կարգավիճակի

86 Lauren Witlin, Of Note: Mirror-Imaging and Its Dangers, SAIS Review Mirror-vol. XXVIII no. 1, 2008, էջ 89:
87 Նույն տեղում:

ամրագրման հանձնել Արցախը, իսկ գալով իշխանության՝ իրենք սկսեցին արտաքին հարաբերություններում շարունակել փոխզիջումների շուրջ բանակցությունները, բայց ներքին կյանքում պիտակավորեցին տարածքային փոխզիջումը՝ որպես դավաճանություն՝ նպատակ ունենալով ական դնել իրենցից հետո հավանական իշխանության եկող ընդդիմության տակ[88]:

Հենց այս մտածողությունն է պատճառը, որ երբ 2018 թ. սեպտեմբերի 19-ին և 22-ին թշնամին, խախտելով հրադադարի ռեժիմը, Տավուշում և Արցախում խոցեց հայ զինծառայողներ Հայկազ Բաբկենի Մաթևոսյանին[89] և Արցախ Միերի Հովսեփյանին[90], Ն. Փաշինյանը, չհասկանալով, որ սա «Ադրբեջան» անվան տակ ձևակերպված Հարավային Կովկասի թյուրքական քաղաքական կազմակերպության՝ հայերի դեմ դարեր շարունակ տևող ցեղասպանական միտմամբ քաղաքականության դրսևորումն է, կարծեց, թե սա «նախկիններ» կողմից իր իշխանության տակ դրված վերոգրյալ ականն է, և շտապեց թշնամական պետության ղեկավարի հետ սեպարատ բանակցությունների՝ «սահմանում զոհերի նվազեցման» և «օպերատիվ կապի հաստատման» մասին: Այսպես՝ հանդիպման արդյունքում Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայության տարածած պաշտոնական հաղորդագրության մեջ հենց այդպես էլ գրված էր. ***«Կողմերը հավատարմություն հայտնեցին ... կողմերի շփման գծում և Հայաստան-Ադրբեջան սահմանին միջադեպերը կանխելու հարցում հրադադարի ռեժիմի ամրապնդմանն ուղղված բանակցային գործընթացին: Կողմերը որոշեցին մեխանիզմներ ստեղծել համապատասխան մարմինների միջև օպերատիվ կապի հաստատման համար»***[91]: Հանդիպման արդյունքների մասին նույնական մտքեր է փոխանցել նաև Ն. Փաշինյանը[92]:

Այսպիսով՝ սկսած սահմանային միջադեպերի նվազեցումից՝ Լեռնային Ղարաբաղի թեման նոր իշխանությունների ձեռքում

« Սկսած սահմանային միջադեպերի նվազեցումից՝ Լեռնային Ղարաբաղի թեման նոր իշխանությունների ձեռքում ինստրումենտալիզացվում էր զուտ որպես ներքաղաքական պայքարի գործիք՝ հընթացս քանդելով ամբողջ հինը:

88 Ըստ ամենայնի՝ ինքը՝ Լ. Տեր-Պետրոսյանը ևս, 1998 թ.-ին կարծում էր, թե Արցախի հարցը միայն պատրվակ է իրեն իշխանությունից զրկելու համար, և որ իշխանության եկող նոր ուժերը, շատ չանցած, համաձայնություն են տալու նախկին բանակցային առաջարկներին: Այս կերպ կարելի է բացատրել նրա հրաժարականի տեքստի վերջում տեղ գտած «իսկ կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, և ով է իրականում ծախում այն» արտահայտությունը: Բացի Լ. Տեր-Պետրոսյանից՝ այս գաղափարները հարազատ են նաև նրա ճամբարակիցներին և հաճախ գիտական խոսքի քողի տակ հանդիպում են որոշ տեքստերում (տե՛ս օրինակ՝ Հովսեփյան Նժդեհ, Ստատուս-քվոյի հայկական ճարտարապետությունը. նոր ազգային գաղափարախոսություն, https://enlightngo.org/post/26292 (հղվել է 06.08.2022 թ.)):

89 Մամուլի հաղորդագրություն, 19.09.2018 թ., https://mil.am/hy/news/5585 (հղվել է 04.07.2022 թ.):

90 Սեպտեմբերի 22-ին զոհվել է ՊԲ զինծառայող, 22.09.2018 թ., https://razm.info/129033 (հղվել է 04.07.2022 թ.):

91 Prezidentin Mətbuat Xidmətinin məlumatı, 28.09.2018 թ., https://president.az/az/articles/view/30139 (հղվել է 04.07.2022 թ.):

92 Նյու Յորքում և Դուշանբեում ունեցած հանդիպումների մասին, 28.09.2018 թ., https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/501197140346520 (հղվել է 06.08.2022 թ.):

ինստրումենտալիզացվում էր զուտ որպես ներքաղաքական պայքարի գործիք՝ հընթացս քանդելով ամբողջ հինը: Կարելի է պնդել, որ հենց այս դեպքում եթե իրական ցանկություն լիներ սահմանում Ադրբեջանին զսպելու, կշեշտադրվեր Վիեննայի և Սանկտ-Պետերբուրգի պայմանավորվածությունների կարևորությունը: Արագ «հեղափոխական» արդյունքի համար թշնամու հետ սեպարատ բանակցությունների գնալով՝ նոր իշխանությունները դրեցին բանակցային ամբողջ ժառանգության քանդման հիմքը: Ըստ որում՝ նախքան քանդելը հայտարարվում էր դրա մասին՝ ***«ես բանակցությունները սկսել եմ ոչ թե Սերժ Սարգսյանի կետից, այլ իմ սեփական կետից»***[93], իսկ արդեն քանդվելուց հետո որպես արհավիրքի արդարացում բերվեց ***«նախկինից մնացած բանակցային ժառանգությունը»***: Այստեղ ակնհայտ է տրամաբանական հակասությունը:

Լեռնային Ղարաբաղի հարցը որպես ներքաղաքական պայքարի միջոց ինստրումենտալիզացնելու տրամաբանությամբ է պետք բացատրել նաև «հեղափոխական» իշխանությունների կարծեցյալ «ոչմիթիզականությունը»: Իրականում դա ոչ թե ոչմիթիզականություն էր, այլ նախկին էլիտային հակադրվելու և նախկինը ջնջելու ևս մեկ փորձ, որ նպատակ ուներ տիրապետող ազգային թեմայի հաշվին շահաբաժիններ հավաքելու հանրության աչքում: Իրական ոչմիթիզականության դեպքում նոր իշխանություններն առաջին հերթին ամուր կկառչեին առկա բանակցային ժառանգությանը, որտեղ ինքնորոշման իրավունքի շեշտադրումը և Լաչինի ու Քյալբաջարի շրջանների հանձնման փոխկապակցումն Ադրբեջանի կողմից Արցախի անկախության ճանաչման հետ միջազգայնորեն երաշխավորված ճանապարհ էին դեպի հաջորդական ձեռքբերումներ:

> **Իրական ոչմիթիզականության դեպքում նոր իշխանություններն առաջին հերթին ամուր կկառչեին առկա բանակցային ժառանգությանը, որտեղ ինքնորոշման իրավունքի շեշտադրումը և Լաչինի ու Քյալբաջարի շրջանների հանձնման փոխկապակցումն Ադրբեջանի կողմից Արցախի անկախության ճանաչման հետ միջազգայնորեն երաշխավորված ճանապարհ էին դեպի հաջորդական ձեռքբերումներ:**

Հայկական կողմի բանակցային հեղհեղուկությունը՝ սկսած հիմնարար սկզբունքների կամայական մեկնաբանությամբ (կամ հայտարարելով, որ այդ սկզբունքները տարբեր մեկնաբանության տեղիք են տալիս[94]),

93 Ես բանակցությունները սկսել եմ ոչ թե Սերժ Սարգսյանի կետից, այլ իմ սեփական կետից. Նիկոլ Փաշինյան, 08.04.2019 թ., https://www.youtube.com/watch?v=-CGtUWqCFys (հղվել է 06.08.2022 թ.):

94 Ես նոր բանակցող եմ. Փաշինյանը՝ Մադրիդյան սկզբունքների մասին, 19.03.2019 թ., https://www.youtube.com/watch?v=C3UaTrJkEJ4 (հղվել է 06.08.2022 թ.):

վերջացրած ինքնահնար «Մյունխենյան սկզբունքներով»[95], չէր կարող չտալ իր բացասական պտուղները: Ակնհայտ է, որ բանակցությունների ձախողման և ապակառուցողական լինելու մեղքը բարդվելու էր Հայաստանի վրա՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Այս մասին արդեն պատերազմից հետո բացահայտ խոսեց ռուսական կողմը՝ նշելով, որ *«... բանակցություններն ընթանում էին կանոնավոր կերպով, ընդհուպ մինչև 2018 թ., երբ Երևանն առաջ քաշեց նոր մոտեցումներ»*[96]:

Այսպիսով, բանակցային շարժընթացը երկու տարում փոխվեց հակառակ ուղղությամբ՝ արդեն աշխատելով Հայաստանի դեմ:

95 Մյունխենյան սկզբունքներ, 16.02.2020 թ., https://www.facebook.com/1378368079150250/posts/pfbid0inN8iba3NqUeomH1zA14KFcHwijYnBwXbYVA1F2Smh2ND835hKJWnKneuJrgdcTwl/?d=n (հղվել է 06.08.2022 թ.):

96 Ответ российского сопредседателя посла в Минской группе ОБСЕ...:

Թուրքիայի ռազմական ներկայությունը Եվրասիական տարածաշրջանում



ՄԱՍ 3
ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՄԵԾ ԽԱՂԸ». ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԵՌԱՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության դիտարկումն առանց տարածաշրջանային մեծ համաշարի, որում առանցքային դեր ունեն Թուրքիան և վերջինիս ռազմաքաղաքական նախաձեռնությունները, թույլ չի տա հասկանալ ո՛չ բանակցային գործընթացի համալիր բարդությունը, ո՛չ բուն հակամարտության էությունը:

2022 թ. հուլիսի 9-ին Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը, անդրադառնալով Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական համագործակցությանը, հայտարարել է. ***«Մեր աշխատանքներն իսկապես շարունակվում են որպես մեկ բանակ: ... Շատ հստակորեն ցույց ենք տալու «մեկ ազգ, երկու պետություն» իրականությունը»***[97]: Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավի կողմից Թուրքիա-Ադրբեջան դաշնակցությանը վերաբերող այս և նմանատիպ բազմաթիվ այլ հայտարարություններ ոչ միայն քաղաքական այսրոպեական նշանակությամբ կիրառվող հռետորաբանության դրսևորումներ են, այլև Թուրքիայի՝ Հարավային Կովկասում և անդին ունեցած արտաքին քաղաքական հայեցակարգի և դրանից բխող ռազմավարության պարզեցված բանաձևումներ: 2020 թ. Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում և դրանից հետո նորից լայնորեն կիրառվող «մեկ ազգ, երկու պետություն» բանաձևումը, սակայն, լիարժեք չի արտահայտում Թուրքիա-Ադրբեջան տանդեմի քաղաքական փոխհարաբերությունների ամբողջական բնույթը, հետևաբար նաև՝ Ադրբեջան-Հայաստան հակամարտության մեջ և մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հարցում Թուրքիայի իրական տեղն ու դերը:

Առկա քաղաքական հիմնական քննարկումներում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավոր ճանապարհների, կայուն խաղաղության հաստատման տարբերակների մշակումներում Թուրքիայի գործոնը սահմանափակվում է որպես միայն Հայաստան-Ադրբեջան հակամարտության մեջ սեփական շահերը հետապնդող կողմնակի պետություն, որն ունի դաշնակցային հարաբերություններ կողմերից մեկի և կոնֆլիկտային հարաբերություններ մյուսի հետ: Մինչդեռ այսպիսի սահմանափակումը, ըստ էության, չի արտացոլում թուրքական գործոնի ամբողջական կշիռը քաղաքական

97 Պատերազմն Ադրբեջանն է սկսել, Հայկական ալիք, 11.07.2022 թ., https://hayaliq.com/azerbaijanstartedthewar/ (հղվել է 04.08.2022 թ.):

դաշտում՝ անտեսելով վերջինիս դերն Ադրբեջանի (աշխարհա)քաղաքական սուբյեկտայնության և այդ սուբյեկտայնությունից բխող հիմնահարցերում: Հետևաբար՝ Լեռնային Ղաբարաղի խնդրի քննարկումները դառնում են ոչ լիարժեք՝ խեղաթյուրելով ուժերի հավասարակշռության ու քաղաքական հաշվարկների իսկությունը: Ավելին՝ հայկական կողմում Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ առկա երկու գերակա խոսույթները միայն հպանցիկ կերպով են անդրադառնում Թուրքիային՝ խնդիրը տեղայնացնելով և պայմանավորելով բացառապես Երևանի և Բաքվի նպատակադրումներով[98]: Գոյություն ունեցող խոսույթում հիշատակվում

> **Հայկական կողմում Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ առկա երկու գերակա խոսույթները միայն հպանցիկ կերպով են անդրադառնում Թուրքիային՝ խնդիրը տեղայնացնելով և պայմանավորելով բացառապես Երևանի և Բաքվի նպատակադրումներով:**

է նաև Թուրքիան՝ կրկին որպես գործընթացի շահառու, սակայն դրանով սահմանափակվում է վերջինիս՝ խնդրում ունեցած մասնակցության և հետապնդած նպատակների վերաբերյալ քննարկումը: Հենց այս «առանձնացած» խոսույթն է հիմք հանդիսանում նաև ԼՂ խնդրի վերաբերյալ հայաստանյան քաղաքական բանավեճերի և դրանց հիման վրա մշակվող ու իրականացվող քաղաքական ռազմավարությունների ու ծրագրերի համար:

Այսպես՝ ԼՂ խնդրի լուծման վերաբերյալ գերակա երկու խոսույթներից մեկի առաջամարտիկ Լ. Տեր-Պետրոսյանն իր մոտեցման հիմնական տեքստային դրսևորում հանդիսացող «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում քննարկում է ԼՂ խնդրի տարբեր կողմեր և դրանց հիման վրա առաջարկում ելակետային դրույթներ, որոնցում, սակայն, ոչ մի անդրադարձ չկա ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ առավել ևս Թուրքիայի հետապնդած նպատակներին[99]: Իսկ առանց հակառակ կողմի՝ խնդրի վերաբերյալ ունեցած պատկերացումների առարկայական ու համալիր քննարկման հնարավոր չէ կառուցել ճիշտ հաշվարկված և երկարաժամկետ աշխատող պատասխան մեխանիզմ:

Ուստի՝ անհրաժեշտ է նախ անդրադառնալ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական ուրվագծերին,

98 Հայաստանյան առկա գիտական և փորձագիտական գրականությունն այս խնդիրը մեծ մասամբ դիտարկում է որպես ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված անջատ, առանձին գոյություն ունեցող քաղաքական երևույթ, իսկ որոշ դեպքերում՝ Հարավային Կովկասի ենթատարածաշրջանի պարզ հակամարտություն, որի մի կողմում հայերն են (և Հայաստանը), իսկ մյուսում՝ ադրբեջանցիները (Ադրբեջանը):

99 Տեր-Պետրոսյան Լ., Պատերազմ, թե՞ խաղաղություն...:

ապա Ադրբեջան-Թուրքիա դաշնակցային հարաբերությունների էությանը և այնուհետ՝ Լեռնային Ղարաբաղի խնդրում ունեցած իրական դերին:

Լեռնային Ղարաբաղի խնդրի տեղը հայ-թուրքական հակամարտության մեջ

Ինչպես արդեն նշել ենք, Լեռնային Ղարաբաղի խնդիրը հայ-թուրքական երկարամյա հակամարտության միայն մեկ դրվագն է, քանի որ ինքնին խնդրի առաջացումը, իսկ ավելի մեծ իմաստով՝ Հարավային Կովկասի արևելյան հատվածում Ադրբեջան պետության ստեղծումը, զարգացումը և շարունակականությունը, ինչի պատճառով և առաջացել է Լեռնային Ղարաբաղի պատկանելիության խնդիրը, կապված է Օսմանյան կայսրության, ապա նաև վերջինիս քաղաքական իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության՝ այս տարածաշրջանի հանդեպ ունեցած ռազմաքաղաքական ծրագրերի և դրանց գործնական կիրառման հետ: Այլ կերպասած՝ եթե չլիներ Ադրբեջան պետություն այն տեսքով, որով ձևավորվել է 1918 թ. աշնանն Օսմանյան կայսրության մտահղացմամբ և անմիջական ռազմաքաղաքական մասնակցությամբ, չէր լինի նաև այն հարցը, թե ումն է Արցախը: Հստակ և որոշիչ դեր խաղալով Լեռնային Ղարաբաղի խնդրի ծագման մեջ՝ Թուրքիան ոչ միայն պարզապես գործոն է Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող հակամարտությունում, այլև այդ հակամարտության հարուցիչ է և պատերազմների մասնակից [100]:

> **Եթե չլիներ Ադրբեջան պետություն այն տեսքով, որով ձևավորվել է 1918 թ. աշնանն Օսմանյան կայսրության մտահղացմամբ և անմիջական ռազմաքաղաքական մասնակցությամբ, չէր լինի նաև այն հարցը, թե ումն է Արցախը: Հստակ և որոշիչ դեր խաղալով Լեռնային Ղարաբաղի խնդրի ծագման մեջ՝ Թուրքիան ոչ միայն պարզապես գործոն է Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող հակամարտությունում, այլև այդ հակամարտության հարուցիչ է և պատերազմների մասնակից:**

Այս հանգամանքի վերջին վառ ապացույցներից մեկը կարելի է համարել 2020 թ. դեկտեմբերին՝ Արցախյան երրորդ պատերազմում տարած հաղթանակից հետո՝ Բաքվում կազմակերպված ռազմական շքերթի ժամանակ, Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ելույթը, որտեղ առկա մտքերն ու ձևակերպումները

100 Демоян Г., նշվ. աշխ., էջ 7:

հստակ ուրվագծում են Թուրքիայի դերը և ինքնընկալումը Լեռնային Ղարաբաղի խնդրում: Այսպես՝ հիշատակելով Ադրբեջանի ու Թուրքիայի տարած համատեղ հաղթանակն Արցախյան երրորդ պատերազմում, Ռ. Թ. Էրդողանը նշել է. «***Այսօր այն օրն է, երբ փառավորվում են Նուրի փաշայի, Էնվեր փաշայի, Կովկասի իսլամական բանակի կտրիճ զինվորների հոգիները»***[101]: Հիշատակված օսմանյան ռազմաքաղաքական գործիչները 20-րդ դարասկզբին, ըստ էության, հղացել և իրագործել են Հարավային Կովկասում թյուրքական պետական միավորում ստեղծելու գաղափարը, որն ավելի մեծ՝ «պանթյուրքիզմ» կամ «պանթուրանիզմ» անունն ստացած քաղաքական գաղափարախոսության բաղկացուցիչ մասն էր: Ուստի՝ նշված անձանց պարբերական հիշատակումը[102] ժամանակակից թուրք գործիչների կողմից հերթական անգամ փաստում է, որ առնվազն կա որոշակի կապ ժամանակակից Ադրբեջանի՝ նախորդ դարում սկսված քաղաքական ծրագրի իրականացման հետ: Դրանից ավելի վաղ էլ և դրանից հետո էլ Ռ. Թ. Էրդողանը և Թուրքիայի այլ բարձրաստիճան պաշտոնյաներ մշտապես խոսել են Լեռնային Ղարաբաղի մասին՝ ընդգրկելով այն Թուրքիայի՝ մեծ տարածաշրջանում վարած քաղաքականության ծիրում: Այսպես՝ 2016 թ. հոկտեմբերին Ռ. Թ. Էրդողանը Ռիզե քաղաքում ելույթի ժամանակ, անդրադառնալով տարածաշրջանում Թուրքիայի քաղաքական առաջնահերթություններին, նշել է. ***«Մեր ֆիզիկական սահմաններն ուրիշ են, սրտի սահմանները՝ բոլորովին ուրիշ: … Հնարավո՞ր է առանձնացնել Ռիզեն Բաթումից: Ի՞նչպես կարելի է Էդիրնեն Սալոնիկից առանձին պատկերացնել: … Իրաք, Սիրիա, Լիբիա, Ղրիմ, Ղարաբաղ, Բոսնիա և այլ եղբայրական շրջաններով հետաքրքրվելը Թուրքիայի թե՛ պատասխանատվությունն է, և թե՛ իրավունքը: Թուրքիան միայն Թուրքիան չէ*** (ընդգծումը մերն է – խմբ.)***: Այն օրը, երբ մենք հրաժարվենք վերոհիշյալից, այդ օրը կլինի մեր անկախությունից ու ապագայից հրաժարվելու օրը»***[103]: Իսկ 2020 թ. փետրվարին Բաքվում Ռ. Թ. Էրդողանը հայտարարել է. ***«Ղարաբաղի հարցը որքան Ադրբեջանի, այդքան էլ մեր խնդիրն է»***[104]: 2018 թ. սեպտեմբերին Բաքվի՝ օսմանյան զորքերի կողմից գրավման 100-ամյակի առթիվ կազմակերպված զորահանդեսի ժամանակ Ռ. Թ. Էրդողանը հայտարարել է. ***«Լեռնային Ղարաբաղը, որն Ադրբեջանի ամենամեծ խնդիրն է, մեզ համար էլ նույնաստիճան խնդրի աղբյուր է»***[105]: 2020 թ. նոյեմբերին՝ Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում, Ռ. Թ. Էրդողանը Սամսուն քաղաքում

101 Türkiye ve Azerbaycan sırt sırta verdiği sürece zorlukları aşmaya, başarıdan başarıya koşmaya devam edecektir, https://www.tccb.gov.tr/haberler/410/123134/-turkiye-ve-azerbaycan-sirt-sirta-verdigi-surece-zorluklari-asmaya-basaridan-basariya-kosmaya-devam-edecektir- :

102 Թուրքիայի գրեթե բոլոր քիչ թե շատ կայացած քաղաքական գործիչները մշտապես անդրադառնում են հիշյալ պատմական դեմքերի ռազմաքաղաքական ժառանգության վերարժևորմանը:

103 Erdoğan: Türkiye sadece Türkiye değildir, https://www.hurriyet.com.tr/gundem/erdogan-turkiye-sadece-turkiye-degildir-40250602 (հղվել է 04.08.2022 թ.):

104 Cumhurbaşkanı Erdoğan: Karabağ Azerbaycan kadar bizim de meselemizdir, 25.02.2022 թ., https://www.aa.com.tr/tr/turkiye/cumhurbaskani-erdogan-karabag-azerbaycan-kadar-bizim-de-meselemizdir/1744575 (հղվել է 04.08.2022 թ.):

105 Bakü'nün Kurtuluşunun 100. Yıl Dönümü Töreninde Yaptıkları Konuşma, TCCB, 15.09.2018 թ., https://www.tccb.gov.tr/konusmalar/353/98629/baku-nun-kurtulusunun-100-yil-donumu-toreninde-yaptiklari-konusma (հղվել է 04.08.2022 թ.):

ելույթի ժամանակ հայտարարել է. ***«Սիրիայում, Լիբիայում, Ադրբեջանում մենք ենք մեր եղբայրների կողքին։ Միջերկրականից մինչև Սև ծով, Սիրիայից Լիբիա, Կիպրոսից Ղարաբաղ՝ ամեն տեղ նույն պատվավոր վարքագիծն ենք ցուցաբերել։ Առաջն Աստված՝ սրանից հետո էլ նույն ձևով շարունակելու ենք մեր ճանապարհը։ Կանգնել չկա, շարունակում ենք ճամփան»***[106]:

Ինչպես կարելի է նկատել կիրառված հռետորաբանությունից, Թուրքիայի համար Արցախը դասվում է այն շրջանների շարքին, որոնց հանդեպ Անկարան ունի հավակնություններ և որոնց ուղղությամբ մշակվում ու իրականացվում է ռազմականբաղադրիչով համապատասխան քաղաքականություն[107]: Վերջին երկու հարյուրամյակների քաղաքական իրադարձությունների շարժընթացը թույլ է տալիս անել հետևյալ ձևակերպումը՝ Թուրքիան Հարավային Կովկասը դիտարկում է որպես իր ազդեցության կարևորագույն գոտիներից մեկը, որը կարող է դրսևորվել նշված գոտում տնտեսական ու սոցիալ-մշակութային վերահսկողության հաստատումից մինչև ռազմաքաղաքական նվաճում: Ուստի՝ պատահական չէ, որ հնարավորության դեպքում ինչպես Սիրիայի կամ Իրաքի պարագայում, Թուրքիան հետևողականորեն աշխատանք է իրականացնում նաև այս ուղղությամբ: Արցախը և այնտեղ հայկական քաղաքական գործոնի առկայությունը ոչ միայն նվազեցնում են թուրքական ազդեցությունը, այլև լիարժեք կերպով փոխում են ամբողջ ենթատարածաշրջանի աշխարհաքաղաքական դասավորությունն ու կողմերի հնարավոր ներգրավվածությունը:

Նշված փաստի ընդդիմախոսները կա՛մ անտեսում են թուրքական գործոնը, կա՛մ լավագույն դեպքում Թուրքիայի այսպիսի հավակնությունները պայմանավորում են ոչ թե պետական քաղաքականությամբ, այլ մեկ անձի (այս դեպքում՝ Ռ. Թ. Էրդողանի) պատկերացումներով ու ցանկություններով, որոնք իբրև թե կավարտվեն այդ գործչի՝ ասպարեզից հեռանալու հետ: Մինչդեռ Թուրքիայի արտաքին քաղաքականության շարժընթացը դիտարկելիս կարելի է համոզվել, որ Ռ. Թ. Էրդողանը կամ որևէ այլ քաղաքական գործիչ ոչ թե պայմանավորում են քաղաքական հայեցակարգը, այլ միայն դրա որոշ դրվագները և իրականացման միջոցները, իսկ բուն արտաքին քաղաքական նպատակները մնում են նույնը:

106 Cumhurbaşkanı Erdoğan: Soğuklar bastırmadan yaraları sarmakta kararlıyız, TRT Haber, 01.11.2020 թ., https://www.trthaber.com/haber/gundem/cumhurbaskani-erdogan-soguklar-bastirmadan-yaralari-sarmakta-kararliyiz-527481.html (հղվել է 04.08.2022 թ.):

107 Թուրքիան ակտիվ ծավալապաշտական քաղաքականություն է իրականացնում իր գրեթե բոլոր սահմանների երկայնքով, որոնց որոշ մասի դեպքում կա ուղիղ ռազմական նվաճման գործիքակազմ (օրինակ՝ Սիրիայում և Իրաքում), իսկ այլ երկրների դեպքում կիրառվում է այսպես կոչված «փափուկ ուժի» մոտեցումը (օրինակ՝ տնտեսական կախվածության առաջացում Բալկաններում, Վրաստանում և այլուր): Թեմայով տե՛ս օրինակ՝ Çevik Salim, Turkey's Military Operations in Syria and Iraq, SWP Comment, https://www.swp-berlin.org/publikation/turkeys-military-operations-in-syria-and-iraq (հղվել է 04.08.2022 թ.):

Թուրքիայի արտաքին քաղաքականության էությունը. չհնացող պանթյուրքիզմ

1918 թ. Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո հաղթած երկրների կողմից պետության մասնատումը կանգնեցնելու նպատակով ձևավորված թուրքական ազգայնամոլական էլիտան համառ զինված պայքարից հետո 1923 թ. կարողանում է հասնել իր իշխանության հաստատմանը Փոքր Ասիա թերակղզու մեծ մասի վրա, որը կազմում էր նախկին կայսրության հիմնական հատվածը: Ազգայնական ուժերը մինչ այդ՝ 1920 թ. հունվարին, արդեն ընդունել էին «Ազգային ուխտ» (Misak-ı Milli) ուղենշային փաստաթուղթը, որը ձևակերպում էր այն նվազագույն սահմանները, որոնք պետք է հանդիսանային «Օսմանյան կայսրության անբաժանելի միասնություն կազմող տարածք»[108]: Այդ փաստաթուղթը Կարսի, Արդահանի և Բաթումի գավառները հայտարարում էր Թուրքիայի տարածք՝ փաստացի սահմանելով դրանք նվաճելու ուղղությամբ քաղաքական նպատակ, ինչին և հետևողականորեն սկսել են ձգտել հաջորդող տարիներին:

Այսպես՝ 1920 թ. աշնանն ազգայնամոլական ուժերը պատերազմ հայտարարեցին Հայաստանի Հանրապետությանը հետևյալ հիմնավորմամբ՝ *«բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես շարքից հանվի»*[109]: Ճուգահեռաբար պատերազմ էր մղվում Հունաստանի դեմ: Ճենքի ուժով և դիվանագիտական հմուտ պայքարի արդյունքում Թուրքիան կարողացավ զբաղեցնել մոտավորապես այն տարածքը, որն այսօր կազմում է Թուրքիայի Հանրապետության հիմնական սահմանները: Սակայն թուրքական պետությունը, չնայած հայտարարված քեմալական «խաղաղություն երկրում, խաղաղություն՝ աշխարհում» կարգախոսին, որը ենթադրում էր չեզոքության պահպանում և որևէ տարածքային հավակնության բացառում, անդադար պայքար էր մղում իր համար կենսական նշանակություն ներկայացնող երկրամասերի եթե ոչ լիարժեք նվաճման, ապա դրանք ազդեցության գոտու վերածելու համար:

> **Թուրքական պետությունը, չնայած հայտարարված քեմալական «խաղաղություն երկրում, խաղաղություն՝ աշխարհում» կարգախոսին, որը ենթադրում էր չեզոքության պահպանում և որևէ տարածքային հավակնության բացառում, անդադար պայքար էր մղում իր համար կենսական նշանակություն ներկայացնող երկրամասերի եթե ոչ լիարժեք նվաճման, ապա դրանք ազդեցության գոտու վերածելու համար:**

108 Սաֆրաստյան Ռուբեն, Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921), Երևան, 2019, էջ 61:

109 Թուրքիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Մուհթար բեյի 130 ծածկագիրը արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային (8 նոյեմբերի 1920 թ.)՝ մեջբերված ըստ Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 88:

հավակնության բացառում, անդադար պայքար էր մղում իր համար կենսական նշանակություն ներկայացնող երկրամասերի եթե ոչ լիարժեք նվաճման, ապա դրանք ազդեցության գոտու վերածելու համար: Այսպես՝ 1933 թ. հոկտեմբերին հանրապետության 10-ամյակի առթիվ իր ծրագրային ելույթում նախագահ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը, նկատի ունենալով ԽՍՀՄ տարածքում ապրող թյուրքախոս ժողովուրդներին և նրանց՝ Թուրքիայի հետ միավորելու անհրաժեշտությունը, նշել է. ***«Այսօր կերտելով նոր Թուրքիա՝ մենք հիմք ենք ստեղծում ապագա Մեծ Թուրքիայի համար»***[110]: Այս և նմանօրինակ այլ հայտարարությունները կիրառվում էին ոչ թե որպես ներքին լսարանին ուղղված քարոզչական հռետորաբանություն, այլ արտահայտում էին թուրքական քաղաքական վերնախավի աշխարհընկալումն ու տեսլականը, ուստի՝ հանդիսանում էին վարվող քաղաքականության հիմքը:

Այսպես՝ արդեն 1939 թ.-ին՝ նախագահ Իսմեթ Ինոնյուի կառավարման շրջանում, Թուրքիան կարողանում է իրեն բռնակցել Սիրիայի Ալեքսանդրետի գավառը (սանջակը), որը թույլ է տալիս ռազմավարական դիրք զբաղեցնել Միջերկրական ծովի հյուսիսարևելյան հատվածում, ինչպես նաև Սիրիայի մնացյալ՝ հարթավայրային հատվածի նկատմամբ: 1974 թ.-ին՝ շուրջ քսանամյա նախապատրաստությունից հետո, վարչապետ Բյուլենթ Էջևիթը Թուրքիայի զինված ուժերին հրամայում է ներխուժել Կիպրոս կղզի, որի արդյունքում մինչ օրս օկուպացված է Կիպրոսի Հանրապետության տարածքի շուրջ 40 %-ը:

2010-ական թվականներից, երբ Մերձավոր Արևելքում գերտերություններից որևէ մեկը չուներ բացարձակ գերակայություն, Թուրքիան նախաձեռնել է հարևան Սիրիայի և Իրաքի հյուսիսային շրջանների զինված նվաճումը, որի արդյունքում 2022 թ. դրությամբ օկուպացված է Սիրիայի սուվերեն տարածքից ավելի քան 8800 կմ² (երկրի տարածքի շուրջ 4.8%-ը), իսկ Իրաքում գտնվում են թուրքական ավելի քան 40 ռազմական բազաներ և հենակետեր, որոնց հարակից գոտիները գրավված են՝ հող նախապատրաստելով նոր ռազմագործողությունների համար[111]:

Թուրքիան նախաձեռնել է հարևան Սիրիայի և Իրաքի հյուսիսային շրջանների զինված նվաճումը, որի արդյունքում 2022 թ. դրությամբ օկուպացված է Սիրիայի սուվերեն տարածքից ավելի քան 8800 կմ² (երկրի տարածքի շուրջ 4.8%-ը), իսկ Իրաքում գտնվում են թուրքական ավելի քան 40 ռազմական բազաներ և հենակետեր, որոնց հարակից գոտիները գրավված են՝ հող նախապատրաստելով նոր ռազմագործողությունների համար:

110 Türkiye Büyük Millet Meclisi Genel Kurul Tutanağı, https://www5.tbmm.gov.tr//develop/owa/tutanak_g_sd.birlesim_baslangic?P4=3968&P5=B&page1=7&page2=7 (հղվել է 04.08.2022 թ.):

111 Turkey's continued invasions in the KRI are part of Turkey's broader regional strategy and expansion, Washington Institute, 18.05.22թ, www.washingtoninstitute.org/policy-analysis/turkeys-growing-military-presence-kurdish-region-iraq (հղվել է 04.08.2022թ.):

Վերջին երեք դեպքերում իրականացված ռազմագործողությունների հիմնավորման մեջ որպես նպատակ նշվել է «խաղաղության հաստատումը» և «ահաբեկչության դեմ պայքարը», սակայն դատելով գրավված շրջաններում իրականացված քաղաքականությունից և երկարաժամկետ դիրքավորումից՝ կարելի է պնդել, որ Թուրքիան չի պատրաստվում հեռանալ այս տարածքներից՝ համարելով դրանք իրենը և շարունակելով ամրանալ նշված շրջաններում:

Վերոնշյալ ռազմագործողությունները հնարավոր են դարձել երեք հիմնական պատճառով.

- Թուրքիայի կողմից պետության զարգացման համար իրեն հարակից տարածքների՝ որպես կենսական անվտանգության գոտու ամրագրում,
- պետական սահմաններից անդին սեփական ազդեցության գոտու ձևավորման հայեցակարգի մշտական առկայություն,
- աճող տնտեսական և ժողովրդագրական ռեսուրսներ,
- միջազգային հարաբերությունների արմատական փոփոխություններին և տարածաշրջանային փոխակերպումներին ճկուն արձագանք:

Թուրքիայի ներկայիս աշխարհաքաղաքական դիրքավորումն ուղղված է Մեծ Մերձավոր Արևելքի և Եվրասիայի տարածաշրջանում այդ երկրի կշիռը բարձրացնելուն, ինչը պետք է հենված լինի մի քանի գործոնների վրա.

- Թուրքիայի սահմանային անվտանգության բարձրացում՝ ի հաշիվ հարակից պետությունների տարածքներում ռազմական նվաճման ճանապարհով վերահսկելի գոտիների,
- Թուրքիայի ցամաքային և ծովային սահմանների երկայնքով (հիմնականում համընկնում է նախկին Օսմանյան կայսրության տարածքների հետ) ազդեցության գոտիների ձևավորում (առաջնահերթություն են Բալկանները, Հարավային Կովկասը, Արևելյան Միջերկրականի ափամերձ գոտիները, Պաղեստինը, Հյուսիսային Աֆրիկան, Միջին Ասիան),
- «թյուրքական աշխարհի ձևավորման» նպատակով դեպի Միջին Ասիա և Ռուսաստանի թյուրքալեզու և իսլամադավան ժողովուրդների տարածքներ ուղիղ և անխափան կապի ստեղծում,
- հարավից հյուսիս և արևելքից արևմուտք էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածքների տարանցման հանգուցային կետի վերածում,
- ռազմական ներկայության ապահովում հակամարտության գոտիներում,

- ռազմարդյունաբերության խթանում:

Թուրքիայի՝ մեծ տարածաշրջանում նոր ազդեցության գոտիների ձևավորումը չի սահմանափակվում միայն ռազմական գործիքակազմի կիրառմամբ՝ թեև վերջին տարիներին նախապատվությունը տրվում է հենց այս միջոցին՝ այդպիսով նպաստելով պետության քաղաքականության ռազմականացմանը (միլիտարիզացիային): Սրան զուգահեռ գործի են դրվում նաև «փափուկ ուժի» միջոցները՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես տնտեսական, էներգետիկ և տեղեկատվական գործիքակազմը: Տարածաշրջանում նման նախաձեռնողական քաղաքականությունը Թուրքիային հնարավորություն է տալիս դիրքավորվելու որպես առաջանցիկ պետություն և հավակնություն ունենալու դառնալ մերձավորարևելյան գերտերություն: Այս նպատակին հասնելու համար առանցքային նշանակություն ունի հարավկովկասյան ուղղությունը:

Անհրաժեշտ է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Թուրքիայի քաղաքական հավակնությունները հիմնական գծերով համընկնում են աշխարհաքաղաքական գլխավոր բևեռներից մեկի՝ հավաքական Արևմուտքի շահերի հետ: Մասնավորապես՝ հանդիսանալով ՆԱՏՕ-ի անդամ և տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարական դաշնակից՝ Թուրքիան հանդես է գալիս որպես արևմտյան շահի օպերատոր՝ զսպելով և հակակշռելով Մեծ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի և Իրանի հավակնությունները: Պատահական չէ, որ ԽՍՀՄ փլուզումից

> **Թուրքիայի քաղաքական հավակնությունները հիմնական գծերով համընկնում են աշխարհաքաղաքական գլխավոր բևեռներից մեկի՝ հավաքական Արևմուտքի շահերի հետ: Մասնավորապես՝ հանդիսանալով ՆԱՏՕ-ի անդամ և տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարական դաշնակից՝ Թուրքիան հանդես է գալիս որպես արևմտյան շահի օպերատոր՝ զսպելով և հակակշռելով Մեծ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի և Իրանի հավակնությունները:**

հետո Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպմանը հայտարարել է, որ իր երկիրը *«փոխում է տարածաշրջանային կարգավիճակը՝ հաշվի առնելով Անկարայի համար բացվող հնարավորությունները՝ ԱՊՀ երկրներում որոշելու մուսուլմանների քաղաքական ապագան»*[112]: Այս առումով Թուրքիան պետք է լուծեր երկու կարևորագույն խնդիր՝ ապահովել Արևմուտքի և նորանկախ

112 Дружиловский Сергей, Турция: привычка управлять, “Россия в глобальной политике”, Ноябрь/Декабрь 2005, 13.12.2005 թ., https://globalaffairs.ru/articles/turcziya-privychka-upravlyat/ (հղվել է 06.08.2022 թ.):

հանրապետությունների միջև շփումների անհրաժեշտ մակարդակը և համոզել վերջիններիս առաջնորդներին, որ Անկարան կարող է ծառայել Արևմուտքում ԱՊՀ մուսուլմանական երկրների շահերի ներկայացուցիչ[113]: Ինչպես նշել է Հարվարդի համալսարանի քաղաքագետ Սեմյուել Հանտինգտոնը, *«... մերժելով Մեքքան և մերժվելով Բրյուսելի կողմից՝ Թուրքիան ձեռնամուխ եղավ օգտվելու այն հնարավորությունից, որ բացվել էր Խորհրդային Միության փլուզումից հետո, և թեքվելու դեպի Տաշքենդ:* ***Նախագահ Օզալն ու այլ թուրք առաջնորդներ ունեին թյուրքական ժողովուրդների միության տեսլականը*** *և մեծ ջանքեր գործադրեցին Թուրքիայի՝ «Ադրիատիկից մինչև Չինաստանի սահմանները» ձգվող «մերձավոր արտասահմանում» «դրսի թուրքերի» հետ կապեր հաստատելու համար... Թուրքիայի շրջադարձը դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա պայմանավորված էր ոչ միայն թյուրքական պետությունների միության առաջնորդը լինելու երազանքով, այլև Իրանին և Սաուդյան Արաբիային դիմադրելու ցանկությամբ, որոնք կարող էին իրենց ազդեցությունը և իսլամական արմատականությունը տարածել այս տարածաշրջանում: ... Բացի այդ՝Թուրքիան հույս ուներ դիմագրավելու Ռուսաստանի ազդեցության վերականգնմանը: Ռուսաստանին ու իսլամին այլընտրանք ապահովելով՝ Թուրքիան կխթաներ ԵՄ-ից աջակցության իր պահանջները...»*[114]: Այս և նման բազմաթիվ այլ պնդումներ հուշում են, որ գործ ունենք Թուրքիա-Արևմուտք համագործակցության հետ, որի կողմերը թեև առանձին հարցերում կարող են ունենալ տարաձայնություններ, սակայն մեծ առումով տվյալ գործակցությունը կերպավորում է տարածաշրջանային շահերի լիարժեք համընկնում:

Թուրքիան Հարավային Կովկասում. դարավոր պայքարի մերօրյա հանգրվանը

Օսմանյան կայսրությունը, 16-րդ դարից սկսած, փորձում էր նվաճել Հարավային Կովկասի ենթատարածաշրջանը, որի համար պայքարում էր իրանական պետության դեմ: Ավելի ուշ՝18-րդ դարից, Հարավային Կովկասի համար պայքարին միացել է նաև Ռուսական կայսրությունը: Այսպիսով՝ արդեն ավելի քան 300 տարի այս ենթատարածաշրջանը վերոնշյալ երեք խոշոր տերությունների աշխարհաքաղաքական մրցակցության հիմնական առարկաներից և միաժամանակ՝թատերաբեմերից է: Ընդ որում՝ պետք է նշել, որ այս մրցակցությունը հետապնդում է նպատակներ, որոնք դուրս են նշված հատվածի աշխարհագրական սահմաններից: Կարելի է ասել, որ այս տարածաշրջանի հիմնական «արժեքը» Եվրասիական մեծ տարածքում

113 Նույն տեղում:

114 Huntington Samuel P., The Clash of Civilizations and the Remaking of World Order, Simon & Schuster, 2011, էջք 295-296:

իր աշխարհագրական դիրքն է: Կենտրոնական դիրք ունենալով Ասիայի և Եվրոպայի հատման գծում, ինչպես նաև հյուսիսային և հարավային Եվրասիաների համեմատ՝ Հարավային Կովկասը հանդիսանում է համաշխարհային քաղաքականության և տնտեսության առանցքային հանգույցներից մեկը: Այս «խաչմերուկի» նկատմամբ վերահսկողությունը,

> **Տարածաշրջանի հիմնական «արժեքը» Եվրասիական մեծ տարածքում իր աշխարհագրական դիրքն է: Կենտրոնական դիրք ունենալով Ասիայի և Եվրոպայի հատման գծում, ինչպես նաև հյուսիսային և հարավային Եվրասիաների համեմատ՝ Հարավային Կովկասը հանդիսանում է համաշխարհային քաղաքականության և տնտեսության առանցքային հանգույցներից մեկը:**

որը թույլ է տալիս ազդեցություն ունենալ Եվրասիայի աշխարհագրական ողջ տիրույթի վրա, դեպի իրեն է գրավում նաև այլ քաղաքական դերակատարների, որոնց շահերը ներկայացված են տարբեր ձևաչափերով:

Աշխարհագրությամբ թելադրված աշխարհաքաղաքական մրցակցությունը ընթանում է Հարավային Կովկասի ժողովուրդների և պետությունների միջև տեղական պայքարի պայմաններում: Տեղական հակամարտային միջավայրը և գլոբալ մրցակցությունը միմյանց փոխլրացնում են՝ ստեղծելով Հարավային Կովկասի բարդ ռազմաքաղաքական լանդշաֆտը: Հենց սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ որոշ հետազոտողներ 2020 թ. Ադրբեջանի կողմից ՀՀ և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը բնութագրում են որպես «տեղական նշանակության համաշխարհային պատերազմ»[115], իսկ Հարավային Կովկասի համար գլոբալ մրցակցությունը՝ «նոր մեծ խաղ»[116]:

Օսմանյան կայսրությունը հատկապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ինտենսիվ քաղաքականություն էր վարում Հարավային Կովկասը նվաճելու համար: Դա պայմանավորված էր օսմանյան քաղաքականության՝ դեպի արևելք շրջադարձով. նպատակ էր դրված ընդլայնել կայսրության տարածքն ի հաշիվ ոչ թե արևմտյան հարևանների, այլ արևելյան տարածքների: Եվրոպայում ազգայնականության տարածման հետ Օսմանյան կայսրության երիտթուրքական վերնախավը տեղայնացրեց այս գաղափարախոսությունը՝ դնելով թյուրքական ազգայնականության հիմքը, որի արտաքին քաղաքական հայեցակարգը

115 «Война в Карабахе — это только часть большого противостояния между Россией и Турцией», Эксперт, 18.10.2021 թ., https://expert.ru/expert/2021/43/voyna-v-karabakhye-eto-tolko-chast-bolshogo-protivostoyaniya-mezhdu-rossiyey-i-turtsiyey/ (հղվել է 04.08.2022 թ.):

116 Kamrava M. (ed.), The Great Game in West Asia, Oxford University Press, 2017, էջ 368:

դարձավ պանթյուրքիզմը կամ պանթուրանիզմը: Վերջինս ենթադրում էր կայսրության ծավալում ի հաշիվ թյուրքախոս բնակչության, որոնց մեծամասնությունն այդ ժամանակ ապրում էր Ռուսական կայսրության վերահսկողության ներքո: Այդ ճանապարհին աշխարհագրական տեսանկյունից որպես հիմնական հենակետ պետք է ծառայեր Հարավային Կովկասը: Տիրելով այս տարածաշրջանին՝ օսմանցիների համար մեծ հնարավորություններ էին բացվում դեպի Հյուսիսային Կովկաս, Իրանի հյուսիս և Անդրկասպյան գոտի:

Տիրելով այս տարածաշրջանին՝ օսմանցիների համար մեծ հնարավորություններ էին բացվում դեպի Հյուսիսային Կովկաս, Իրանի հյուսիս և Անդրկասպյան գոտի:

Օգտվելով Ռուսական կայսրության թուլացման պատճառով ստեղծված բարենպաստ միջավայրից՝ օսմանյան վերնախավը կարողացել է նշված երկրամասում ստեղծել և մոբիլիզացնել տեղական թյուրքական վերնախավ, որը և հիմք դարձավ 1918 թ. մայիսին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ստեղծման՝ որպես թուրքական քաղաքական նախագիծ Հարավային Կովկասում[117]: Ըստ երիտթուրքական մտահղացման՝ Առաջին աշխարհամարտում պետք էր հասնել «պարսկական և ռուսական Ադրբեջանների գրավմանը»[118]: Օսմանյան կայսրությունը մինչև Մուդրոսի զինադադարը (1918 թ. հոկտեմբեր) իր բանակի և մասամբ նաև տեղական թրքության մի շարք կազմավորումների շնորհիվ կարողացել է հաստատել մուսավաթական իշխանությունն Հարավային Կովկասի արևելյան հատվածում՝ նվաճելով Գանձակ (Գյանջա) և Բաքու քաղաքները: Այս նույն շրջանում խնդիր էր դրված լիարժեք չեզոքացնել տարածաշրջանում հայկական քաղաքական գործոնը, որը, չնայած վերապրած ցեղասպանությանը, շարունակում էր էական դեր խաղալ տարածաշրջանում և, ըստ թուրք ռազմավարների, խոչընդոտել Օսմանյան կայսրություն-Ադրբեջան ցամաքային կապի ապահովումը, իսկ ավելի լայն առումով՝ Օսմանյան կայսրության դեպի արևելք կայուն ծավալումը: Պատմաբան Առնոլդ Թոյնբին նշում է, որ այս շրջանում օսմանյան վերնախավի *«ծրագիրը նախատեսում էր ազատվել բոլոր ոչ թյուրքախոս ժողովուրդներից, որոնք բաժանում էին Անատոլիայի թուրքերին Բաքվի և Ադրբեջանի* (Արաքսից հարավ ընկած իրանական Ատրպատականի – խմբ.) *թյուրքերից»*[119]: Իսկ Բաթումի բանակցությունների ժամանակ օսմանյան հայտնի գաղափարախոս Բեհաէդդին Շաքիրը

117 Ռուբէն, Հայաստան եւ Ատրպէճան, «Հայրենիք», 5(8), 1927 թ., էջ 72:

118 Göl Ayla, Turkey facing East. Islam, Modernity and Foreign Policy, Manchester University Press, 2017, էջ 111:

119 Toynbee Arnold, Turkey. A Past and A Future, Project Gutenberg, https://www.gutenberg.org/cache/epub/10145/pg10145.html (հղվել է 04.08.2022 թ.):

հայ պատվիրակ Ալեքսանդր Խատիսյանին ասել է. ***«Հայերը ... կանգնած են մեր համիսլամական և համաթուրքական սրբազան իդեալների իրականացման ճանապարհին, և մենք անխուսափելիորեն կբախվենք նրանց հետ»***[120]: Նույն ժամանակ օսմանյան զորահրամանատար Վեհիբ փաշան, քարտեզի վրա նկարագրելով թուրքական նպատակները, դիմում է հայկական պատվիրակությանը հետևյալ բացատրությամբ. ***«Դուք տեսնում եք, որ ճակատագիրը քաշում է Թուրքիային արևմուտքից արևելք: Մենք հեռացանք Բալկաններից, հեռանում ենք նաև Աֆրիկայից, բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք: Այնտեղ են մեր արյունը, մեր կրոնը ու լեզուն: Եվ սա տարերային ձգողություն ունի. մեր եղբայրները Բաքվում, Դաղստանում, Թուրքիստանում և Ադրբեջանում են: Մենք պետք է ճամփա ունենանք դեպի այնտեղ: Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճանապարհին: ... Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք եք դառնում մեզ իջնելու Կուրի հովիտը և գնալու Բաքու: ... Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճամփայ տաք: Ահա թե ո՛րտեղ է մեր հիմնական վեճը: Մեզ պետք են երկու լայն ճամփաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներին առաջ շարժվելու և պաշտպանվելու: Մի ճամփան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ տանում է դեպի Գանձակ, մյուսը Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով գնում է Կուրի հովիտ: Դուք կարող եք մնալ դրանց մեջտեղում, այսինքն՝ Նոր-Բայազետի և Էջմիածնի շուրջ»***[121]:

Երիտթուրքական կառավարման անկումից հետո թե՛ ընդհատակ անցած երիտթուրք պարագլուխները, թե՛ նորելուկ քեմալական շարժման ղեկավարները հետամուտ էին լինում Ադրբեջան պետական միավորի պահպանմանն ու նվաճմանը, իսկ վատթարագույն դեպքում՝ Թուրքիայի հետ ուղիղ ցամաքային կապի ապահովմանը: 1919 թ. դեկտեմբերին քեմալական ղեկավարությունը հրահանգել է Ադրբեջանում օսմանյան զորքերի հրամանատարներից Հալիլ փաշային, որ վերջինս ապահովի «Անատոլիան Ադրբեջանին կապող ռազմավարական միջանցքը» (Նախիջևանի և Սյունիքի միջով)[122]: 1920 թ. սեպտեմբերին Մուստաֆա Քեմալը հեռագրում է ռազմական գործիչ Ալի Ֆուաթ Ջեբեսոյին. ***«Հայերի դեմ բարենպաստ պատերազմ սկսել և չհրաժարվել Ադրբեջանը Թուրքիային միավորելու մտքից»***[123]: Ի վերջո բոլշևիկյան Ռուսաստանի

120 «Հայերը ... կանգնած են մեր համիսլամական եւ համաթրքական սրբազան իտէալներու իրականացման ճամբուն վրայ, եւ մենք անխուսափելիօրէն կը բաղխինք անոնց հետ» (Խատիսեան Ալեքսանդր, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպագրութիւն,Պէյրութ, 1968, էջ 77):

121 «Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրպէյջան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ Հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: ... Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Պաքու: ... Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբայ տաք: Ահա թէ ո՛ւր է մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու եւ պաշտպանուելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ, միւսը՝ Ս›երթայ Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն Նոր-Պայազիտի եւ Էջմիածնի շուրջը» (նույն տեղում, էջ 86):

122 Musayev İsmayıl, Azerbaycan-Türkiye ilişkileri (1917-1922 yılları), Bakü Üniversitesi Yayınevi, Bakü, 1998, էջ 23:

123 Демоян Г., նշվ. աշխ., էջ 57:

կողմից Ադրբեջանի նվաճման վտանգը հասկանալով՝ քեմալականները որդեգրեցին պրագմատիկ քաղաքականություն և նախընտրեցին, որ Ադրբեջանը որպես առանձին միավոր մտնի խորհրդային կազմավորման մեջ՝ այդպիսով երաշխավորելով քաղաքական այս ծրագրի երկարակեցությունը: Միաժամանակ անհրաժեշտ ջանքեր գործադրվեցին, որ Թուրքիան և Ադրբեջանը բաժանող հատվածը հնարավորինս փոքր լինի: Մասնավորապես՝ Նախիջևանի հարցում քեմալականները հետամուտ եղան, որ այն ոչ մի դեպքում չանցնի Հայաստանին, ինչն ամրագրվեց 1921 թ. Մոսկվայի պայմանագրով: Բանակցությունները վարող թուրքական պատվիրակության ղեկավար Յ. Քեմալին ուղղված իր հրահանգում Մ. Քեմալը նշել էր. ***«Նախիջևանը թյուրքական դարպասն է: Այս հանգամանքը ուշադրության կենտրոնում պահելով՝ արե՛ք առավելագույնը»***[124]:

Կարճաժամկետ առումով Թուրքիայի համար Ադրբեջանի հետ կապող և Նախիջևանի, Սյունիքի և Արցախի մերձարաքսյան հովտով ձգվող միջանցքը պետք է ապահովեր անհրաժեշտ ցամաքային անխափան հաղորդակցություն խորհրդային տարածքների հետ: Միջնաժամկետ առումով այդ ճանապարհը պետք էր Անտանտի դեմ բոլշևիկներից ռազմական և ֆինանսական օգնություն ստանալու համար[125], իսկ արդեն երկարաժամկետ հեռանկարում սա հնարավորություն էր տալու կապվել թյուրքական քաղաքական նախագիծ հանդիսացող Ադրբեջանի հետ, ապա այնտեղից նաև՝ դուրս գալ դեպի Միջին Ասիայի ու Մերձվոլգյան շրջանի, Հյուսիսային Իրանի և Հյուսիսային Կովկասի թյուրքախոս և իսլամադավան ժողովուրդներով բնակեցված տարածքներ:

Խորհրդային տարիներին ևս Թուրքիան չէր հրաժարվում Ադրբեջանի ու Հարավային Կովկասի հանդեպ հավակնություններից, սակայն գործուն քայլեր սկսել է իրականացնել 1980-ական թվականներին, երբ ակնհայտ է դարձել, որ խորհրդային իշխանությունը թուլանում է, և գոյանում է ուժի վակուում: Վերջինս լցնելու թուրքական պատրաստակամությունը համընկավ դաշնակից Արևմուտքի շահերի հետ: Ինչպես նշում է ԱՄՆ նախագահների խորհրդական, քաղաքագետ Զբիգնև Բժեզինսկին, Թուրքիայի համար առավել կարևոր է Ադրբեջանի աշխարհագրական դիրքը, քանի որ ***«Կենտրոնական Ասիայի պետությունների անկախությունը կարելի է դիտարկել ըստ էության անիմաստ երևույթ, եթե Ադրբեջանը ամբողջությամբ ենթակա լինի մոսկովյան վերահսկողությանը»***[126]: Թուրքիան փորձել է առավելագույնս օգտվել ստեղծված աշխարհաքաղաքական քաոսից և ձեռնամուխ է եղել Ադրբեջանի հետ միասին Հարավային Կովկասի

124 Atnur İbrahim Ethem, Mustafa Kemal (Atatürk) ve Nahçıvan, Erdem Dergisi, 1998, C. 11, S. 32, էջ 369, https://dergipark.org.tr/tr/download/article-file/687301 (հղվել է 04.08.2022 թ.):

125 Քեմալականների մեծ մասը կարծում էր, որ բոլշևիզմը կարելի է օգտագործել ազգային շահերի սպասարկման համար: Տե՛ս՝ Göl A., նշվ. աշխ., էջ 118:

126 Brzezinski Zbigniew, The Grand Chessboard. American Primacy and Its Geostrategic Imperatives, Basic Books, 1997, էջք 46-47:

վրա ազդեցության տարածմանը: Սակայն Հայաստանի և Արցախի Հանրապետությունների դիմադրությունը, ինչպես նաև Ռուսաստանի ազդեցության աստիճանական վերականգնումն ու սեփական ռեսուրսների սահմանափակությունը Թուրքիային հնարավորություն չտվեցին ԽՍՀՄ փլուզման առաջին իսկ տարիներին հասնելու սահմանված նպատակներին:

Այսօր էլ Թուրքիայի նպատակները Հարավային Կովկասում կարելի է սահմանել հետևյալ կետերով.

- Հարավային Կովկասում ստեղծել ռազմական, քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային բաղադրիչներով սեփական ազդեցության գոտին՝ հեռահար նպատակ ունենալով նաև տարածքային նվաճումները,
- ապահովել ցամաքային անխափան կապ Ադրբեջանի Հանրապետության հետ,
- զսպել և հակազդել Իրանի և Ռուսաստանի՝ տարածաշրջանում առաջխաղացմանն ու ազդեցության մեծացմանը,
- ստեղծել «անվտանգության գոտի» իր արևելյան սահմանների երկայնքով, այդ թվում՝ ի հաշիվ Հայաստանի,
- վերահսկել տարածաշրջանային բոլոր ենթակառուցվածքների (այդ թվում՝ էներգակիրների տարանցման) կառուցումն ու շահագործումը,
- բացառել տարածաշրջանում ինքնուրույն ռազմաքաղաքական միավորի (առանձին պետություն կամ դաշինք) ձևավորումն ու գոյությունը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Թուրքիայի համար Ադրբեջանը մշտապես դիտարկվել է որպես հենակետ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում (Կենտրոնական Ասիա, Հյուսիսային Իրան, Հյուսիսային Կովկաս, Մերձվոլգյան շրջան և այլն) թյուրքախոս ժողովուրդների միավորման և նրանց շուրջ թուրքական ազդեցության գոտու կառուցման համար: Իսկ հայկական Արցախը, Սյունիքի հետ միասին կազմելով մեկ միասնական աշխարհագրական միավոր, գերակա և խափանիչ դիրք ուներ թշնամական այս նկրտումների ճանապարհին:

> **Թուրքիայի համար Ադրբեջանը մշտապես դիտարկվել է որպես հենակետ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում (Կենտրոնական Ասիա, Հյուսիսային Իրան, Հյուսիսային Կովկաս, Մերձվոլգյան շրջան և այլն) թյուրքախոս ժողովուրդների միավորման և նրանց շուրջ թուրքական ազդեցության գոտու կառուցման համար:**

Կարևոր է արձանագրել նաև, որ Թուրքիայի՝ Հայաստանի Հանրապետության հանդեպ վերաբերմունքը բխում է ոչ թե

Հայաստանի բռնած քաղաքական հետագծից, ինչպես փորձում են ներկայացնել Հայաստանում թուրքական կողմնորոշում ունեցող հրապարակախոսական և քաղաքական շրջանակները, այլ սեփական աշխարհաքաղաքական նպատակներից: Դրանք հստակ են և չեն փոխվել վերջին առնվազն 120 տարվա ընթացքում, հիմնված են աշխարհագրական և ժողովրդագրական գործոնների ստեղծած իրականության վրա: Հաշվի առնելով տարածաշրջանում առկա վերջին տասնամյակի փորձը՝ կարելի է պնդել, որ Թուրքիան հնարավորության պարագայում իրականացնելու է իր առջև դրված մարտավարական և ռազմավարական խնդիրները՝ անկախ դրա իրավական հիմնավորվածության աստիճանից կամ միջազգային պայմանավորվածությունից:

Ասվածի վառ ապացույցը կարելի է համարել 2010 թ.-ից հետո Սիրիայի հանդեպ թուրքական քաղաքականությունը: Եթե 2009 թ. Սիրիա-Թուրքիա հարաբերություններում «խաղաղության և եղբայրության» ժամանակաշրջան էր հայտարարված, ապա դրանից ընդամենը մեկ տարի անց Թուրքիան հանդես էր գալիս Սիրիայի հանդեպ թշնամական դիրքերից, իսկ ավելի ուշ՝ 2016 թ.-ից, թուրքական զինված ուժերն սկսեցին սեփական ռազմագործողությունը Սիրիայի հյուսիսային շրջաններում, որը շարունակվում է մինչ օրս:

Եթե 2009 թ. Սիրիա-Թուրքիա հարաբերություններում «խաղաղության և եղբայրության» ժամանակաշրջան էր հայտարարված, ապա դրանից ընդամենը մեկ տարի անց Թուրքիան հանդես էր գալիս Սիրիայի հանդեպ թշնամական դիրքերից, իսկ ավելի ուշ՝ 2016 թ.-ից, թուրքական զինված ուժերն սկսեցին սեփական ռազմագործողությունը Սիրիայի հյուսիսային շրջաններում, որը շարունակվում է մինչ օրս:

Այստեղ առանձնահատուկ կերպով պետք է նշել, որ Թուրքիան մշտապես Հայաստանի հետ հարաբերությունները դիտարկել է ոչ թե տնտեսական տիրույթում, այլ քաղաքական: Այսպես, 2021 թ. սեպտեմբերին, անդրադառնալով այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» բացման թեմային, Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը հայտարարել է. ***«Զանգեզուրի միջանցքի բացման հարցը քաղաքական հարց է»***[127]: Սա դրսևորվել է նաև ֆուտբոլային դիվանագիտության ժամանակ Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշմամբ և «մի քանի ղուռուշ առևտրի» համար Ադրբեջանի հետ հարաբերությունները փչացնել չցանկանալով:

Խորհրդային միության փլուզումից և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Թուրքիան բազմաթիվ փորձեր է

127 Эрдоган: Открытие Зангезурского коридора является политическим вопросом, 1news.az, https://1news.az/news/20210919021021137-Erdogan-Otkrytie-Zangezurskogo-koridora-yavlyaetsya-politicheskim-voprosom (հղվել է 04.08.2022 թ.):

ձեռնարկել Հարավային Կովկասում իր ազդեցությունը մեծացնելու՝ ի հաշիվ Արցախում հայկական շահերի և ՀՀ դեմ իրականացվող քաղաքականության: Սակայն մինչև 2020 թ. այդ փորձերն ավարտվել են անհաջողությամբ: Թուրքիան 2020 թ.-ից հետո մեծացրել է Հայաստանի վրա իր ազդեցության լծակները և փորձում է առավելագույն գերակա դիրքի հասնել:

Այսպիսով՝ մինչև 2018 թ. գոյություն ունեցող իրավիճակը, երբ Հայաստանը կարողանում էր Թուրքիային հակազդել և ստեղծել բարենպաստ իրավիճակ, ոչ թե Անկարայի բարյացակամության կամ համապատասխան ծավալապաշտական ցանկության բացակայության արդյունքն էր, այլ հայկական կողմից հետևողական հակազդեցության:

Մինչև 2018 թ. գոյություն ունեցող իրավիճակը, երբ Հայաստանը կարողանում էր Թուրքիային հակազդել և ստեղծել բարենպաստ իրավիճակ, ոչ թե Անկարայի բարյացակամության կամ համապատասխան ծավալապաշտական ցանկության բացակայության արդյունքն էր, այլ հայկական կողմից հետևողական հակազդեցության:

Սա իր հերթին նշանակում է, որ Հայաստանի այդպիսի դիմադրողական քաղաքականության բացակայության դեպքում բարենպաստ իրավիճակը չի վերարտադրվելու ինքն իրեն, ընդհակառակը՝ ճանապարհ է բացելու Թուրքիայի ագրեսիայի առաջ: Միաժամանակ սա ենթադրում է, որ անկախ այն հանգամանքից, թե որքան է Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերություններում ինքն իրեն ընկալում կառուցողական և համագործակցության պատրաստ երկիր, այդ թվում՝ գնալով միակողմանի զիջումների՝ Թուրքիան Հայաստանի և մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հարցում առաջնորդվում է սեփական պատկերացումներով, որոնք, ինչպես վերը ցույց տվեցինք, հիմնված են սեփական անվտանգային միջավայրի և տարածաշրջանային գերտերության մասին ինքնընկալումների վրա: Ուստի՝ Թուրքիայի առաջ զիջումների գնալը հանգեցնելու է ոչ թե փոխզիջումային հանգրվանի, այլ ուժեղացնելու է նոր զիջումների պահանջը և նվազեցնելու է դրանց դիմադրելու

Թուրքիայի առաջ զիջումների գնալը հանգեցնելու է ոչ թե փոխզիջումային հանգրվանի, այլ ուժեղացնելու է նոր զիջումների պահանջը և նվազեցնելու է դրանց դիմադրելու հնարավորությունները:

հնարավորությունները: Սրա լավագույն վկայությունը 1921 թ. Նախիջևանի հարցում փաստացի զիջումն էր թյուրքական կողմերին, որի արդյունքում,

ինչպես վերը ցույց տվեցինք, հաշված տասնամյակների ընթացքում Նախիջևանում հայ չմնաց: Այս առումով պետք է նաև արձանագրել, որ հայ-թուրքական հակամարտությունը անդադար գոյություն ունեցող խնդիր է, որովհետև աշխարհագրական գործոնով թելադրված՝ իրար են հակադրվում երկու կողմերի գոյաբանական շահերը, որոնց սպասարկումը պետության մշտական պարտականությունն է: Իսկ սա նշանակում է, որ Արցախյան շարժումից ի վեր՝ մինչև 2020 թ., Հայաստանը հայ-թուրքական հակամարտությունում հաղթող կողմ էր՝ հաջողությամբ հակազդելով Թուրքիայի ծավալապաշտությանը:

ՄԱՍ 4
ՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Ինչո՞ւ «դեբիտը չհամընկավ կրեդիտի հետ»

Լեռնային Ղարաբաղի հակամարտության դիտարկումը ժողովուրդների ինքնորոշման և սահմանների անխախտելիության սկզբունքների տեսանկյունից կարգավորման գործընթացում ստեղծում է երկու հարթություն՝ կարգավիճակի հարց և սահմանների խնդիր: Այս համատեքստում մնացյալ խնդիրները (օրինակ՝ փախստականների վերադարձը) մեծ մասամբ դառնում են ածանցյալ այդ երկու հարթություններից: Նման մոտեցումը իրականության պարզունակացում է, քանի որ անմիջապես առանձնացնում է ֆունդամենտալ խնդիրները, որոնք ընկած են ցանկացած էթնոքաղաքական հակամարտության հիմքում: Ավելի լայն դիտարկման դեպքում կարելի է գալ այն պարզ եզրահանգման, որ Հարավային Կովկասում առկա բոլոր հակամարտություններն էթնոքաղաքական են, որտեղ օրինակ տնտեսությունը միայն ուղեկցող գործոն է[128]: Այս պատճառով էլ էթնոքաղաքական հակամարտության քաղաքական բաղադրիչի տեխնիկական լուծման փնտրտուքը չի երաշխավորում և չի նշանակում հակամարտության լիարժեք կարգավորում: Ավելին՝ այն ստեղծում է խաղաղության պատրանք, որն ավելի վտանգավոր իրավիճակ է, քանի որ կողմերից և ոչ մեկը պատրաստ չէ ապագայում դիմագրավելու արդեն էթնիկական հողի վրա հակամարտության վերաբռնկման հետևանքներին:

Կոնստրուկտիվիզմի և ռեալիզմի յուրատեսակ համակցում հանդիսացող անվտանգայնացման տեսության հեղինակները պետությունը դիտարկում են երեք բաղադրիչներից կազմված մեկ քաղաքական միավոր՝ գաղափար, ֆիզիկական հենք և ինստիտուտներ: Վերջիններիս կարծիքով՝ որպես կանոն պետությունը միաձույլ պահող գաղափարն ազգայնականությունն է[129]: Հարավային Կովկասում, ինչպես և Բալկաններում, ազգերը վերաճում էին ռազմական անվտանգության օբյեկտների: Բացի նրանից, որ դա տեղի է ունեցել նախկինում էթնիկական հակասությունները ճնշող արտաքին ուժի կամ միասնական կենտրոնի վակուումիզացիայի արդյունքում՝ կարևոր է ուշադրություն դարձնել նաև մոտիվացիայի վրա: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղում չի եղել կենտրոնի կողմից անարդար կերպով շահագործվող ահռելի քանակի ռեսուրս, որը

128 Cornell Svante, Small Nations and Great Powers. A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, Caucasus World, 2000, էջ 40:

129 Buzan Barry, People, States and Fear. National Security Problem in International Relations, Wheatsheaf Books, 1983:

դրդած լիներ տեղի բնակչությանն անցկացնել հանրաքվե՝ կենտրոնացնելու բոլոր հարստություններն իր ձեռքում: Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների զարգացման տրամաբանությունը բերում է այն ըմբռնմանը, որ հենց քաղաքական կարգավորման խնդիրն է դարձել էթնիկական հիմքի վրա հակասությունների վերնաշենքը:

Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների զարգացման տրամաբանությունը բերում է այն ըմբռնմանը, որ հենց քաղաքական կարգավորման խնդիրն է դարձել էթնիկական հիմքի վրա հակասությունների վերնաշենքը:

Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման նպատակը հիմնված էր մեկ միասնական ադրբեջանական պետության կազմում բնակության անհեռանկարայնության վրա, ինչն իր հերթին բխում էր Չարդախլուում, Հադրութում, Սումգայիթում, Գանձակում (Կիրովաբադ), Բաքվում և Մարաղայում տեղի ունեցած իրադարձություններից: Հենց սա էր հայկական (արցախյան) կողմի հիմնական մոտիվացիան: Ադրբեջանական իշխանությունների թողտվությամբ, երբեմն էլ՝ ուղիղ կամ անուղղակի աջակցությամբ, էթնիկ հիմքով մի խմբի նկատմամբ ուժի կիրառման սպառնալիքը և բռնության ուղղակի կիրառումն անհնարին էին դարձրել մեկ միասնական քաղաքական միավորի շրջանակներում համակեցությունը:

Իսկ Ադրբեջանի մոտիվացիան այլ էր: Ինչպես ցանկացած երիտասարդ պետություն, ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանն զբաղված էր նոր կորդինատային համակարգում իր տեղի փնտրտուքով: Հանձին Մոսկվայի՝ կենտրոնի ազդեցության նվազումն ստեղծեց գաղափարների վակուում, որն էլ օրինաչափորեն առաջին հերթին փորձում էր լցնել Թուրքիան: Փաստորեն, շարունակվող հայ-թուրքական հակամարտությունը, որն իր բնույթով ավելի բարդ էր, սկսեց աստիճանաբար տարածվել նաև հայ-ադրբեջանական հակամարտության վրա, ինչը դրսևորվեց այդ թվում Անկարայի կողմից Հայաստան-Թուրքիա սահմանի միակողմանի փակմամբ: Այս միտման՝ սոցիալական կոնստրուկտիվիզմի տեսանկյունից մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում կարելի է նկատել, որ ինքնության ձևավորման գործընթացը հենվում էր պատմական հիշողության վրա: Արդյունքում մշակույթի և լեզվի պատմական ընդհանրությունը հանգեցրին խորհրդային շրջանում ձևավորված ադրբեջանական ազգային ինքնության մեջ թյուրքական պատումների աստիճանական գերակայությանը: Ըստ որում՝ վարչատարածքային բաժանման պայմաններում էթնիկ քաղաքական միավորների, ինչպես նաև քաղաքական, բիզնես և այլ էլիտաների կազմում այլ ինքնության կրողների առկայությունը և՛ Թուրքիայում, և՛ Ադրբեջանում ընկալվում

էր որպես հնարավոր սպառնալիք ոչ միայն ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, այլև ինքնության համար: Երկու գործընթացները՝ թյուրքական ինքնության ուժեղացումը և դրանց հանդեպ առկա սպառնալիքներին հակազդումը, հանգեցրին այդ սպառնալիքներից «պաշտպանության» ապահովման հստակ միջոցների նախաձեռնման անհրաժեշտությանը:

Այսինքն՝ սպառնալիքից վախը, Արցախյան առաջին պատերազմի արդյունքում առաջացած զայրույթը և ամբողջ աշխարհում ամեն հայկականի հանդեպ ատելությունն ադրբեջանական սոցիալ-քաղքական դաշտում միասնաբար հանգեցրին սոցիալական բռնության, քանի որ այլատյացության նմանատիպ բաղադրիչներն ստեղծում են սոցիալական մեխանիզմներ, որոնք բարոյական կոորդինատային համակարգից բացառում են «այլոց» և «թշնամիներին»: Նմանատիպ գործընթաց էր տեղի ունենում նաև հայ բնակչության շրջանում. պատմական հիշողությունը և Օսմանյան կայսրությունում բնակության կուտակված պատմական փորձը Բաքվի, Սումգայիթի և Մարաղայի իրադարձությունների ֆոնին վկայում էին, որ ֆիզիկական գոյատևման միակ հնարավոր ձևը բռնությանը զինված դիմադրություն ցույց տալն է: Սրա հետևանքով 1991 թ.-ին Լեռնային Ղարաբաղը հանրաքվեով ինքնորոշվեց ԽՍՀՄ կազմում՝ առանձնանալով Ադրբեջանից: Ընդ որում՝ վերոնշյալ այլատյացության

Պատմական հիշողությունը և Օսմանյան կայսրությունում բնակության կուտակված պատմական փորձը Բաքվի, Սումգայիթի և Մարաղայի իրադարձությունների ֆոնին վկայում էին, որ ֆիզիկական գոյատևման միակ հնարավոր ձևը բռնությանը զինված դիմադրություն ցույց տալն է: Սրա հետևանքով 1991 թ.-ին Լեռնային Ղարաբաղը հանրաքվեով ինքնորոշվեց ԽՍՀՄ կազմում՝ առանձնանալով Ադրբեջանից:

բաղադրիչներն այդ մասշտաբներով բնորոշ չէին հայկական կողմին, քանի որ քաղաքական էլիտաները համարեցին, որ չկա դրա կառուցարկման անհրաժեշտությունը:

Արցախյան առաջին պատերազմից հետո այս համատեքստում հիմնական խնդիրն այն է, որ անհրաժեշտ կերպով արմատախիլ չէին արվել հակամարտության պատճառները: Ադրբեջանում հայատյացությունը, որը դարձավ հակամարտության խթանը, ոչ միայն չնվազեց, այլև դարձավ Բաքվի ներքաղաքական և արտաքին քաղաքական հռետորաբանության կարևոր բաղադրիչը: Մինչդեռ չի կարելի խոսել Հայաստանում պետական մակարդակով ադրբեջանատյացության կամ առհասարակ թյուրքատյացության մասին: Սրա վառ վկայությունն ադրբեջանցիների

Ադրբեջանում հայատյացությունը, որը դարձավ հակամարտության խթանը, ոչ միայն չնվազեց, այլև դարձավ Բաքվի ներքաղաքական և արտաքին քաղաքական հռետորաբանության կարևոր բաղադրիչը: Մինչդեռ չի կարելի խոսել Հայաստանում պետական մակարդակով ադրբեջանատյացության կամ առհասարակ թյուրքատյացության մասին:

համար ՀՀ և Արցախի բաց լինելն է: Էթնիկ ադրբեջանցիներն առանց պետականորեն հարուցված խոչընդոտների այցելում են թե՛ ՀՀ, թե՛ Արցախ, զբաղվում գործարարությամբ և այլն: Վառ օրինակ է Հայաստանում իրանական ադրբեջանցիների գործարար ակտիվությունը: Իսկ էթնիկ հայերի (նույնիսկ՝ երրորդ երկրի քաղաքացի) մուտքն Ադրբեջան չի թույլատրվում՝ սկսած Ի. Ալիևի կառավարման տարիներից: Ժամանելով Բաքու՝ նրանք անմիջապես բերման են ենթարկվում օդանավակայանում:

Նմանատիպ փորձն ի ցույց է դնում կոնստրուկտիվիստների կարևոր թեզը, որ ինստիտուցիոնալիզացված նորմերը և գաղափարները որոշում են առանձին սուբյեկտի նշանակությունն ու կարևորությունը և համապատասխան քաղաքական գործունեության մոդելները[130]: Այսպես օրինակ՝ պետական ծառայությունների համար հենց հայերի հետ շփման, հակազդման և համագործակցության վերաբերյալ հաստատված հրահանգների առկայությունն առանց ժամանման երկրի հետ կապի (քանի որ հայկական սփյուռքին հակազդելը ավանդապես կարևոր տեղ էր գրավում թուրքական և ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատանքում) վկայում է այնպիսի նորմերի գոյության մասին, որոնք սահմանում են անմիջական գործունեությունը: Միաժամանակ նման բովանդակությունը բացահայտում է ինքնության էությունը, քանի որ նույն կոնստրուկտիվիստների տեսանկյունից ինքնությունը կարելի է պահպանել և զարգացնել միայն պարբերականացված պրակտիկայի շնորհիվ: Այսինքն՝ նման պրակտիկայի բացակայությունը թուլացնում է ձևավորված ինքնությունը կամ փոփոխում է այն:

Այսպիսով՝ հայատյացությունն այդ թվում Թուրքիայի ազդեցությամբ Ադրբեջանում վերածվել է չընդհատվող պրակտիկայի: Այն դրսևորվում է

Հայատյացությունն այդ թվում Թուրքիայի ազդեցությամբ Ադրբեջանում վերածվել է չընդհատվող պրակտիկայի:

ամեն հայկականի մշտական բոյկոտով և բոլոր պետական ինստիտուտների ու հասարակական կազմակերպությունների մակարդակում այլազան

130 Boli John, Meyer John, Thomas George, Ontology and Rationalization in the Western Cultural Account', in G. Thomas et al. (eds), Institutional Structure: Constituting State, Society, and the Individual, 1989, London, էջ 12:

գործողությունների տեսքով շարունակական պրակտիկայով: Այս շարքում շատ կարևոր է հայերի ու հայկականի բացասական և հակամարդկային կերպարի ստեղծումը: Բանն այն է, որ «մենք-նրանք», «նրանք վատն են, մենք լավն ենք» բինար ինքնության ձևավորման տեսանկյունից շատ հեշտ է արդարացնել հետագա բոլոր քաղաքական քայլերը: Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ ակնհայտ է, որ հայատյացությունից հրաժարումը կհանգեցնի ժամանակակից ադրբեջանական ինքնության ճգնաժամի: Դա հնարավոր

Ակնհայտ է, որ հայատյացությունից հրաժարումը կհանգեցնի ժամանակակից ադրբեջանական ինքնության ճգնաժամի:

չենք համարում կարճաժամկետ հեռանկարում, քանզի սույն երևույթը ոչ միայն ինքնության մաս է, այլև արդեն իսկ պետականաշինության հիմնատարր:

Հենց այս պատճառով կարևոր է վստահության միջոցների ստեղծումը, որոնք թույլ կտային հիմք ստեղծել երկարաժամկետ կարգավորման համար, այլ ոչ թե «տարածքներ և կարգավիճակ» տրամաբանության շրջանակներում տեխնիկական լուծումը: Նմանատիպ բանաձևումը հաշվի չի առնում այն կարևոր փոփոխականը, որը մենք նկարագրեցինք վերևում: Առանց դրա նմանատիպ հավասարումն իրական լուծում չունի: Հենց այս պատճառով «փոխզիջումների» (այս բնութագրումը հատուկ է առնված չակերտների մեջ) շատ կողմնակիցներ տարակուսում են, թե ինչու վերջին պատերազմի արդյունքում երկար սպասված խաղաղությունը չհաստատվեց: Չէ՞ որ Ադրբեջանն ստացավ ավելին, քան ուզում էր՝ ոչ միայն նախկին ԼՂԻՄ հարակից շրջանները, այլև Հադրութը, Շուշին, Թալիշը, Մատաղիսը և այլն: Պատասխանը մասամբ կա հարցի մեջ: Ադրբեջանի նպատակը ո՛չ շրջաններն են, ո՛չ էլ Շուշին: Նպատակը հայկական քաղաքական գործոնի վերացումն է այն տարածքներից, որոնք Ադրբեջանը համարում է իր «հինավուրց պատմական հողերը», այսինքն՝ ամբողջ ՀՀ-ից և Արցախից: Հենց այսպիսի խոսույթն է տեղավորվում

Ադրբեջանի նպատակը ո՛չ շրջաններն են, ո՛չ էլ Շուշին: Նպատակը հայկական քաղաքական գործոնի վերացումն է այն տարածքներից, որոնք Ադրբեջանը համարում է իր «հինավուրց պատմական հողերը», այսինքն՝ ամբողջ ՀՀ-ից և Արցախից:

այն ծավալապաշտական պատումի մեջ, որը ԽՍՀՄ փլուզումից հետո վերջին տասնամյակներին վերարտադրում և Թուրքիայի օգնությամբ ամրապնդում է ադրբեջանական ղեկավարությունը:

Այս եզրակացության ապացույցը կարելի է գտնել՝ գալով հակառակ կողմից: Եթե հայ-ադրբեջանական հակամարտությունը գտնվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման տիրույթում, ապա ինչո՞ւ 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանի զինված ուժերը գրավեցին արդեն Հայաստանի Հանրապետության ընդունված տարածքի շուրջ 70 կմ²-ը՝ շարունակելով լարվածություն պահել ռազմաճակատի գծում, որի հետևանքով կան զոհեր և վիրավորներ: Ի՞նչ կապ ունի Հայաստանի Հանրապետության տարածքը Լեռնային Ղարաբաղի սահմանների և կարգավիճակի հետ: Երևանն այլևս Արցախին ռազմական և նյութատեխնիկական օգնություն չի ցուցաբերում, Հայաստանի բարձրագույն ղեկավարությունն այնտեղ չի այցելում: Ադրբեջանի բոլոր նմանատիպ պահանջները, որոնք, ըստ վերջինիս, պետք է համապատասխանեին կարգավորմանը, կատարված են կա՛մ ուժի գործադրմամբ, կա՛մ դե-ֆակտո Երևանի անձնատվության միջոցով: Մինչդեռ հարցականի տակ է դրվում արդեն Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը[131]: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ թշնամու՝ «պատմական ադրբեջանական հողերը, որոնց վրա գտնվում է Հայաստանը» խոսույթը, որը հանդիսանում է ինքնության դրսևորում, իրենց տեսանկյունից պետք է ամրապնդվի մշտական պրակտիկայով: Այսինքն՝ «օտարի» կերպարը, իսկ եթե ավելի ճշգրիտ ասենք՝ «թշնամու» կերպարը շարունակում է պահպանվել: Սա իր հերթին պահանջում է հստակ գործողություններ, որոնք դրսևորվում են օրինակ ՀՀ տարածքի օկուպացիայի միջոցով:

Տարածաշրջանում պետությունների միջև քաղաքական սահմանների հայտնվելը, ինչպես դա եղել է 20-րդ դարասկզբին և դարավերջին, բնավ հաստատուն երևույթ չէ: Դա ընդամենը տվյալ պահին ուժերի առկա հավասարակշռության արտացոլումն է հողի վրա: Իսկ առհասարակ ուժերի բալանսը մշտապես փոփոխվում է: Այս երևույթի ընկալումը հանգեցնում է այն մտքի անհեռանկարայնությանը, թե հակամարտության կարգավորումը հավերժական խաղաղության ու կայունության գրավա-

Տարածաշրջանում պետությունների միջև քաղաքական սահմանների հայտնվելը, ինչպես դա եղել է 20-րդ դարասկզբին և դարավերջին, բնավ հաստատուն երևույթ չէ: Դա ընդամենը տվյալ պահին ուժերի առկա հավասարակշռության արտացոլումն է հողի վրա: Իսկ առհասարակ ուժերի բալանսը մշտապես փոփոխվում է: Այս երևույթի ընկալումը հանգեցնում է այն մտքի անհեռանկարայնությանը, թե հակամարտության կարգավորումը հավերժական խաղաղության ու կայունության գրավականն է:

131 Ադրբեջանում հայկական տեղանունները գրելու են թյուրքական ձևով, «Հայկական ալիք», 20.07.2022 թ., https://hayaliq.com/azchangesarmtoponyms/ (հղվել է 06.08.2022 թ.):

կանն է: Նույնն է նաև այսօր. սահմանները, անկախ նրանից ճանաչված են, թե ոչ, կառուցարկվում են ամեն օր: Այս կոնստրուկտի կայունությունը կախված է այն բանից, թե այդ սահմաններին հղվող կողմը որքան ուժեղ է և ինչ չափով է ունակ պահպանելու ուժային հավասարակշռությունը, որն էլ իր հերթին ամրացնում է այդ կոնստրուկտը:

Հայկական կողմի միակողմանի զիջումների և խաղաղության հաստատման միջև ժամանակին կեղծ առնչակցություն կառուցածները ներկայումս քաղաքագիտական ինժեներիայի միջոցով փորձում են «Ադրբեջանին զիջումը կհանգեցնի տարածաշրջանում խաղաղության» բանաձևի նախապես ընդունված արդյունքին հարմարեցնել նոր առաջ եկած փոփոխականներ: Ակտիվորեն թմբկահարվում է «խնդիրը Ռուսաստանն է» փոփոխականը, իսկ ավելի ճիշտ՝ «խնդիրներն ստեղծում է Ռուսաստանը»: Սա էլ իր հերթին հանգեցրել է «ռուս-թուրքական ծուղակի» մասին խոսույթի և նմանատիպ զրպարտությունների առաջացմանը, որոնք կոչված են բացատրելու, թե ինչու «դեբիտը չհամընկավ կրեդիտի հետ», իսկ ավելի ճիշտ՝ «ինչու Ադրբեջանին ամեն ինչ հանձնելուց երկու տարի անց խաղաղություն չի հաստատվում»: Նման մոտեցումը խոսում է այն մասին, որ «խաղաղության» մասին խոսույթի ստեղծողների առջև խնդիր է դրված արդարացնող վճիռ կայացնել Ադրբեջանի օգտին և մեղադրական վճիռ՝ Ռուսաստանի դեմ: Սա կապված է այն հանգամանքի հետ, որ նրանց կոորդինատային համակարգում «Ադրբեջանը որպես սկզբունք ցանկացել և ցանկանում է խաղաղություն»: Սակայն հայտնվում են ուժեր, որոնք դրան խանգարում են: Սա ոչ այլ ինչ է, քան աջակցություն ադրբեջանական խոսույթին՝ ի վնաս հայկական շահի:

Այս խոսույթի ամրապնդման համար պատից կախվեց «չեխովյան հրացանը», որը վաղ թե ուշ կրակելու էր՝ ***«թշնամին կուժեղանա և ամեն ինչ կվերցնի, ուստի՝ ավելի լավ է ամեն ինչ հիմա հանձնել»***: Այս դեպքում հավասարման արդյունքը որոշված էր, դրա համար պետք էր հարմարեցնել փոփոխականները: Անշուշտ, միտումները չի կարելի արհամարհել. Ադրբեջանի տնտեսական աճի ներուժն ավելի մեծ էր, քան Հայաստանինը: Նշանակո՞ւմ էր արդյոք սա, որ միայն նման հեռանկարի հնարավորության առջև պետք է զիջել՝ փոխարենը ստանալով ոչինչ: Բնականաբար, ոչ: Բանակցային գործընթացի տեսության և պրակտիկայի մեջ գոյություն ունի «այլընտրանք» հասկացությունը: Այսինքն՝ դիրքերի թուլացման հեռանկարի կամ արդեն առկա թույլ դիրքերի դեպքում անհրաժեշտ է փնտրել և ամրապնդել այլընտրանքային ճանապարհներ, որոնք նախնական փուլում կոչված են ամրապնդել բանակցային դիրքերը, իսկ հետագայում՝ որոշիչ ազդեցություն ունենալ բանակցային գործընթացի վրա: Ռազմական հավասարակշռությունն ապահովվում էր նաև այն հանգամանքով, որ Հայաստանին տրամադրվեցին «Իսկանդեր» օպերատիվ-մարտավարական

հրթիռային համակարգեր (հիշեցնենք, որ այն առկա է միայն Ռուսաստանի և Հայաստանի զինանոցում), 50000 տոննայից ավելի զենք-զինամթերքի ռուսական ռազմատեխնիկական աջակցություն, 100 միլիոնից ավելի փամփուշտ: Հարկ է նշել նաև անհատույց կերպով «Տոչկա-ՈՒ» հրթիռային համակարգերի տրամադրումը, «Ս-300» ՀՕՊ միջոցների վերանորոգումը և այլն: Դիվանագիտական ճնշման համար գործուն այլընտրանք էր Սփյուռքի և վերջինիս հետ կապերի ինստիտուցիոնալիզացիան, որը նպաստում էր 907-րդ բանաձևի[132] երկարացմանը՝ արգելակելով ԱՄՆ-ից Ադրբեջանին զենքի մատակարարումը: «Այլընտրանք» ասելով՝ նկատի ունենք ոչ միայն հնարավոր քայլերը, որոնք ունակ է անել կողմերից մեկը, այլև այն միակ տարբերակը, որի առջև կարող է հայտնվել հակառակ կողմը: Այսինքն՝ Հայաստանի առաջին իշխանությունները ելնում էին ադրբեջանական այլընտրանքից՝ ***«եթե չզիջեք այսօր, ապա վաղը մենք ավելի ուժեղ կլինենք, իսկ վաղը չէ մյուս օրը մենք ամեն ինչ ուժով կվերցնենք»***, և հասարակության վզին փաթաթում էին հենց այդ մոտեցումը:

Այսինքն՝ որպես միակողմանի զիջումների այլընտրանք, որոնք «փոխզիջում» էին հորջորջվում, Լ. Տեր-Պետրոսյանի և իր համախոհների կողմից ներկայացվում էր նոր պատերազմն ավելի ուժեղացած Ադրբեջանի դեմ: Եթե հայկական կողմը սեփական այլընտրանքները կառուցելու փոխարեն զբաղված է նրանով, որ համոզում է իր հասարակությանը այն հեռանկարի անխուսափելիության մեջ, որը բխում է ադրբեջանական այլընտրանքից, ապա դա նշանակում է, որ նպատակ չի դրվել բանակցությունների համար ստեղծելու սեփական այլընտրանք: Նման իրավիճակ էր մինչև 1998 թ. և սկսած 2018 թ.-ից:

«Եթե հայկական կողմը սեփական այլընտրանքները կառուցելու փոխարեն զբաղված է նրանով, որ համոզում է իր հասարակությանը այն հեռանկարի անխուսափելիության մեջ, որը բխում է ադրբեջանական այլընտրանքից, ապա դա նշանակում է, որ նպատակ չի դրվել բանակցությունների համար ստեղծելու սեփական այլընտրանք:

132 107th Congress Public Law 115, https://www.govinfo.gov/content/pkg/PLAW-107publ115/html/PLAW-107publ115.htm (հղվել է 06.08.2022 թ.):

Ռեալիզմ և լիբերալիզմ

Կարևոր է դիտարկել հայ-ադրբեջանական հակամարտությունը և դրա կարգավորումը նաև միջազգային հարաբերությունների երկու դասական տեսությունների տեսանկյունից: Վերևում բերվեցին կոնստրուկտիվիզմի տեսանկյունից վերլուծության ելակետային դրույթները, ինչի միջոցով ապացուցեցինք, որ հակամարտությունը չի գտնվում տեխնիկական կարգավորման տիրույթում: Այն մասամբ դիտարկեցինք նաև կոպենհագենյան դպրոցի և անվտանգայնության տեսության շրջանակներում: Եվ նման դիտանկյուններից հիմնական եզրակացությունը մեկն է՝ Հայաստանի համար ՀՀ-ն, հայաբնակ Արցախը և հայկական Սփյուռքը որպես մեկ միասնականություն հանդիսացել են անվտանգայնության օբյեկտ: Սրանից բխում է, որ այս բոլոր օբյեկտներին բնորոշ բաղադրիչներն իրենց հերթին Ադրբեջանի կողմից դիտարկվել են որպես սպառնալիք: Այս համատեքստում խոսել ադրբեջանական կողմից «փոխզիջման» կամ հայկական կողմից «ադրբեջանական ժողովրդին բավարարող» լուծումների մասին, անհեռանկար էր:

Նման եզրակացության կարելի է գալ, եթե կիրառվի ռեալիզմի մոտեցումը, որտեղ քաղաքականության չափման գլխավոր միավորը ուժն է, իսկ խաղաղություն և կայունություն հնարավոր են ուժերի հավասարակշռությամբ: Ինչպես արդարացիորեն նկատում են միջազգային անվտանգության կառուցվածքին նվիրված իրենց աշխատանքում Բերի Բուրանը և Օլի Վեվերը, 21-րդ դարասկզբի դրությամբ մեր տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունն այնպիսին էր, որ Թուրքիան և ԱՄՆ-ը համատեղ աջակցում էին Ադրբեջանին և Վրաստանին, միևնույն ժամանակ Ռուսաստանը և Իրանը աջակցում էին Հայաստանին[133]: Ընդ որում՝ բուն տարածաշրջանում արձանագրված էր ռազմական հավասարություն, որը հետագայում խախտվեց ոչ այնքան ռուսական մատակարարումներով, որոնք ազդեցին հավասարակշռության քանակական չափման վրա, որքան Թուրքիայի և Իսրայելի ակտիվացմամբ, որոնք Ադրբեջանի ՁՈՒ հատուկ ստորաբաժանումների պատրաստությամբ և բարձրճշգրտության զենքերի մատակարարումով նպաստեցին հավասարակշռության փոփոխությանն արդեն որակական մակարդակում: Այդուամենայնիվ, ինքնին ռազմատեխնիկական գերազանցությունը բացարձակ առումով չէր կարող ազդել հակամարտային ամբողջ հավասարակշռության վրա, քանի դեռ այն հայկական կողմից չեզոքացվում էր քաղաքական, դիվանագիտական և աշխարհագրական գործոններով: Ասվածի պերճախոս վկայությունն է Արցախյան առաջին պատերազմը, որի ընթացքում՝ ռազմատեխնիկական

133 Buzan Barry, Wæver Ole, Regions and Powers, The Structure of International Security, Cambridge University Press, 2004, էջ 423:

հավասարակշռության առավելագույն տարբերության պահին, այդ ցուցանիշը եղել է 1:9՝ ի վնաս մեզ, սակայն պատերազմն ավարտվել է մեր հաղթանակով:

Արցախյան առաջին պատերազմը, որի ընթացքում՝ ռազմատեխնիկական հավասարակշռության առավելագույն տարբերության պահին, այդ ցուցանիշը եղել է 1:9՝ ի վնաս մեզ, սակայն պատերազմն ավարտվել է մեր հաղթանակով:

Ռազմատեխնիկական գերազանցության հասնելն այս իմաստով հանգեցրեց հավասարակշռության խախտման և հակամարտության թեժացման:

Սակայն այս դեպքում էլ հավասարակշռությունը կարող էր պահպանվել, եթե կշեռքի վրա դրվեր ավելի ծանր նժար՝ ի դեմս առկա և հնարավոր դաշնակիցների: Այն դեպքում, երբ Ադրբեջանն ի դեմս Իսրայելի ձեռք բերեց նոր ռազմավարական գործընկեր, ամրապնդեց ռազմավարական դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունները և բարձրացրեց Ռուսաստանի հետ հարաբերությունները մինչև ռազմավարական գործընկերության մակարդակի, Հայաստանը երկար ժամանակ պահպանում էր հավասարակշռությունը՝ շնորհիվ Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների: Պետք է նկատել, որ 2008 թ.-ին Թուրքիայի հետ երկխոսության կարգավորման փորձը կոչված էր հավասարակշռելու կողմերի հետաքրքրությունները՝ թուլացնելով ադրբեջանական դիրքերը: Սակայն դաշինքների իմաստով լիարժեք անհավասարակշռություն սկսեց ծագել 2018 թ.-ին, երբ Երևանը Բաքվի՝ դեպի Մոսկվա ակտիվ աշխատանքի ֆոնին սկսեց թուլացնել Մոսկվայի հետ դաշնակցային հարաբերությունները՝ ձեռքի տակ չունենալով այլընտրանքներ: Այս իմաստով վերջին պատերազմում Ռուսաստանի գրեթե չեզոքությունը կարելի է համարել Երևանի դիվանագիտական տապալումը:

Դաշինքների իմաստով լիարժեք անհավասարակշռություն սկսեց ծագել 2018 թ.-ին, երբ Երևանը Բաքվի՝ դեպի Մոսկվա ակտիվ աշխատանքի ֆոնին սկսեց թուլացնել Մոսկվայի հետ դաշնակցային հարաբերությունները՝ ձեռքի տակ չունենալով այլընտրանքներ: Այս իմաստով վերջին պատերազմում Ռուսաստանի գրեթե չեզոքությունը կարելի է համարել Երևանի դիվանագիտական տապալումը:

Ուժային անհավասարակշռության հեռանկարը, որով վախեցնում էին Հայաստանում ադրբեջանական շահերի դե-ֆակտո պաշտպանները, լուծվում է երկու ճանապարհով: Եթե պետության առջև կանգնած է ուժային հավասարակշռությունը պահելու և հնարավորության դեպքում այն իր օգտին փոխելու խնդիր, անկախ քաղաքական կողմնորոշումից (քանի որ քաղաքական ռեալիզմի տեսանկյունից անվտանգության քաղաքականության մշակման ժամանակ սա մեծ մասամբ երկրորդական նշանակություն ունի), անհրաժեշտ է ամրապնդել ուժային ներուժը և դաշինքների ցանցը: Իսկ եթե խնդիր է դրված թույլ չտալ ուժային հավասարակշռության փոփոխություն, ապա անվտանգության տվյալ երկընտրանքը պետք է լուծել կանխարգելիչ ձևով ինչպես թշնամու ուժային ներուժի, այնպես էլ հետագա հարձակման համար քաղաքական կամքի նախօրոք թուլացման ճանապարհով: Այս համաշարում ռազմատեխնիկական գերակայության հեռանկարի պահին ցանկացած սադրանք պետք է օգտագործվի որպես պատերազմի առիթ (casus belli)՝ թշնամական ապագա պոտենցիալի վրա հարված հասցնելու համար: Այդ պատճառով էլ հայկական կողմի օգտին ուժային հավասարակշռության պահպանումը կպահպաներ խաղաղությունը, քանի որ Երևանը, ի տարբերություն Բաքվի, ռևանշի մտադրություն չուներ: Քաղաքական նեոռեալիզմի տեսանկյունից անվտանգության երկընտրանքը լուծելու համար հենց այս մոտեցումն է արդարացված, այլ ոչ թե զիջումները, որոնք կհանգեցնեն թշնամու դիրքերի ուժեղացման, ինչն էլ թույլ կտա վերջինիս ավելի արագ խախտել հավասարակշռությունը: 2015 թ. օգոստոսին ՊԲ կողմից Կուրոպատկինոյի ուղղությամբ թշնամու երկրորդ էշելոնին հարվածելը մի օրինակն է հայկական կողմի նման կանխարգելիչ ռազմական հարվածների, որոնք ժամանակին չէին թմբկահարվում՝ ելնելով պետական կոհերենտ և նպատակամիտված քաղաքականությունից:

Պարադոքսալ է, սակայն այսպես կոչված «կառուցողական» դիրքորոշումը, որը «փոխզիջման» անվան տակ հրամցնում է միակողմանի զիջումների գաղափարը, բարդ է բացատրվում նույնիսկ քաղաքական լիբերալիզմի տեսանկյունից, որը միջազգային հարաբերությունների բովանդակության կենտրոնում դնում է ոչ թե ուժը, այլ համագործակցությունը: Սրա պատճառն Ադրբեջանի ներքաղաքական կառուցվածքն է: Ավտորիտարիզմի ձևավորման ուժեղ միտումներն ի սկզբանե թույլ չեն տալիս պայմանավորվել նմանատիպ վարչակարգերի հետ, քանի որ ժողովրդավարությունները դիտարկում են դրանք որպես սպառնալիք թե՛ իրենց համար, թե՛ միջազգային անվտանգության: Առարկումներն առ այն, որ Հայաստանում լիբերալ ժողովրդավարություն չի եղել, միայն մասամբ են ճշմարիտ: Տվյալ համատեքստում հույժ կարևոր է միտման արձանագրումը: Այն ժամանակ, երբ Ադրբեջանում ընթանում

էր անձի պաշտամունքի ձևավորում, որը քաղաքական վարչակարգի հիմքն էր, Հայաստանում տեղի էր ունենում հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացում: Հայաստանում հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ազատ գործունեությունը ընթանում էր Ադրբեջանում համապատասխան կառույցների փակման, ակտիվիստների հետապնդման և ընդդիմադիր գործիչների սպանությունների ֆոնին: Հայաստանում քաղաքական ընտրության ազատությանը զուգահեռ Ադրբեջանում ձևավորվում էր քաղաքական վերնախավ՝ մեկ ընտանիքի սահմաններում, որտեղ փոխնախագահը նախագահի կինն է: 20-րդ դարի վերջում նման միտումների փոփոխության նախադրյալներ չկային և չկան նաև այսօր: Ավտորիտար, ոչ ժողովրդավարական Ադրբեջանն ըստ սահմանման ունակ չէ խաղաղության հասնել, ինչպես այդ պատգամում են «ժողովրդավարական խաղաղության» տեսական ըմբռնումները[134]:

134 Այս գաղափարը՝ մշակված Իմանուիլ Կանտի կողմից, այն մասին է, որ լիբերալ ժողովրդավարությունները, ներքին կյանքի բարքերը տարածելով նաև արտաքին հարաբերությունների վրա, միմյանց դեմ չեն պատերազմում: Այս տեսության ժամանակակից ներկայացուցիչների հիմնական փաստարկները հանգում են նրան, որ ժողովրդավարությունների առաջնորդները հաշվետու են իրենց ընտրողների առաջ հնարավոր պատերազմական կորուստների համար, և նաև ժողովրդավարական հասարակության անդամները հարևան համակարգի ներկայացուցիչներին չեն դիտում՝ որպես թշնամի (տե՛ս Էլբակյան Էդգար, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում ՀՀ արտաքին քաղաքականության տեսական բացատրությունների շուրջ, էջ 5, http://boon.am/wp-content/uploads/2019/04/Ղարաբաղյան-հակամարտության-բազմաձայնությունը.-ԼՂ-հակամարտության-հարցում-ՀՀ-արտաքին-քաղաքականության-տեսական-բացատրությունների-շուրջ.pdf (հղվել է 05.08.2022 թ.)):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացը 29 տարիների ընթացքում (1991-2020 թթ.) անցել է ուրույն բնազարգացում, ազդվել է ինչպես առարկայական պատճառներից (երկրների տնտեսական, ժողովրդագրական վիճակի փոփոխություն, դաշինքների ամրություն, տարածաշրջանային վերադասավորումներ), այնպես էլ՝ ենթակայական (ՀՀ իշխող էլիտաներ): Բանակցային առաջարկներն արտացոլել են հայկական և ադրբեջանական կողմերի միջև ուժային հավասարակշռությունը, այդ թվում՝ սեփական շահերը պաշտպանելու դիվանագիտական նախանձախնդրությունը: Բանակցային գործընթացն ու միջնորդների առաջարկները կրել են դինամիկ, ոչ թե ստատիկ բնույթ: Սկսած Լեռնային Ղարաբաղի կարգավիճակից, որ առաջին տարիներին կա՛մ թողնվում էր Ադրբեջանի կազմում ինքնավարության մակարդակով, կա՛մ անորոշ, իսկ 2018 թ. սկզբի դրությամբ փաստացի կանխորոշված էր Ադրբեջանի կազմից դուրս, վերջացրած տարածքների պարագայով (1990-ականներին Լաչինի ու Շուշիի «դեօկուպացիայի» միջազգային պահանջից մինչև նախկին ԱդրԽՍՀ Լաչինի ու Քյալբաջարի շրջանների հայապատկանություն)՝ բանակցային գործընթացը փոխվում էր և փոխվում էր հօգուտ հայկական կողմի:

2. Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացի վերաբերյալ որևէ խոսույթ, որ անտեսում է վերջինիս դինամիկ բնույթը և կենտրոնանում է ստատիկայի վրա, հեռու է անաչառությունից և գիտականությունից, իր վրա կրում է քաղաքական կողմնորոշման անթաքույց կնիք: Այդպիսի մոտեցման ենթատեսակ է Լ. Տեր-Պետրոսյանի և իր գաղափարակիցների կողմից առաջմղված մոտեցումը, որն առանց բավարար փաստարկման բանակցային առաջարկների լավագույն տարբերակ է համարում 1997 թ. առաջարկները, որոնցով, սակայն, Արցախը չէր անջատվում Ադրբեջանից:

3. Անաչառ ու գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ Լ. Տեր-Պետրոսյանի հեռացումից անմիջապես հետո թե՛ կարգավիճակի, թե՛ տարածքի առումով ստացվել են ավելի հայանպաստ առաջարկներ, որոնք այս կամ այն կերպ մերժվել են Ադրբեջանի կողմից: Հետևաբար՝ սխալ է նաև այն պնդումը, թե հայկական կողմը 1998-2018 թթ.-ին բանակցություններում զուտ ժամանակ էր ձգում և չէր ձգտում կարգավորման: Սա ադրբեջանական քարոզչաթեզ է, որ ժամանակի ընթացքում հորինվել է սեփական ապակառուցողականությունն արդարացնելու համար:

4. Երկրորդ և երրորդ նախագահների օրոք արձանագրված բանակցային շարժընթացը հերքում է ևս մեկ տարածված կարծրատիպ,

թե իբր Հայաստանը ԼՂ հարցով չունի դաշնակիցներ և միայնակ է մնալու միջազգային հանրության դեմ: Քի Վեսթից սկսած՝ մինչև Կազան և ալիևյան թևավոր խոսք դարձած «փակ դռների հետևում», Ադրբեջանն էր, որ մենակ էր մնում միջազգային հանրության դեմ:

5. 1998-2018 թթ. բանակցային հաջողությունները, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված էին նաև անձանց հանգամանքով և դրանից բխող արտաքին քաղաքականության կոհերենտությամբ: Այսպես՝ Լ. Տեր-Պետրոսյանի դեպքում բացասական դեր էր խաղում արցախյան հարցի և դեմոկրատիայի ալիքի վրա իշխանության գալուց անմիջապես հետո և տեղ-տեղ՝ դրանց ընթացքում, Արցախն Ադրբեջանի ներքին հարց համարելն ու բացահայտ ընտրակեղծարարությունը (1996 թ.), որոնք օտարների, այդ թվում՝ թշնամու առաջ մատնում էին, որ գործ ունեն քաղաքական դերակատարի հետ, որը չունի սկզբունքային կարմիր գծեր խնդրո առարկա հարցում: Ն. Փաշինյանի դեպքում նույնն էր պարագան՝ պարզապես հակառակ հերթականությամբ. դժվար չէր կռահել, որ ողջ գործունեության ընթացքում ազատագրված տարածքների, բանակի ու Արցախի դեմ պարբերաբար ոչ կառուցողական (որոշ դեպքերում՝ ատելության խոսք պարունակող ելույթներով) հանդես եկող գործիչը զուտ որպես ներքաղաքական շահաբաժին հավաքելու միջոց է դիտում վերոնշյալ հարցերը, իսկ իրականում պատրաստ չէ դրանց համար դիվանագիտական ու ռազմական կռիվ տալու, ինչը դրսևորվում է նաև 2020 թ. հետպատերազմական իրավիճակում: Հակառակ այս երկուսի՝ Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի քաղաքական պայքարը՝ սկսած 1988 թ.-ից, Արցախն Ադրբեջանի լծից ազատագրելու համար էր, այդ իսկ պատճառով՝ նրանց դեպքում ամեն ինչ ավելի կոհերենտ էր ստացվում՝ ստիպելով միջազգային հանրությանը հաշվի նստելու Հայաստանի հետ:

6. Լ. Տեր-Պետրոսյանի բանակցային խոսույթը հայկական քաղաքական մտածելակերպում երկարաժամկետ առումով ապակառուցողական մի մոտեցում արմատավորեց, որ տեղին է բնորոշել «ՄկՆամարայի սխալանքով»: Դա հաշվարկների կառուցումն է՝ հիմնված միայն քանակական ցուցանիշների վրա: Նման հաշվարկով ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ռոբերտ ՄկՆամարան (1961-1968 թթ.) կանխատեսում էր իր երկրի հաղթանակը Վիետնամի պատերազմում, ինչը չեղավ: Հետևաբար՝ այն, ինչ վերոնշյալ մոտեցման կողմնակիցները մատուցում են որպես «պրագմատիկ հաշվարկ և սթափ կանխատեսում», իրականում սովորական սխալ էր:

7. Թե՛ Ռ. Քոչարյանը, թե՛ Ս. Սարգսյանն պատրաստ են եղել որոշակի տարածքային զիջումների դիմաց գնալ հարցի իրենց պատկերացրած կարգավորմանը: Սա ակնհայտ էր հիմնախնդրում ներգրավված

յուրաքանչյուրի համար: Այլկերպ լինելու դեպքում կլիներ միջնորդներից գեթ մեկ հասցեական թիրախավորում, որ Հայաստանը բանակցությունների իմիտացիա է անում: Այդպիսի թիրախավորում հնչել է միայն Հայաստանի թշնամիների կողմից: Փաստացի այդպիսի թիրախավորումները կոչված էին թուլացնելու Հայաստանի բանակցային դիրքը թե՛ բուն միջազգային հարթակներում, թե՛ ներհայաստանյան համաշարում:

8. 2018 թ.-ից հետո նոր վարչախումբը հետևողականորեն և միտումնավոր կերպով ոչնչացրեց նախկին ամբողջ բանակցային ժառանգությունը: Սա հետևանք էր ինչպես Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ նոր իշխանավորների ունեցած կարծրատիպային վերոնշյալ դիրքորոշման, այնպես էլ Արցախի հարցի ինստրումենտալիզացիայի միջոցով լեգիտիմություն և շահաբաժին հավաքելու ձգտման: Դրա արդյունքում 1998 թ.-ից հետո առաջին անգամ միջնորդների կողմից որպես ապակառուցողական կողմ որակվեց Հայաստանը:

9. 1998-2018 թթ. Ադրբեջանի և նրա քաղաքական կնքահայր Թուրքիայի՝ Հայաստանի հանդեպ ագրեսիայի չափն ու դրսևորումները պայմանավորված էին ոչ թե այդ երկրների բարի կամեցողությամբ, այլ զսպվում էին հայկական կողմի արտաքին և պետականաշինական կոհերենտ քաղաքականության շնորհիվ: Ս. Սարգսյանի օրոք նույնիսկ երկու թյուրքական երկրների միջև սեպ խրելու փորձ կատարվեց (ի դեմս «ֆուտբոլային դիվանագիտության»):

10. Ռ. Քոչարյանի և մանավանդ Ս. Սարգսյանի իշխանության տարիները նվիրված էին հայկական կողմի բանակցային այլընտրանքն ուժեղացնելուն և տարածքային փոխզիջումների դիմաց ստանալիքը մեծացնելուն: Ս. Սարգսյանի օրոք 7 շրջանների զատումը 5+2-ի կարևորագույն նախադեպ էր, որով միջազգային սեղանին արձանագրվում էին հայկական կողմի անվտանգային, հաղորդակցային և տարածքային մտահոգությունները:

Աչքի առաջ ունենալով այսպիսի շարժընթացը՝ կարող ենք պնդել, որ բանակցային ձևաչափի պահպանման, Հայաստանի տնտեսության ու բանակի շարունակական զարգացման և, անշուշտ, Ադրբեջանի ապակառուցողականության շարունակման դեպքում ապագայում այդ մոդելը կարող էր թույլ տալ է՛լ ավելի նվազեցնել առաջին փուլում հանձնվող տարածքների թիվը՝ աստիճանաբար մեծացնելով ենթադրյալ փոխզիջման պարագայում հայկական կողմի տարածքային ամրագրումների ծավալը:

Հեղինակների մասին

Գեղամյան Վարուժան, *թյուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու*

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս: Հեղինակ է 3 կոլեկտիվ մենագրությունների և 10-ից ավելի գիտական հոդվածների: 2017-2021 թթ. որպես Թուրքիայի և Մերձավոր Արևելքի հարցերով խորհրդական աշխատել է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

Էլբակյան Էդգար, *քաղաքագետ*

Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, նույն համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի դասախոս: Հեղինակ է 2 գրքի, 1 կոլեկտիվ մենագրության և 10-ից ավելի գիտական հոդվածների: 2015-2021 թթ., որպես Արցախյան հիմնահարցի և տարածաշրջանի հարցերով փորձագետ, աշխատել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական մարմիններում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

Իգիթյան Կարեն, *կովկասագետ*

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի դասախոս: Հեղինակ է հայկական իրականության մեջ Արցախյան առաջին պատերազմի առաջին ամփոփ տարեգրության (ռուսաց լեզվով): 2010-2014 թթ., որպես Կովկասի և Ադրբեջանի հարցերով փորձագետ, աշխատել է ՀՀ նախագահի աշխատակազմին կից «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ում: Աշխատանքային գործունեության ընթացքում հրապարակել է տասնյակ վերլուծական հոդվածներ և ամփոփագրեր:

Մելքոնյան Սերգեյ, *արևելագետ, պատմական գիտությունների թեկնածու*

Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի դասախոս: Հեղինակ է 1 կոլեկտիվ մենագրության և 10-ից ավելի գիտական հոդվածների: 2020-2021 թթ. որպես խորհրդական աշխատել է Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

«Հայկական նախագիծ» գիտակրթական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2020 թ. նոյեմբերին մի խումբ գիտնականների և փորձագետների կողմից:

«Հայկական նախագիծ» անվան հիմքում ընկած է այն խորհուրդը, որ պատմական Հայաստանի տարածքում հայկական պետությունը՝ որպես հայերիս ինքնիշխան քաղաքական կազմավորում, մեր ազգի ամենամեծ նախագիծն է, որի շարունակական ամրացմանն ու զարգացմանն է ուղղված ՀԿ-ի գործունեությունը:

«Հայկական նախագիծն» իր գործունեությունն իրականացնում է չորս հիմնական ուղղություններով՝ գիտահետազոտական, կրթալուսավորչական, տեղեկատվական և հանրային դիվանագիտության: Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերից են **«Հայկական համալսարանը»**, որը միջգիտակարգային դասընթաց է Հայաստանի և տարածաշրջանի առանցքային քաղաքական և սոցիալ-մշակութային զարգացումների վերաբերյալ:

Հայաստանյան և սփյուռքյան հանրության քաղաքական և սոցիալական տեղեկացվածության աստիճանի բարձրացման նպատակով «Հայկական նախագիծը» 2022 թ. հիմնադրել է **«Հայկական ալիք»** (hayaliq.com) էլեկտրոնային պարբերականը, որում մի քանի լեզվով տեղեկատվական և վերլուծական անդրադարձ է կատարվում հայկական շահերի տեսանկյունից կարևորություն ունեցող հարցերին:

«Հայկական նախագիծը» 2022 թ. մեկնարկել է **«Հայկական ուսումնասիրություններ»** հետազոտական աշխատանքների շարքը: Շարքում հրատարակված զեկույցներն ու գրքերը նվիրված են Հայաստանի առավել արդիական հիմնախնդիրների քննությանը:

Կազմակերպության գործունեությանը կարելի է ծանոթանալ՝ այցելելով ***www.armenianproject.com*** կայքը:

«Հայկական ուսումնասիրություններ» շարք:
«Հայկական նախագիծ» գիտակրթական հասարակական կազմակերպություն

armenianproject .am